



**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ**

**ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՏԱՍՆՅՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ 06(426) «22» մարտի 2021թ.**

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

	<b>ԵՐԿՐՈՐԴ ԲԱԺԻՆ</b>	
	<b>ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ</b>	
160	«Արցախի Հանրապետության 2021-2023 թվականների պետական վիճակագրական աշխատանքների եռամյա ծրագիրը հաստատելու մասին» ԱՀ ՀՕ-28-Ն օրենքը.....	.
	<b>ՉՈՐՐՈՐԴ ԲԱԺԻՆ</b>	
	<b>ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՀՐԱՄԱՆԱԳՐԵՐԸ</b>	
161	«Արցախի Հանրապետության Նախագահի 2020 թվականի օգոստոսի 17-ի ՆՀ-130-Ն հրամանագրում փոփոխություն կատարելու մասին» ԱՀ Նախագահի ՆՀ-1496-Ն հրամանագիրը...	.
162	«Արցախի Հանրապետության Նախագահի աշխատակազմի առանձնացված ստորաբաժանում ստեղծելու մասին» ԱՀ Նախագահի ՆՀ-1531-Ն հրամանագիրը.....	.
163	«Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-107-Ն հրամանագրում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» ԱՀ Նախագահի ՆՀ-1538-Ն հրամանագիրը.....	.
	<b>ՅՈՒԹԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ</b>	
	<b>ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ</b>	
164	«2020 թվականի սեպտեմբերի 27-ին Արցախի Հանրապետության դեմ սանձազերծված պատերազմական գործողությունների հետևանքով դժվար կացության մեջ հայտնված ֆիզիկական և իրավաբանական անձանց վարկային պարտավորությունների կատարմանն ուղղված պետական ֆինանսական աջակցության ծրագիրը հաստատելու մասին» ԱՀ կառավարության N 222-Ն որոշումը.....	.
165	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԱՀ կառավարության N 229-Ն որոշումը.....	..
166	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2015 թվականի մայիսի 26-ի N 306-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 232-Ն որոշումը.....	..
167	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի հունիսի 19-ի N 385-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 240-Ն որոշումը.....	...
	<b>ՏԱՍՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ</b>	

	<p align="center"><b>ԱՐՅԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ, ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՅԼ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՀՐԱՄԱՆՆԵՐԸ</b></p>	
168	<p>«ՐԱԴԱՍՅԱՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրված լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու մասին» ԱՀ էկոնոմիկայի և գյուղատնտեսության նախարարի N 59 հրամանը.....</p>	.
169	<p>«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության պետի 2014 թվականի հունվարի 22-ի N 3-Ն հրամանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ԱՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի N 45-Ն հրամանը.....</p>	.
170	<p>«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության պետի 2014 թվականի փետրվարի 17-ի N 5-Ն հրամանում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի N 46-Ն հրամանը.....</p>	.
171	<p>«Անհատ ձեռնարկատիրոջ կողմից արտոնությունից հրաժարվելու վերաբերյալ հայտարարության ձևը հաստատելու մասին» ԱՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի N 47-Ն հրամանը.....</p>	.
172	<p>«Եկամտային հարկի և սոցիալական վճարի անձնավորված հաշվառման տեղեկատվական բազայում բացված՝ ֆիզիկական անձի անհատական հաշվի քաղվածքը դիմումի հիման վրա փաստաթղթային կամ էլեկտրոնային տեսքով տվյալների սուբյեկտին տրամադրելու կարգը սահմանելու մասին» ԱՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի N 48-Ն հրամանը.....</p>	.
173	<p>«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության պետի 2013 թվականի մարտի 05-ի N 4-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» ԱՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի N 49-Ն հրամանը.....</p>	.
174	<p>«Արցախի Հանրապետությունում մարդատար-տաքսի ավտոմոբիլներով միջպետական և ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության լիցենզիայի և լիցենզիայի ներդիրների գործողությունները դադարեցնելու մասին» ԱՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի N 43 հրամանը.....</p>	.
	<p align="center"><b>ԱՐՅԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՂԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՎՃՌԱԲԵԿ ԲՈՂՈՔԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԿԱՅԱՑՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ</b></p>	
175	<p>ԱՀ վերաքննիչ դատարանի քաղաքացիական գործ ՇԻԴ/4260/02/19 որոշումը .....</p>	.

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ**

Ընդունված է 2021 թվականի  
մարտի 1-ին

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2021-2023 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ  
ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԵՌԱՄՅԱ ԾՐԱԳԻՐԸ  
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** Հաստատել Արցախի Հանրապետության 2021-2023 թվականների պետական վիճակագրական աշխատանքների եռամյա ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, և դրա գործողությունը տարածվում է 2021 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ՝**

**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2021թ. մարտի 5  
Ստեփանակերտ  
ՀՕ-28-Ն

Հավելված  
«Արցախի Հանրապետության 2021-2023 թվականների  
պետական վիճակագրական աշխատանքների  
եռամյա ծրագիրը հաստատելու մասին» օրենքի

**ԱՐՑԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2021-2023 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ  
ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԵՌԱՄՅԱ ԾՐԱԳԻՐԸ**

**ՆԱԽԱԲԱՆ**

Համաձայն «Պետական վիճակագրության մասին» օրենքի՝ Արցախի Հանրապետության տարածքում պետական վիճակագրության իրագործման հիմքը վիճակագրական ծրագրերն են, որոնք ներառում են երկրի տնտեսական, ժողովրդագրական, սոցիալական և բնապահպանական իրավիճակի դիտարկման համար անհրաժեշտ վիճակագրական տեղեկատվությունը՝ հաշվի առնելով առկա ռեսուրսների սահմանափակումները, վիճակագրական տեղեկություններ տրամադրողների վրա դրվող պարտականությունների ծավալը և ծախսերի արդյունավետությունը:

Վիճակագրական ծրագրով նախատեսված գործունեության ուղղություններն ու միջոցառումները հաշվի են առնում երկրի ցուցանիշների համադրելիությունը միջազգային վիճակագրական չափանիշներին, երկարաժամկետ միջակայքում միտումները բացահայտելու նպատակով ապահովում են դրանց հնարավոր կայուն պարբերականությունը և տարեկան կտրվածքով պետական վիճակագրությանը հատկացվող ռեսուրսների հետ համաչափությունը:

Արցախի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) վիճակագրական ծրագրերը մշակվում են պետական վիճակագրության օգտագործողների պահանջարկի ուսումնասիրության հիման վրա:

Արցախի Հանրապետության 2021-2023 թվականների պետական վիճակագրական աշխատանքների եռամյա ծրագիրը (այսուհետ՝ Եռամյա ծրագիր) բխում է «Պետական վիճակագրության մասին» օրենքի 11-րդ հոդվածի 5-րդ պարբերության պահանջից և մշակվել է որպես արդյունավետ ռազմավարական և օպերատիվ կառավարման ու համակարգման առանցքային գործիք:

Այն օգտագործողների ընթացիկ և զարգացող կարիքները բավարարելու նպատակով սահմանում է Արցախի Հանրապետության պետական վիճակագրության ռազմավարական զարգացման ուղղությունները:

Եռամյա ծրագիրը սահմանում է ազգային վիճակագրական համակարգի հայեցակարգային մոտեցումները և զարգացման գերակա ուղղությունները:

Ծառայությունը պատասխանատու է վիճակագրական ծրագրեր կազմելու համար՝ սերտորեն համագործակցելով պետական վիճակագրության արտադրողների, օգտագործողների, ռեսպոնդենտների և վարչական տվյալներ տրամադրողների հետ:

Եռամյա ծրագրի կատարումը և ֆինանսավորումը պայմանավորված են Արցախի Հանրապետության յուրաքանչյուր տարվա պետական բյուջեով և բխում են դրանից:

**Մ Ա Մ 1  
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ**

1. Սույն Եռամյա ծրագրով նախատեսված գործունեության ուղղություններն ու միջոցառումները բխում են նաև նախորդ տարիների Եռամյա ծրագրերով սահմանված ռազմավարական ուղղություններից, միտված են դրանց շարունակականության ապահովմանը:

2. Պետական վիճակագրության ոլորտում որդեգրված ռազմավարությունն ուղղորդված է «Պետական վիճակագրության մասին» օրենքի 4-րդ հոդվածով սահմանված հիմնական խնդիրների իրագործման ապահովմանը՝ հիմնված վիճակագրության միջազգային չափանիշների և ստանդարտների վրա:

3. Համաձայն պաշտոնական վիճակագրության հիմնարար սկզբունքների՝ վիճակագրությունը պետական մարմինների, միջազգային կազմակերպությունների, հանրության, բիզնեսի պահանջմունքների բավարարման համար ծրագրային

աշխատանքի ընթացքում պետք է ապահովի անկողմնակալություն (անկախություն), տեղեկատվությունից օգտվելու հավասար մատչելիություն, պրոֆեսիոնալ ստանդարտներ, արդյունավետություն, հաշվետվողականություն և թափանցիկություն, սկզբնական (անվանական) տվյալների գաղտնիություն և այլն: Հարկ է, որ օգտագործողները Ծառայությունը ընկալեն որպես որոշակի քաղաքականության կողմնորոշված պետական ինստիտուտներից արմատապես տարբերվող մարմին: Քաղաքական, վարչական, գերատեսչական շահերի միջև առկա բախումներում պետական վիճակագրությունը չներքաշելու երաշխիքները սահմանված են պետական վիճակագրության հիմնարար սկզբունքներով:

4. Պետական վիճակագրության հիմնական խնդիրների և հիմնարար սկզբունքների ապահովման նպատակով մասնավորապես նախատեսվում է՝

1) վիճակագրական մեթոդաբանության շարունակական կատարելագործման, միջազգային չափանիշների հետ դրա ներդաշնակեցման ու միասնականացման, ինչպես նաև վիճակագրական ցուցանիշների միջազգային համադրելիության ապահովման նպատակով շարունակել և ընդլայնել Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի հետ համագործակցությունը:

2) վիճակագրական տվյալների որակի և թափանցիկության ապահովման նպատակով շարունակել տեղեկատվության տարածման միջազգայնորեն ընդունված չափանիշների ներդրման ու կիրառման աշխատանքները (մասնավորապես՝ ըստ Արժույթի միջազգային հիմնադրամի մշակած Տվյալների տարածման հատուկ ստանդարտի), որոնք ենթադրում են նաև Ծառայության պաշտոնական կայքի անխափան աշխատանք և տեղեկատվության կազմի ու որակի, ինչպես նաև մեթոդաբանական տվյալների պարբերական արդիականացում:

3) վիճակագրության մեթոդաբանության զարգացմանը զուգընթաց՝ շարունակել ներկայումս գործող վիճակագրական դիտարկման փաստաթղթերում արտացոլված ցուցանիշների կազմի ու բովանդակության վերանայման, վիճակագրական դիտարկման փաստաթղթերի միասնականացման աշխատանքները՝ նպատակ ունենալով նվազագույնի հասցնել տեղեկատվության որակի, ամբողջականության և արժանահավատության վրա վերջինիս հնարավոր բացասական ազդեցությունները, ինչպես նաև հնարավորին չափ նվազեցնել վիճակագրական տեղեկություններ տրամադրողների ծանրաբեռնվածությունը:

4) շարունակել տեխնիկատնտեսական և սոցիալական տեղեկատվության դասակարգման ու կողմնորման միասնական համակարգի մաս կազմող ազգային դասակարգիչների ներդրման, ինչպես նաև պետական վիճակագրությունում արդեն իսկ ներդրված ու կիրառվող դասակարգիչների կատարելագործման աշխատանքները:

5) համալրել, արդիականացնել և ամբողջականացնել (նվազագույնը՝ ամենամյա պարբերականությամբ) վիճակագրական բիզնես ռեզիստրի տվյալների բազան (իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի մասով) և որպես դրա հետևանք՝ ընդլայնել տեղեկատվության հավաքման ընտրանքային եղանակների կիրառումը:

6) ընդլայնել վարչական ռեզիստրների միջոցով տեղեկատվության հավաքման մեխանիզմի կիրառումը՝ հաշվի առնելով վիճակագրական տարեկան ծրագրերով սահմանված համապատասխան աշխատանքների իրականացման ապահովումը:

7) տեղական (համայնքային) վարչական ռեզիստրների (ներառյալ՝ համայնքների անձնագրերի) ներդրմանը և վարմանը զուգընթաց՝ կատարելագործել և ընդլայնել տարածքային վիճակագրության վարման համար անհրաժեշտ ցուցանիշների կազմն ու բովանդակությունը:

8) ընդլայնել ըստ սեռի վարվող վիճակագրական ցուցանիշների համակազմը:

9) ցուցանիշների մշակման յուրաժամանակության ապահովման, ինչպես նաև աշխատանքների արդյունավետության բարձրացման նպատակով տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրմամբ և կիրառմամբ իրականացնել միջոցառումներ տեղեկատվության էլեկտրոնային հավաքման ուղղությամբ:

10) օգտագործողների պահանջների և կարիքների ավելի խորն ուսումնասիրման և վիճակագրության համապատասխան իրավական դաշտի ու տվյալների տարածման կատարելագործման միջոցով նպաստել վիճակագրական տեղեկատվության նկատմամբ վստահության աճին:

11) շարունակել երկրի տնտեսական, ժողովրդագրական, սոցիալական և բնապահպանական վիճակը բնութագրող վիճակագրական տեղեկատվություն պարունակող, ինչպես նաև ոլորտային ու տարածքային առանձնահատկությունները

բնութագրող վիճակագրական հրապարակումների (տեղեկագրերի, ժողովածուների և այլն) թողարկումը, ինչպես նաև կատարելագործել դրանց կազմը, բովանդակությունն ու թեմատիկ ընդգրկումը՝ վիճակագրական տեղեկատվության օգտագործողների պահանջարկի առավել ամբողջական բավարարման նպատակով:

12) կատարելագործել վիճակագրական տեղեկատվության օգտագործողների համար Օառայության պաշտոնական կայքից ժամանակի իրական ռեժիմով ամփոփ տեղեկատվության տարածման եղանակները:

## Մ Ա Ս 2

### ԳՈՐԾԱՌՈՒԹՅՑԻՆ ՈԼՈՐՏՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԵՐԸ

5. Վիճակագրության ոլորտը բնութագրվում է մեթոդաբանության մշտական կատարելագործման անհրաժեշտությամբ, որը խարսխված է մի կողմից՝ տվյալների արժանահավատության, յուրաժամանակության, տեղեկատվության ստացման գիտական հիմնավորվածության և միջազգային չափանիշներին համապատասխանության առումով մշտապես աճող պահանջների, մյուս կողմից՝ վիճակագրական գաղտնիքի սկզբունքի պահպանման պահանջի վրա:

6. Վիճակագրության հետագա զարգացումը 2021-2023 թվականներին նախատեսվում է իրականացնել ըստ տնտեսության իրական, հարկաբյուջետային, ֆինանսական, արտաքին և սոցիալ-ժողովրդագրական հատվածներին:

## Բ Ա Ժ Ի Ն 1

### ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

## Գ Լ ՈՒ Խ 1

### ԱԶԳԱՑԻՆ ՀԱՇԻՎՆԵՐ

7. Նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները.

1) «Ազգային հաշիվների համակարգ-2008» և «Եվրոպական հաշիվների համակարգ-2010» միջազգային մեթոդաբանությունների համաձայն՝ ողջ տնտեսության, ինչպես նաև տնտեսության ինստիտուցիոնալ հատվածների մակարդակով ազգային հաշիվների համակարգի վիճակագրության վարում և կատարելագործում.

2) «Ազգային հաշիվների համակարգ-2008» մեթոդաբանական հենքով համախառն ներքին արդյունքի բացարձակ ծավալի և շարժընթացի հետընթաց վերանայումների աշխատանքների իրականացում.

3) «Ազգային հաշիվների համակարգ-2008»-ի պահանջներին համապատասխան՝ Արցախի ազգային հաշիվների համակարգի ցուցանիշների հաշվարկների կատարելագործման նպատակով տեղեկատվության աղբյուրների համալրում և կատարելագործում.

4) ֆինանսական և ոչ ֆինանսական կազմակերպությունների հատվածների ավելացված արժեքի (արտադրական եղանակով) վիճակագրության վարում՝ ըստ ենթահատվածների.

5) Արցախի ազգային հաշիվների վիճակագրության վարում՝ «Տնտեսական գործունեության տեսակների» դասակարգչին և «Ազգային հաշիվների համակարգ-2008»-ով սահմանվող դասակարգումներին համապատասխան.

6) «չդիտարկվող տնտեսության» չափերի գնահատման մեթոդաբանության և հաշվարկների կատարելագործում.

7) ազգային հաշիվների համակարգում «ռեսուրսներ-օգտագործում» աղյուսակների կազմման աշխատանքների իրականացում՝ լրացուցիչ ռեսուրսների հնարավոր ներգրավմամբ.

8) ֆինանսական միջնորդության անուղղակիորեն չափվող ծառայությունների գնահատման մեթոդաբանության կատարելագործում.

9) ազգային հարստության բաղադրիչների վիճակագրության վարում և կատարելագործում.

10) ազգային հաշիվներում հիմնական միջոցների սպառման գնահատման մեթոդաբանության կատարելագործում.

- 11) «սպառողի ծախսերի մեթոդի» կիրառմամբ «սեփական կացարանում բնակվելու պայմանականորեն հաշվարկվող վարձակալության արժեքի» գնահատում.
- 12) համախառն ավելացված արժեքի՝ ըստ աշխատողների թվաքանակով որոշվող կազմակերպությունների չափերի և տնտեսական գործունեության տեսակների վիճակագրության վարում.
- 13) տարածքային համախառն ներքին արդյունքի գնահատման իրականացում:

## **Գ Լ ՈՒ Խ 2**

### **ԲԻԶՆԵՍ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ (ԱՐԴՑՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ, ԳՅՈՒՂԱՏՆԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆ, ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ, ՏՐԱՆՍՊՈՐՏ ԵՎ ԿԱՊ, ԱՌԵՎՏՈՒՐ ԵՎ ԱՅԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ)**

8. Նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները.

- 1) «Տնտեսական գործունեության տեսակների» և «Արտադրանքի դասակարգում ըստ գործունեության տեսակների» դասակարգիչներին համապատասխան վիճակագրության վարում.
- 2) վիճակագրական տվյալների հավաքման և մշակման մեթոդաբանության շարունակական կատարելագործում և դրա համադրելիության ապահովում միջազգային չափանիշների և ստանդարտների համաձայն հասկացությունների, դասակարգումների, տեղեկատվական աղբյուրների և այլնի մասով.
- 3) հաշվառման դաշտի ամբողջականացման և ցուցանիշների որակի ապահովման նպատակով չդիտարկվող (չհաշվառվող) գնահատման գործիքների կիրառում և դրանց շարունակական կատարելագործում՝ ըստ միջազգային չափորոշիչների.
- 4) բիզնես ռեգիստրի տեղեկատվական շտեմարանի միջոցով հաշվառման դաշտի արդիականացում, ընտրանքային դիտարկումների մեթոդների կիրառման ընդլայնում ու կատարելագործում.
- 5) գյուղատնտեսական համատարած հաշվառման անցկացում.
- 6) բուսաբուծական և անասնաբուծական արտադրանքի արտադրության, ինչպես նաև գյուղատնտեսության ոլորտի այլ ցուցանիշների վերաբերյալ վիճակագրական տվյալների որակի ապահովման նպատակով, ելնելով յուրաքանչյուր ոլորտի առանձնահատկություններից, տվյալների հավաքման գործիքակազմի ցուցանիշների կառուցվածք, մեթոդաբանություն, պարբերականություն, ընտրանքային դիտարկման դաշտի արդիականացում և կատարելագործում ու միջազգային չափանիշներին համապատասխանության ապահովում.
- 7) Միավորված ազգերի կազմակերպության պարենի և գյուղատնտեսության կազմակերպության ու Եվրոպական հանձնաժողովի կողմից կիրառվող մեթոդաբանության համաձայն՝ պարենային ապահովության վիճակը բնութագրող ցուցանիշների համակարգի (պարենի առկայություն, մատչելիություն և սպառում) շարունակական կատարելագործում, դրա հիման վրա ազգային պարենային հաշվեկշիռների պարբերական կազմում և հրապարակում.
- 8) վարչական ռեգիստրների՝ որպես վիճակագրական տեղեկատվության աղբյուրի կիրառման շրջանակների ընդլայնում:

## **Գ Լ ՈՒ Խ 3**

### **ԳՆԵՐ ԵՎ ՍԱԿԱԳՆԵՐ**

9. Նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները.

- 1) սպառողական գների ինդեքսների (այսուհետ՝ ՍԳԻ) հաշվարկման մեթոդաբանության հետագա կատարելագործման նպատակով դիտարկվող ապրանք-ծառայությունների կազմի, կառուցվածքի հերթական վերանայման և արդիականացման աշխատանքների իրականացում, ՍԳԻ-ի զամբյուղում ներառված ապրանք-ծառայությունների կշիռների ամենամյա վերահաշվարկի կատարում.
- 2) ՍԳԻ-ի հաշվարկների արդյունավետ կազմակերպման նպատակով էլեկտրոնային աղյուսակների կազմում՝ ըստ «Անհատական սպառում» ըստ նպատակների դասակարգչի» 2-ից 5 նիշ մակարդակների.
- 3) ՍԳԻ-ի հրապարակման ձևաչափերի վերանայում՝ հիմնվելով Արժույթի միջազգային հիմնադրամի առաքելության առաջարկների և եվրոպական երկրների

վիճակագրական կազմակերպությունների կողմից ՍԳԻ-ին ներկայացվող պահանջների և միջազգայնորեն ընդունված չափորոշիչների վրա, ՍԳԻ-ի 12-ամսյա գնաճի հրապարակում.

4) խիստ սեզոնայնություն ունեցող ոչ պարենային ապրանքների համար ՍԳԻ-ի հաշվարկներում միջազգային պրակտիկայում առավել հաճախ կիրառվող՝ «տիպային» գնի օգտագործման» մեթոդի ներդրում.

5) ՍԳԻ-ի հաշվարկներում սեփական կացարանում բնակվելու պայմանականորեն հաշվարկվող վարձակալության վճարի ներառման ուղղությամբ նախապատրաստական աշխատանքների իրականացում՝ կիրառելով Արժույթի միջազգային հիմնադրամի առաքելության կողմից եվրոպական երկրներում որպես նախընտրելի և առավել հաճախ օգտագործվող մեթոդ առաջարկված վարձավճարների գնահատման մեթոդը.

6) գնադիտարկման համար բազային առևտրի և ծառայություն մատուցող կազմակերպությունների ընտրանքի շարունակական բարելավում, առևտրի և ծառայության ընտրված օբյեկտներում փոքրածավալ շարժական համակարգիչների (պլանշետ) կիրառմամբ սպառողական ապրանքների և ծառայությունների ամենամսյա գնադիտարկումների իրականացում, համացանցային առևտրի կամ բջջային կապի սակագների գրանցման համար համացանցում զետեղված համապատասխան տեղեկատվության օգտագործում.

7) արդյունաբերական և գյուղատնտեսական արտադրանքների, բեռնափոխադրումների սակագների ինդեքսների հաշվարկման մեթոդաբանության շարունակական կատարելագործում, հետազոտման դաշտի ընդլայնում, դիտարկվող արդյունաբերական կազմակերպությունների և գյուղացիական տնտեսությունների ընտրանքի վերանայում, գների հետազոտության կազմակերպում՝ միջազգային չափանիշներին ու դասակարգումներին համապատասխան, մասնավորապես՝ արդյունաբերական արտադրանքի գների ինդեքսի հաշվարկման աշխատանքներում Արտադրանքի դասակարգում ըստ գործունեության տեսակի դասակարգչի (9 նիշ մակարդակով) ներդրում:

#### **Գ Լ ՈՒ Խ 4 ԱՇԽԱՏԱՆՔԻ ՇՈՒԿԱ**

10. Նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները.

1) աշխատանքի շուկայի և աշխատավարձի վերաբերյալ տեղեկատվության հավաքման, մշակման և ամփոփման մեթոդների և գործիքակազմի շարունակական կատարելագործում (մասնավորապես, տնային տնտեսություններում իրականացվող աշխատուժի հետազոտության սկզբնական տվյալների հավաքման աշխատանքներում տեխնոլոգիական նորամուծությունների ներդրման ուղղությամբ).

2) ընտրանքային հետազոտությունների կատարելագործում: Մասնավորապես, նախատեսվում է՝

ա. աշխատուժի հետազոտության ընտրանքային համակցության ընդլայնում՝ միտված բնակչության տարբեր խմբերի խնդիրների և առանձնահատկությունների վերհանմանը,

բ. աշխատուժի հետազոտության ընտրանքի շրջանակի մեթոդաբանության վերանայում՝ ընտրանքային միավորների ձևավորման համար որպես գլխավոր համակցություն կիրառելով Արցախի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրի անհատական (անձնավորված) տվյալների շտեմարանը,

գ. աշխատուժի հետազոտության արդյունքների գնահատման մեթոդների կատարելագործում՝ օգտագործելով ժողովրդագրության ընթացիկ վիճակագրական տվյալները, ինչպես նաև հետազոտությունների արդյունքների որակը բնութագրող ցուցանիշների (սահմանային սխալ, վստահության միջակայք և այլն) հաշվարկում,

դ. աշխատուժի և թափուր աշխատատեղերի հետազոտությունների գլխավոր համակցության արդիականացում՝ դաշտային աշխատանքների մեկնարկից առաջ տնային տնտեսությունների (կազմակերպությունների) ցուցակագրում,

ե. աշխատուժի հետազոտության թեմատիկ մոդուլների կիրառում՝ միտված աշխատանքի շուկայի զարգացումները և մարտահրավերները մշտադիտարկելուն.

3) վարչական ռեգիստրների տվյալների շրջանակի ընդլայնում, այդ թվում՝ Արցախի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի անձնավորված հաշվառմամբ վարձու աշխատողների տվյալների շտեմարանի տեղեկատվության մշակման գործիքների ներդրում և էլքային ցուցանիշների ստացում.



4) Արցախի Հանրապետության աշխատանքի վիճակագրության մեթոդաբանության և ելքային ցուցանիշների շրջանակի հնարավորինս ներդաշնակեցում Աշխատանքի միջազգային կազմակերպության և Եվրամիության առաջարկվող ստանդարտներին, կանոնակարգերին, դասակարգումներին (ISCO, NACE, ISECD և այլն)՝ ապահովելով Արցախի Հանրապետության սոցիալ-տնտեսական քաղաքականության կարիքներից բխող, ժամանակակից պահանջներին համահունչ ցուցանիշներ և համադրելի աշխատանքի վիճակագրություն: Մասնավորապես, նախատեսվում է՝

ա. 2013 թվականի Աշխատանքի վիճակագիրների միջազգային 19-րդ համաժողովում ընդունված «Աշխատանքի, զբաղվածության, աշխատուժի թերօգտագործման վիճակագրության» վերաբերյալ բանաձևի դրույթների ներդրման փուլից անցում աշխատանքի շուկայի ցուցանիշների առաջարկվող նոր կազմի և շրջանակի փուլային ներդրմանը, շարունակական կատարելագործմանը,

բ. թափուր և նոր ստեղծված աշխատատեղերի, աշխատատեղերի շարժի, աշխատողների մասնագիտական ուսուցման, աշխատանքի պայմանների վիճակագրության շարունակական կատարելագործում:

5) աշխատանքի շուկայի ըստ սեռերի վիճակագրության շարունակական կատարելագործում և ներդաշնակեցում Միավորված ազգերի կազմակերպության Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի կողմից առաջարկվող «Գենդերային առանցքային ցուցանիշների կազմ»-ի հետ:

6) աշխատուժի շարժունության վիճակագրության ներդրում և դրա շրջանակում աշխատանքային միգրացիայի վիճակագրության ներդաշնակեցում՝ Միավորված ազգերի կազմակերպության Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի կողմից առաջարկվող ձեռնարկին համահունչ, ինչպես նաև Աշխատանքի վիճակագիրների միջազգային 20-րդ համաժողովի բանաձևերի պահանջներին ընդառաջ:

#### **Գ Լ ՈՒ Խ 5 ԲԻԶՆԵՍ ՈՒԳԻՍՏՐ**

11. Նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները.

1) վարչական ռեգիստրների (մասնավորապես՝ Արցախի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության, Արցախի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի և այլն) կողմից վարվող տվյալների շտեմարանների հիման վրա իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի մասով բիզնես ռեգիստրի ամբողջականացման ապահովում և պարբերաբար արդիականացում՝ համաձայն միջազգային ընդունված չափորոշիչների:

2) բիզնես ռեգիստրի վարման ծրագրային ապահովման շարունակական կատարելագործում՝ ուղղված ելքային ամփոփ տեղեկատվության ստացման գործընթացի դյուրացմանը:

3) բիզնես ռեգիստրում առկա ցուցանիշների որակի բարձրացման նպատակով ուղղակի և անուղղակի աղբյուրներից հավաքվող տեղեկատվության մշակման գործիքների կատարելագործում:

4) բիզնես ռեգիստրի տվյալների շտեմարանի հիման վրա փոքր ու միջին ձեռնարկատիրության վերաբերյալ քանակական ու «Ժողովրդագրական» վիճակագրության վարում:

#### **ԴԱՍԱԿԱՐԳԻՉՆԵՐ**

12. Նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները.

1) «Ազգային հաշիվների համակարգ - 2008» մեթոդաբանության վրա հիմնված «Ֆինանսական ակտիվների դասակարգչի» ազգային տարբերակի մշակում:

2) «Կրթության միջազգային ստանդարտ դասակարգչի» ազգային տարբերակի մշակում:

#### **Գ Լ ՈՒ Խ 6 ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐ**

13. Նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները.

1) տնտեսության ոչ ֆինանսական հատվածի առևտրային կազմակերպությունների ֆինանսների վիճակագրության վարում՝ «Տնտեսական գործունեության տեսակների» դասակարգչին համապատասխան.

2) կազմակերպությունների վճարունակության, ֆինանսական կայունության, ինչպես նաև արտադրանքի և ակտիվների շահութաբերության ցուցանիշների հաշվարկում.

3) կառուցվածքային բիզնես վիճակագրության վարման համար անհրաժեշտ ֆինանսական ցուցանիշների ստացման ապահովում:

## **Բ Ա Ժ Ի Ն 2**

### **ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾՆԵՐ**

14. Նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները.

1) պետական ֆինանսների (համախմբված, պետական և համայնքների բյուջեների և դրանց տարրերի) վիճակագրության վարում և կատարելագործում՝ միջազգայնորեն ընդունված և կիրառվող մեթոդաբանություններին համապատասխան.

2) ֆինանսական միջնորդության հատվածի վիճակագրության վարում և կատարելագործում:

## **Բ Ա Ժ Ի Ն 3**

### **ԱՐՏԱՔԻՆ ՀԱՏՎԱԾ**

15. Նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները.

1) Արցախի Հանրապետության վճարային հաշվեկշռի կազմում՝ համաձայն Արժույթի միջազգային հիմնադրամի մեթոդաբանության.

2) արտաքին և փոխադարձ առևտրի ցուցանիշների հավաքում՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից մշակված ապրանքների արտաքին և փոխադարձ առևտրի մեթոդաբանությանը համապատասխան.

3) օտարերկրյա ներդրումների հաշվառման դաշտի բարելավում և ցուցանիշների գնահատման կատարելագործում՝ միջազգայնորեն ընդունված և կիրառվող մեթոդաբանություններին համապատասխան (այդ թվում՝ վարչական վիճակագրություն վարող լիազոր մարմնի հետ համատեղ).

4) միջազգային ծառայությունների հաշվառման դաշտի բարելավում և ցուցանիշների գնահատման կատարելագործում՝ միջազգայնորեն ընդունված և կիրառվող մեթոդաբանություններին համապատասխան.

5) միջազգային և ներքին զբոսաշրջության վիճակագրության վարման կատարելագործում, զբոսաշրջության սատելիտային հաշվի ներդրման ուղղությամբ նախապատրաստական աշխատանքների իրականացում:

## **Բ Ա Ժ Ի Ն 4**

### **ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ**

## **Գ Լ ՈՒ Խ 1**

### **ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏ**

16. Նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները.

1) կրթության, գիտության, մշակույթի, սպորտի և սոցիալ-ժողովրդագրության այլ բնագավառների վիճակագրական հաշվառման ամբողջականացման նպատակով՝ վարչական ռեգիստրների ընդլայնման և կատարելագործման աջակցություն.

2) բնակարանային ֆոնդի և կոմունալ տնտեսության ոլորտի վիճակագրության բարելավում, վարչական ռեգիստրների ընդլայնման և կատարելագործման աջակցություն:

## **Գ Լ ՈՒ Խ 2**

### **ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

17. Նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները.

1) տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության պարբերական անցկացում և Համաշխարհային բանկի կողմից

մշակված մեթոդաբանական զարգացումներին համահունչ մեթոդաբանության կատարելագործում.

2) աղքատությունը և սոցիալական վիճակը բնութագրող հիմնական ցուցանիշների ամբողջականացման և արդիականացման նպատակով տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության ընտրանքի ավելի բարձր ներկայացուցչականության ապահովում.

3) աղքատության նյութական և ոչ նյութական (կրթություն, առողջապահություն, անվտանգ խմելու ջրի մատչելիություն և բնակարանային պայմաններ) ցուցանիշների վարման շարունակականության ապահովում ու կատարելագործում:

### **Գ Լ ՈՒ Խ 3 ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

18. Նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները.

1) բնակչության բնական շարժի՝ քաղաքացիական կացության ակտերում ներառված ծննդյան, մահվան, ամուսնության, ամուսնալուծության տվյալների վիճակագրական մշակման աշխատանքների շարունակական կատարելագործում, այդ թվում՝ տվյալների մշակման գործող համակարգում Արցախի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի քաղաքացիական կացության ակտերի գրանցման և նոտարիատի գործակալության տարածքային ստորաբաժանումների միջոցով փոխանցվող էլեկտրոնային տվյալների ներդրում և էլքային տվյալների ստացման ապահովում.

2) բնակչության մեխանիկական տեղաշարժերի՝ միգրացիայի վարչական հաշվառման տեղեկատվական շտեմարանների ամբողջականացման ապահովմանը մեթոդաբանական օժանդակության ցուցաբերում, բնակչության պետական ռեգիստրում հաշվառված բնակչության, տարվա ընթացքում հաշվառված անձանց (իմիգրանտների) և հաշվառումից հանված անձանց (եմիգրանտների) վերաբերյալ միջազգայնորեն սահմանված չափորոշիչներին համապատասխան վիճակագրական տվյալների ստացում.

3) բնակչության պետական ռեգիստրի տեղեկատվական համակարգից բնակչության մեխանիկական տեղաշարժերի՝ միգրացիայի վարչական հաշվառման շտեմարաններում տվյալների ընդգրկվածությունն ու որակը բարելավելու նպատակով աշխատանքների իրականացում՝ միտված նույնականացված տվյալներով համալրելուն (բնակչության տեղաշարժերի վերաբերյալ պարբերաբար ստացվող տվյալները վիճակագրական նշանակությամբ նույնականացված ծածկագրերով համալրելուն ուղղված ծրագրի նախագծում՝ Արցախի Հանրապետության ոստիկանության հետ համատեղ).

4) բնակչության սեռատարիքային կազմի վերաբերյալ էլքային տվյալների ստացման համար մեքենայական մշակման ծրագրերի կատարելագործման ուղղությամբ աշխատանքների իրականացում, մասնավորապես՝ Արցախի Հանրապետության բնական շարժի մշակման համալիր ծրագրում ըստ շրջանների և Ստեփանակերտ քաղաքի վիճակագրական հաշվարկների ներառելու ուղղությամբ:

### **Գ Լ ՈՒ Խ 4 ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

19. Նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները.

1) Արցախի Հանրապետության սոցիալ-տնտեսական և տարածքային զարգացման ու կենսագործունեության առանձնահատկություններով պայմանավորված՝ ոլորտին առնչվող տեղեկատվական շտեմարանների ամբողջականացում և վարում, համապատասխան վարչական ռեգիստրների կատարելագործման օժանդակություն.

2) շրջակա միջավայրի վիճակի վերաբերյալ վիճակագրական հրապարակումների թողարկում, դրանցում աշխարհագրական տեղեկատվական համակարգի ներդրում:

### **Գ Լ ՈՒ Խ 5 ՈՐԱԿԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ**

20. Ծառայությունը օգտագործողների մշտապես աճող պահանջները բավարարելու նպատակով խստորեն հետևում է յուրաժամանակության և ճշտապահության, մատչելիության և պարզության սկզբունքներին և ապահովում է պետական վիճակագրության համաձայնեցվածությունը և համադրելիությունը՝ հնարավորինս խուսափելով ռեսպոնդենտների ավելորդ ծանրաբեռնվածությունից:

21. Ծառայության որակի քաղաքականությունն ուղղված է համապատասխան մեթոդաբանությունների և գործիքների մշակման միջոցով վիճակագրական արտադրանքի և գործընթացների համակարգված բարելավմանը՝ շեշտը դնելով բարձր որակի ծառայությունների մատուցմանը, աշխատանքի և ծախսերի արդյունավետության բարձրացմանը:

22. Ծառայության որակի համակարգը հիմնված է Եվրոպական վիճակագրության փորձառության օրենսգրքի 15 սկզբունքների վրա.

- 1) պրոֆեսիոնալ անկախություն.
- 2) մանդատ տվյալների հավաքման համար.
- 3) ռեսուրսների համապատասխանություն.
- 4) որակի հանձնառություն.
- 5) վիճակագրական գաղտնիություն.
- 6) անկողմնակալություն և օբյեկտիվություն.
- 7) հիմնավորված մեթոդաբանություն.
- 8) համապատասխան վիճակագրական ընթացակարգեր.
- 9) ռեսպոնդենտների ոչ ավելորդ ծանրաբեռնվածություն.
- 10) ծախսերի արդյունավետություն.
- 11) համապատասխանություն.
- 12) ճշգրտություն և արժանահավատություն.
- 13) յուրաժամանակություն և ճշտապահություն.
- 14) համաձայնեցվածություն և համադրելիություն.
- 15) մատչելիություն և պարզություն:

### Մ Ա Ս 3

#### **ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՆԵՐԴՐՈՒՄ**

23. Տեղեկատվական ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիաների ներդրման գործընթացում շարունակական բնույթ կկրեն հետևյալ միջոցառումները.

1) Ծառայության համակարգում տեղեկատվական տեխնոլոգիաների շարունակական զարգացում.

2) Ծառայության աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումներում ժամանակակից համակարգչային սարքավորումներով և համապատասխան տեխնիկական միջոցներով համալրման աշխատանքների շարունակականության ապահովում.

3) Ծառայությունում գործող ծրագրային համակարգերի վարում, արդիականացում և նոր համակարգերի ստեղծում.

4) CAPI համակարգի միջոցով սկզբնական տվյալների հավաքման գործընթացների ներդրում.

5) շահագրգիռ պետական մարմինների հետ համատեղ կայուն զարգացման նպատակների ցուցանիշների համար ազգային հաշվետվողական հարթակի ներդրում.

6) վիճակագրական հաշվետվությունների ձևերի ներկայացման առցանց համակարգի ստեղծման աշխատանքների կազմակերպում.

7) Ծառայության աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների միջև կորպորատիվ ցանցի կատարելագործում.

8) Ծառայության պաշտոնական կայքի և վիճակագրական տեղեկատվական շտեմարանների շարունակական արխիվացում.

9) Ծառայության պաշտոնական կայքի արդիականացման աշխատանքների շարունակում.

10) Ծառայության միասնական վիճակագրական տեղեկատվական համակարգի տեղեկատվական անվտանգության և անխափան աշխատանքների շարունակում՝ ապահովելով վիճակագրական գաղտնիք համարվող տվյալների անանոնությունը և անվանազերծումը:

**Մ Ա Ս 4**  
**ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ**

24. Վիճակագրության բնագավառում համագործակցությունը, հանդիսանալով Միավորված ազգերի կազմակերպության պետական վիճակագրության հիմնարար և Եվրոպական վիճակագրության փորձառության օրենսգրքով սահմանված սկզբունքներից մեկը, ներառում է տեղեկատվության և փորձի փոխանակումը, ինչպես նաև ներուժ ստեղծելու նպատակով դրանց տարածումը վիճակագրական տվյալների հետագա օգտագործման համար: Վիճակագրական համագործակցության իրականացման ոլորտը բավական ընդարձակ է՝ սկսած աշխատանքային խմբերի և խորհրդակցությունների շրջանակում ոչ պետական շփումներից մինչև վիճակագրության կատարելագործմանն ուղղված համապարփակ ծրագրերը:

25. Համագործակցության հիմնական նպատակներն են.

1) առանցքային ոլորտներում կատարելագործված վիճակագրական տվյալների առավել լայն և արդյունավետ օգտագործում ժողովրդագրական, սոցիալական, տնտեսական և բնապահպանական բնագավառներում, ինչպես նաև ներդրումների ոլորտում քաղաքականության մշակման, ծրագրման, որոշումների ընդունման և վերահսկման համար հիմք ստեղծելու նպատակով.

2) համագործակցության գերակայություն հանդիսացող առանցքային ոլորտներում վիճակագրական ներուժի և կարողությունների ամրապնդումը վիճակագրական տվյալների կազմման, ինչպես նաև դրանց հրապարակման համար.

3) համակարգերի և ներուժային հնարավորությունների աջակցմանն ու ընդլայնմանն ուղղված կարողության երկարաժամկետ ծրագրերի ապահովումը:

26. Համագործակցության շրջանակում Ծառայության հիմնական խնդիրներն են.

1) էապես ամրապնդել վիճակագրական ներուժն արտադրելու և տարածելու բարձր որակի վիճակագրական տվյալներ՝ անհրաժեշտ փաստերի վրա հիմնված որոշումների կայացման գործընթացների համար.

2) բարձրացնել վիճակագրական արտադրանքի որակը՝ այն է վիճակագրական տվյալների համապատասխանությունը, գնահատումների ճշգրտությունը և արժանահավատությունը, յուրաժամանակությունը և ճշտապահությունը, տվյալների մատչելիությունը և պարզությունը, համաձայնեցվածությունը և համադրելիությունը ու ամբողջականությունը ժամանակակից տեղեկատվության պահանջներին համահունչ.

3) բարձրացնել տվյալների արդիականությունը՝ ապահովելով օգտագործողների կարիքների հաշվառումը և բավարարումը.

4) ապահովել տվյալների միջազգային համադրելիությունը.

5) գործել միջազգային վիճակագրական չափանիշներին, կանոններին և ստանդարտներին համաձայն.

6) հաշվի առնելով վիճակագրության առնչությունը հանրային կյանքի բոլոր ոլորտներին, բացառապես վիճակագրության միջազգային ստանդարտներով գործելու հրամայականը, գիտակցելով վիճակագրի պատասխանատվությունը հանրության՝ օգտագործողների, ռեսպոնդենտների և այլ գործընկերների հանդեպ, ինչպես նաև վիճակագրի մասնագիտության յուրօրինակությունը, հետևել Միավորված ազգերի կազմակերպության պետական վիճակագրության հիմնարար սկզբունքներին, Եվրոպական վիճակագրության փորձառության օրենսգրքի սկզբունքներին, Պրոֆեսիոնալ էթիկայի հռչակագրի սկզբունքներին, Միջազգային վիճակագրական գործունեության կառավարման սկզբունքներին և դրանք կիրառել իր գործունեությունում.

7) բարձրացնել և երաշխավորել պետական վիճակագրության հեղինակությունն արտաքին աշխարհում.

8) մշակել և ներդնել պրոֆեսիոնալ վարվելակերպի սկզբունքները:

**Մ Ա Ս 5**  
**ԿԱՂԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ԵՎ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ**

27. Ծառայության ուսուցման քաղաքականությունը հիմնված է ուսուցման ծրագրերի վրա՝ կողմնորոշված դեպի անձնակազմի կարիքներն ու պահանջները և նպատակաուղղված գիտելիքների, հմտությունների, փորձի և տեղեկատվության փոխանակմանը:

28. Ծառայությունը կշարունակի կադրերի պատրաստման և վերապատրաստման գործընթացը, ինչը կարտահայտվի Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի և նրա միջոցով միջազգային կազմակերպությունների կողմից կազմակերպվող դասընթացներին, սեմինարներին և աշխատանքային հանդիպումներին մասնակցությամբ:

29. Առաջնորդվելով «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի պահանջներով՝ Ծառայության աշխատակազմի քաղաքացիական ծառայողների մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների հետևողական կատարելագործման և զբաղեցրած պաշտոններին համապատասխանության որոշման նպատակով կշարունակվեն վերապատրաստման և ատեստավորման գործընթացները:

30. Ծառայությունը կիրականացնի քաղաքացիական ծառայողների վերապատրաստման կարիքների գնահատում, ըստ որի կկազմվի քաղաքացիական ծառայողների վերապատրաստման ծրագիր, որը ներառում է վերապատրաստման կարիքները, վերապատրաստման եղանակները, հատկացված կրեդիտները, ժամանակի բաշխվածությունը, իրականացնող կազմակերպությունները, վերապատրաստում իրականացնող մասնագետների թեկնածուներին:

## Մ Ա Ս 6

### ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

31. Ծառայությունը ֆինանսավորվում է Արցախի Հանրապետության պետական բյուջեի, ինչպես նաև օրենքով չարգելված այլ միջոցների հաշվին:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ**

**ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ**

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ  
ՕԳՈՍՏՈՍԻ 17-Ի ՆՀ-130-Ն ՀՐԱՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ  
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 38-րդ հոդվածը՝ **ո ր ք շ ու մ եմ**.

1. Արցախի Հանրապետության Նախագահի 2020 թվականի օգոստոսի 17-ի «Արցախի Հանրապետության Նախագահին առընթեր պետական պարգևների և պատվավոր կոչումների շնորհման հարցերի քննարկման խորհրդակցական հանձնաժողովի մասին» ՆՀ-130-Ն հրամանագրի 2-րդ կետով հաստատված հանձնաժողովի կազմը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն հրամանագիրն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման պահից:

**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2021թ. մարտի 11  
Ստեփանակերտ  
ՆՀ-1496-Ն

Հավելված  
Արցախի Հանրապետության Նախագահի  
2021 թվականի մարտի 11-ի  
ՆՀ-1496-Ն հրամանագրի

«Հավելված N 1  
Արցախի Հանրապետության Նախագահի  
2020 թվականի օգոստոսի 17-ի ՆՀ-130-Ն  
հրամանագրի

**Կ Ա Ջ Մ**

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ  
ՊԱՐԳԵՎՆԵՐԻ ԵՎ ՊԱՏՎԱԿՈՐ ԿՈՉՈՒՄՆԵՐԻ ՇՆՈՐՀՄԱՆ ՀԱՐՑԵՐԻ  
ՔՆՆԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԱԿՑԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ**

Արարատ Միքայելի <b>Մեյրումյան</b>	Արցախի Հանրապետության ազգային անվտանգու- թյան ծառայության տնօրենի առաջին տեղակալ <b>(հանձնաժողովի նախագահ)</b>
Կարմեն Շիրինի <b>Ասլանյան</b>	«Արցախի պահեստագործի սպաների միություն» հասարակական կազմակերպության նախագահ
Արմեն Մելիկի <b>Ասրյան</b>	«Արցախյան երրորդ պատերազմում զոհված և անհայտ կորած զինծառայողների հարազատների միություն» հասարակական կազմակերպության նախագահ
Վահան Միքայելի <b>Բաղասյան</b>	Արցախի Հանրապետության Նախագահի ներկայա- ցուցիչ՝ հատուկ հանձնարարությունների գծով
Վարդան Էմիլի <b>Բալայան</b>	Արցախի Հանրապետության Նախագահի ներկայա- ցուցիչ՝ հատուկ հանձնարարությունների գծով
Հովիկ Ալբերտի <b>Գասպարյան</b>	Արցախի Հանրապետության վաստակավոր նկարիչ
Գայանե Էդուարդի <b>Գրիգորյան</b>	Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ
Վյաչեսլավ Իվանի <b>Ղանիեյան</b>	«Արցախի ազատամարտիկների միություն» հասարակական կազմակերպության անդամ
Նորայր Յակովի <b>Մկրտչյան</b>	Արցախի Հանրապետության պաշտպանության բանակի հրամանատարի բարոյահոգեբանական ապահովման գծով տեղակալ
Սերգեյ Զավենի <b>Մովսիսյան</b>	«Հանրապետական բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության վիրաբուժական բաժանմունքի վարիչ
Մարգարիտա Հենրիխի <b>Գասպարյան</b>	Արցախի Հանրապետության Նախագահի աշխատա- կազմի քարտուղարության պարզևների և կոչումների բաժնի վարիչ <b>(հանձնաժողովի քարտուղար): »:</b>

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝**

**Ա. ԲԵԳԼԱՐՅԱՆ**



ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ

ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ  
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ  
ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Արցախի Հանրապետության Սահմանադրության 93-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերով և հիմք ընդունելով «Պետական կառավարչական հիմնարկների մասին» օրենքի 7-րդ հոդվածը և 9-րդ հոդվածի 2-րդ մասը՝ **ո ր ո շ ու մ եմ**.

1. Ստեղծել Արցախի Հանրապետության Նախագահի աշխատակազմի «Հայաստանի Հանրապետությունում Արցախի Հանրապետության կառավարության օպերատիվ շտաբ» առանձնացված ստորաբաժանում (այսուհետ՝ առանձնացված ստորաբաժանում):

2. Հաստատել առանձնացված ստորաբաժանման կանոնադրությունը և կառուցվածքը՝ համաձայն N 1 և N 2 հավելվածների:

3. Սույն հրամանագիրն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման պահից:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՑԱՆ

2021թ. մարտի 19  
Ստեփանակերտ  
ՆՀ-1531-Ն

**Կ Ա Ն Ո Ն Ա Դ Բ ՈՒ Թ Յ ՈՒ Ն**  
**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ «ՀԱՅԱՍՏԱՆԻ**  
**ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**  
**ՕՊԵՐԱՏԻՎ ՇՏԱԲ» ԱՌԱՆՁՆԱՅՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ**

**1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՑԹՆԵՐ**

1. Հայաստանի Հանրապետությունում Արցախի Հանրապետության կառավարության օպերատիվ շտաբը (այսուհետ՝ օպերատիվ շտաբ) Արցախի Հանրապետության Նախագահի աշխատակազմի առանձնացված ստորաբաժանում է, որն ապահովում է Հայաստանի Հանրապետությունում գտնվող (տեղահանված) Արցախի Հանրապետության քաղաքացիների սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման աշխատանքների համակարգումը, ինչպես նաև վերոհիշյալ ոլորտում Արցախի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության կառավարությունների միջև համագործակցությունը:

2. Օպերատիվ շտաբն իր գործունեությունն իրականացնում է Արցախի Հանրապետության Սահմանադրությանը, Արցախի Հանրապետության օրենսդրությանը, Արցախի Հանրապետության միջազգային պայմանագրերին և սույն կանոնադրությանը համապատասխան:

3. Օպերատիվ շտաբն ունի Արցախի Հանրապետության զինանշանի պատկերով և իր անվանմամբ հայերեն կլոր կնիք, ձևաթղթեր և անհատականացման այլ միջոցներ: Օպերատիվ շտաբը կարող է ունենալ Արցախի Հանրապետության զինանշանի պատկերով ու իր անվանմամբ հայերեն և այլ լեզվով կլոր կնիք, ձևաթղթեր և անհատականացման այլ միջոցներ:

4. Օպերատիվ շտաբը կազմված է օպերատիվ շտաբի պետից, օպերատիվ շտաբի պետի տեղակալից (տեղակալներից), օգնականից, գլխավոր մասնագետ-մամուլի պատասխանատուից, գլխավոր մասնագետ-իրավաբանից, կադրերի գծով գլխավոր մասնագետից, կառուցվածքային ստորաբաժանումներից (այսուհետ՝ ստորաբաժանումներ):

5. Օպերատիվ շտաբն Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա է հաշվառման իրավաբանական անձանց պետական գրանցում իրականացնող մարմնի կողմից:

6. Օպերատիվ շտաբը, իր իրավասության սահմաններում, Արցախի Հանրապետության անունից կարող է ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

7. Օպերատիվ շտաբն ունի ինքնուրույն հաշվեկշիռ:

8. Օպերատիվ շտաբը չի կարող իրականացնել ձեռնարկատիրական գործունեություն: Օպերատիվ շտաբն իր կնքած գործարքներով Արցախի Հանրապետության համար ձեռք է բերում ապրանքներ, ծառայություններ և աշխատանքներ կամ Արցախի Հանրապետության անունից օտարում է ապրանքներ, կատարում աշխատանքներ և մատուցում ծառայություններ, որոնց դիմաց ստացված հատուցումը հաշվեգրվում է Արցախի Հանրապետության միասնական գանձապետական հաշվի համապատասխան ենթահաշիվներին: Օպերատիվ շտաբի կատարած գործառնությունների և մատուցած ծառայությունների համար կարող է գանձվել պետական տուրք՝ օրենքով սահմանված չափով և կարգով:

9. Օպերատիվ շտաբն իր ֆինանսական գործառնություններն իրականացնում է գանձապետական համակարգի միջոցով: Օպերատիվ շտաբի կարիքների համար գնումները կատարվում են «Գնումների մասին» Արցախի Հանրապետության օրենքով նախատեսված կարգով:

10. Օպերատիվ շտաբի պարտավորությունների համար պատասխանատվություն է կրում Արցախի Հանրապետությունը:

11. Օպերատիվ շտաբի գտնվելու վայրն է՝ քաղաք Ստեփանակերտ, փետրվարի 20-ի փողոց, N 3:

## **2. ՕՊԵՐԱՏԻՎ ՇՏԱԲԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՆ** **ՈՒ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ**

12. Օպերատիվ շտաբի հիմնական խնդիրներն են՝

1) Հայաստանի Հանրապետությունում գտնվող (տեղահանված) Արցախի Հանրապետության քաղաքացիների սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման աշխատանքների համակարգումը.

2) Արցախի Հանրապետության քաղաքացիների հաշվառման և վերաբնակեցման խնդիրների համակարգումն ու Արցախի Հանրապետություն տեղափոխման կազմակերպումը.

3) Արցախի Հանրապետության Նախագահի կողմից կամ օրենսդրությամբ սահմանված այլ խնդիրների իրականացումը:

13. Օպերատիվ շտաբն իր հիմնական խնդիրներին համապատասխան իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) ապահովում է Հայաստանի Հանրապետությունում գտնվող (տեղահանված) Արցախի Հանրապետության քաղաքացիների սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման աշխատանքների իրականացումը.

2) կազմակերպում է Հայաստանի Հանրապետությունում գտնվող (տեղահանված) Արցախի Հանրապետության քաղաքացիների ճշգրիտ և պարբերաբար հաշվառումը՝ ըստ ժամանակավոր բնակության վայրերի.

3) ապահովում է համապատասխան սոցիալ-տնտեսական խնդիրների վերհանման և համակարգման միջոցով դրանց լուծումներ տալու աշխատանքները.

4) իր իրավասության շրջանակներում կազմում և համակարգում է Արցախի Հանրապետության համապատասխան բնակավայրերում վերաբնակվելու ցանկություն հայտնած տեղահանված ընտանիքների ցուցակները.

5) կազմակերպում է ճանաչողական այցեր Արցախի Հանրապետություն՝ հանրապետության համապատասխան բնակավայրերում վերաբնակվելու ցանկություն հայտնած ընտանիքների համար.

6) ապահովում է Արցախի Հանրապետության համապատասխան բնակավայրերում կամավորության սկզբունքով վերաբնակեցվող ընտանիքների և նրանց գույքի տեղափոխումը.

7) իր իրավասությունների շրջանակներում մասնակցում է այն տեղահանված քաղաքացիների ինտեգրմանը, ովքեր ցանկություն են հայտնել բնակվել Հայաստանի Հանրապետությունում.

8) իր իրավասության շրջանակներում կազմակերպում է Արցախի Հանրապետության քաղաքացիների ընդունելություն, ինչպես նաև նրանց դիմումների, բողոքների և առաջարկությունների քննարկում, վերլուծում ու ամփոփում՝ պարբերաբար Արցախի Հանրապետության Նախագահի աշխատակազմի ղեկավարին զեկուցելով դիմումների քննարկման արդյունքների մասին:

## **3. ՕՊԵՐԱՏԻՎ ՇՏԱԲԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ**

14. Օպերատիվ շտաբի կառավարումն իրականացնում են Արցախի Հանրապետության Նախագահը և Արցախի Հանրապետության Նախագահի աշխատակազմի ղեկավարը, իսկ ղեկավարումը՝ օպերատիվ շտաբի պետը՝ Արցախի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ իրեն վերապահված իրավասությունների սահմաններում:

15. Արցախի Հանրապետության Նախագահը՝

1) վերակազմակերպում և դադարեցնում է օպերատիվ շտաբի գործունեությունը.

2) հաստատում է օպերատիվ շտաբի կանոնադրությունը, կառուցվածքը և դրանցում կատարվող փոփոխությունները.

3) սահմանում է օպերատիվ շտաբի աշխատողների առավելագույն թվաքանակը.

4) Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է օպերատիվ շտաբի պետին և նրա

տեղակալին (տեղակալներին), ինչպես նաև նրանց նկատմամբ կիրառում է խրախուսանքի ու կարգապահական տույժի միջոցներ.

5) որոշում է օպերատիվ շտաբին հանձնվող գույքի կազմը և չափը:

16. Արցախի Հանրապետության Նախագահի աշխատակազմի ղեկավարը՝

1) օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված իր լիազորության սահմաններում կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում օպերատիվ շտաբի պետի՝ Արցախի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, հանձնարարագրերը, կարգադրությունները և ցուցումները.

2) վերահսկողություն է իրականացնում օպերատիվ շտաբին ամրացված կամ օգտագործման հանձնված պետական սեփականության պահպանության նկատմամբ.

3) հաստատում է օպերատիվ շտաբի հաստիքացուցակը.

4) իրականացնում է օրենքով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

17. Օպերատիվ շտաբը ղեկավարում է օպերատիվ շտաբի պետը:

Օպերատիվ շտաբի պետը պատասխանատու է օպերատիվ շտաբի առջև դրված խնդիրների և գործառնությունների պատշաճ կատարման համար, ինչպես նաև դրանց՝ օրենքներին և այլ իրավական ակտերին համապատասխանության համար:

Օպերատիվ շտաբի պետը ենթակա և հաշվետու է Արցախի Հանրապետության Նախագահին և Արցախի Հանրապետության Նախագահի աշխատակազմի ղեկավարին:

18. Օպերատիվ շտաբի պետը՝

1) ղեկավարում և կազմակերպում է օպերատիվ շտաբի ընթացիկ գործունեությունը.

2) սահմանված կարգով ընթացքավորում է Արցախի Հանրապետության Ազգային ժողովից, Արցախի Հանրապետության նախարարներից, տարածքային կառավարման մարմիններից, ինչպես նաև պետական այլ մարմիններից ու պաշտոնատար անձանցից, տեղական ինքնակառավարման մարմիններից ստացված գրությունները, նամակները, հեռագրերը և այլ փաստաթղթերը.

3) Արցախի Հանրապետության Նախագահի աշխատակազմի ղեկավարի հաստատմանն է ներկայացնում օպերատիվ շտաբի հաստիքացուցակը.

4) մասնակցում է Արցախի Հանրապետության կառավարության նիստերին, հրավերի դեպքում նաև Հայաստանի Հանրապետության կառավարության և ձևավորված աշխատանքային խմբերի նիստերին.

5) սահմանված կարգով պաշտոնի է նշանակում և պաշտոնից ազատում օպերատիվ շտաբի աշխատակիցներին, ինչպես նաև նրանց նկատմամբ կիրառում խրախուսանքի ու կարգապահական տույժի միջոցներ.

6) իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ և տալիս ցուցումներ, առանց լիազորագրի հանդես է գալիս օպերատիվ շտաբի անունից, ինչպես նաև տալիս է օպերատիվ շտաբի անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ նաև վերալիազորման իրավունքով լիազորագրեր.

7) Արցախի Հանրապետության օրենսդրությանը և սույն կանոնադրությանը համապատասխան սահմանում է օպերատիվ շտաբի կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության ոլորտները.

8) սահմանում է աշխատանքի բաշխումն իր տեղակալների միջև.

9) ապահովում է օպերատիվ շտաբին ամրացված կամ օգտագործման հանձնված պետական սեփականության պահպանությունը.

10) իր իրավասության սահմաններում ստեղծում է աշխատանքային խմբեր, հանձնաժողովներ.

11) կատարում է Արցախի Հանրապետության Նախագահի և Արցախի Հանրապետության Նախագահի աշխատակազմի ղեկավարի առանձին հանձնարարականները.

12) իրականացնում է օրենքով, իրավական այլ ակտերով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

#### **4. ՕՊԵՐԱՏԻՎ ՇՏԱԲԻ ԳՈՒՅՔԸ**

19. Օպերատիվ շտաբի գույքն օրենքով սահմանված կարգով ձևավորվում է նրա տիրապետմանը, տնօրինմանն ու օգտագործմանը հանձնված (ամրացված) գույքից: Արցախի Հանրապետության Նախագահի կողմից օպերատիվ շտաբին կարող է

վերապահվել նաև պետական բաժնետոմսերի կամ բաժնեմասերի տիրապետման իրավասություն:

20. Օպերատիվ շտաբն իրավունք ունի օրենքով, այլ իրավական ակտերով և իր կանոնադրությամբ նախատեսված դեպքերում ու կարգով, իր գործունեության նպատակներին և գույքի նշանակությանը համապատասխան օգտագործելու և տիրապետելու իրեն հանձնված գույքը (գույքային իրավունքները): Օպերատիվ շտաբն օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով կարող է տնօրինել (օտարել, վարձակալության տալ) իրեն հանձնված գույքը և գույքային իրավունքները:

#### **5. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

21. Օպերատիվ շտաբն Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով վարում է հաշվապահական հաշվառում և համապատասխան մարմիններին ներկայացնում ֆինանսական, բյուջետային, հարկային, պարտադիր վճարների մասին ու վիճակագրական հաշվետվություններ, հաշվարկներ, հայտարարագրեր:

22. Օպերատիվ շտաբի գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը կարող է ենթարկվել աուդիտի (վերստուգման)՝ Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

23. Օպերատիվ շտաբի ֆինանսատնտեսական բաժնի պետ-գլխավոր հաշվապահը պատասխանատու է հաշվապահական հաշվառումը վարելու, օպերատիվ շտաբի ֆինանսական, բյուջետային, հարկային, վիճակագրական, պարտադիր վճարների հաշվետվությունները ժամանակին կազմելու համար:

#### **6. ՕՊԵՐԱՏԻՎ ՇՏԱԲԻ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ**

24. Օպերատիվ շտաբի կառուցվածքը ներառում է ստորաբաժանումներ, որոնց ղեկավարները գործում են օպերատիվ շտաբի պետի կամ նրա համապատասխան տեղակալի անմիջական ղեկավարությամբ:

25. Օպերատիվ շտաբի ստորաբաժանումների ղեկավարները կազմակերպում ու ղեկավարում են ստորաբաժանումների գործունեությունը, իրականացնում են ստորաբաժանման աշխատողների միջև աշխատանքի բաշխում, ապահովում աշխատանքային կարգապահությունը և պատասխանատու են իրենց առջև դրված խնդիրների իրականացման համար:

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԴԵԿՎԱՎԱՐ՝**

**Ա. ԲԵԳԼԱՐՅԱՆ**

Հավելված N 2  
Արցախի Հանրապետության Նախագահի  
2021 թվականի մարտի 19-ի  
ՆՀ-1531-Ն հրամանագրի

**Կ Ա Ռ ՈՒ Ց Վ Ա Ծ Ք**  
**ԱՐՑԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ «ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՐՑԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ՕՊԵՐԱՏԻՎ ՇՏԱԲ» ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ**

**Կառուցվածքային ստորաբաժանումներ**

1. Հաշվառման և վերաբնակեցման խնդիրների կազմակերպման բաժին
2. Սոցիալ-տնտեսական խնդիրների համակարգման բաժին
3. Ֆինանսատնտեսական բաժին

**ԱՐՑԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝**

**Ա. ԲԵԳԼԱՐՅԱՆ**

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ

ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ  
ՄԵՊՏԵՄԲԵՐԻ 25-Ի ՆՀ-107-Ն ՀՐԱՄԱՆԱԳՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ  
ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 38-րդ հոդվածը՝ **ո ր ո շ ու մ եմ**.

1. Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի «Արցախի Հանրապետության կառավարության կառուցվածքի սահմանումից բխող մի շարք միջոցառումների մասին» ՆՀ-107-Ն հրամանագրի (այսուհետ՝ հրամանագիր) 5-րդ կետով հաստատված՝ Արցախի Հանրապետության Նախագահի աշխատակազմի կանոնադրության՝

1) 14-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.1-ին ենթակետով՝

«2.1) «Հայաստանի Հանրապետությունում Արցախի Հանրապետության կառավարության օպերատիվ շտաբ» առանձնացված ստորաբաժանումը».

2) 17-րդ կետի 3-րդ ենթակետում՝

ա. «Արցախի Հանրապետության Նախագահի աշխատակազմի կառավարության գործերի կառավարչության պետին,» բառերից հետո լրացնել «Արցախի Հանրապետության Նախագահի աշխատակազմի Հայաստանի Հանրապետությունում Արցախի Հանրապետության կառավարության օպերատիվ շտաբի պետին» բառերը,

բ. «Արցախի Հանրապետության Նախագահի աշխատակազմի կառավարության գործերի կառավարչության պետի տեղակալներին» բառերից հետո լրացնել «Արցախի Հանրապետության Նախագահի աշխատակազմի Հայաստանի Հանրապետությունում Արցախի Հանրապետության կառավարության օպերատիվ շտաբի պետի տեղակալներին» բառերը.

3) 22-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«22. Սույն կանոնադրության 19-րդ կետի 10-12-րդ ենթակետերում նշված գործառնությունները աշխատակազմի առանձնացված ստորաբաժանումների մասով իրականացվում են կառավարության գործերի կառավարչության պետի և օպերատիվ շտաբի պետի կողմից».

4) կանոնադրության 46-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«46. «Կառավարության գործերի կառավարչություն» և «Հայաստանի Հանրապետությունում Արցախի Հանրապետության կառավարության օպերատիվ շտաբ» առանձնացված ստորաբաժանումները Արցախի Հանրապետության Նախագահի կողմից հաստատված կանոնադրության հիման վրա ապահովում են Արցախի Հանրապետության Նախագահին որպես գործադիր իշխանության ղեկավարի, և կառավարությանը վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացումը, Արցախի Հանրապետության կառավարության բնականոն գործունեությունը և քաղաքացիական իրավահարաբերություններին նրա մասնակցությունը»:

2. Հրամանագրի 5-րդ կետով հաստատված՝ Արցախի Հանրապետության Նախագահի աշխատակազմի կառուցվածքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 3.1-ին և 18.1-ին կետերով՝

«3.1. Հայաստանի Հանրապետությունում Արցախի Հանրապետության կառավարության օպերատիվ շտաբի պետ:

18.1. Հայաստանի Հանրապետությունում Արցախի Հանրապետության կառավարության օպերատիվ շտաբ»:

3. Սույն հրամանագիրն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2021թ. մարտի 22  
Ստեփանակերտ  
ՆՀ-1538-Ն



ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

17 մարտի 2021թ.

N 222-Ն

ք. Ստեփանակերտ

**2020 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 27-ԻՆ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԴԵՍ ՍԱՆՁԱԶԵՐԾՎԱԾ ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԴԺՎԱՐ ԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՀԱՅՏՆՎԱԾ ՖԻԶԻԿԱԿԱՆ  
ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԿՍՏԱՐՄԱՆ ՈՒՂՂՎԱԾ ՊԵՏԱԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԶԱԿՅՈՒԹՅԱՆ  
ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով հաստատված կարգի 3-րդ կետով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է**.

1. Հաստատել 2020 թվականի սեպտեմբերի 27-ին Արցախի Հանրապետության դեմ սանձազերծված պատերազմական գործողությունների հետևանքով դժվար կացության մեջ հայտնված ֆիզիկական և իրավաբանական անձանց վարկային պարտավորությունների կատարմանն ուղղված պետական ֆինանսական աջակցության ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր)՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ՝

1) Ծրագրով սահմանված՝ հիփոթեքային, սպառողական և բիզնես վարկային պարտավորությունների կատարմանն ուղղված աջակցության գործընթացներն իրականացվում են Արցախի ներդրումային հիմնադրամի միջոցով.

2) Ծրագրով սահմանված՝ գյուղատնտեսության բնագավառում ձեռնարկատիրական գործունեության հետ կապված վարկային պարտավորությունների կատարմանն ուղղված աջակցության գործընթացն իրականացվում է Արցախի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամի միջոցով:

3. Արցախի Հանրապետության պետական կառավարման մարմիններին՝ Ծրագրի իրականացման արդյունավետությունն ապահովելու նպատակով Արցախի ներդրումային հիմնադրամին և Արցախի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամին (այսուհետ՝ հիմնադրամներ) ցուցաբերել գործնական աջակցություն և տրամադրել տեղեկություններ՝ նրանց կողմից պահանջված ձևին համապատասխան:

4. Առաջարկել.

1) տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարներին՝ սերտ համագործակցել հիմնադրամների հետ՝ ցուցաբերելով գործնական աջակցություն և տրամադրելով տեղեկություններ՝ նրանց կողմից պահանջված ձևին համապատասխան.

2) հիմնադրամներին՝

ա. տասնօրյա ժամկետում ընդունել Ծրագրի դրույթներին համապատասխան գործընթացները կարգավորող ընթացակարգեր, մեկամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության տարածքում գործող բանկերի և վարկային կազմակերպությունների (այսուհետ՝ ֆինանսավարկային կազմակերպություններ) հետ կնքել համագործակցության պայմանագրեր և ստեղծել շահառուների տվյալների միասնական շտեմարան,

բ. եռամսյա պարբերականությամբ, մինչև եռամսյակին հաջորդող ամսվա 15-ն Արցախի Հանրապետության պետական նախարար, ֆինանսների նախարարին ներկայացնել հաշվետվություն կատարված աշխատանքների մասին.

3) հիմնադրամներին և ֆինանսավարկային կազմակերպություններին՝ էթե Օրագրի շահառու ճանաչված անձի վարկային պարտավորությունների մասով առկա է օրինական ուժի մեջ մտած դատական ակտ, որը գտնվում է հարկադիր կատարման ընթացքում, ապա տվյալ պարտավորության վերակառուցման, վերաֆինանսավորման կամ ներման մասին որոշումը կայացնելուց հետո մեկամսյա ժամկետում դիմել դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայություն՝ համապատասխան կատարողական թերթը վերադարձնելու և «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի «ժ» կետի համաձայն կատարողական վարույթն ավարտելու համար:

5. Մույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, իսկ դրա գործողությունը տարածվում է 2020 թվականի սեպտեմբերի 27-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

**«Հաստատում եմ»**

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ**

**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**Ծ Ր Ա Գ Ի Ր**

**2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԵՊՏԵՄԲԵՐԻ 27-ԻՆ ԱՐԳԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՄ  
ՍԱՆՁԱԶԵՐԾՎԱԾ ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ  
ԴԺՎԱՐ ԿԱՅՈՒԽԵՏԱՆ ՄԵՋ ՀԱՅՏՆՎԱԾ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ  
ԱՆՁԱՆՑ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ  
ՈՒՂՎԱԾ ՊԵՏԱԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ**

**1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

1. 2020 թվականի սեպտեմբերի 27-ին Արցախի Հանրապետության դեմ սանձազերծված պատերազմական գործողությունների հետևանքով դժվար կացության մեջ հայտնված ֆիզիկական և իրավաբանական անձանց վարկային պարտավորությունների կատարմանն ուղղված պետական աջակցության ծրագիրը (այսուհետ՝ ծրագիր) նպատակ ունի նպաստել 2020 թվականի սեպտեմբերի 27-ին Արցախի Հանրապետության դեմ սանձազերծված պատերազմական գործողությունների հետևանքով դժվար կենսապայմաններում հայտնված բնակչության ֆինանսական վիճակի թեթևացմանը, սոցիալական ու հոգեկան լարվածության թուլացմանը, արտագաղթի կանխմանը, ինչպես նաև խթանել ներդրումները, գործարարությունն ու տնտեսական ակտիվությունը և նպաստել բանկային համակարգի ֆինանսական կայունության պահպանմանը:

2. Ծրագրում կիրառվող հիմնական հասկացություններն են.

1) **շահառու**՝ մինչև 2020 թվականի սեպտեմբերի 27-ը Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության տարածքում գործող բանկերի և/կամ վարկային կազմակերպությունների (այսուհետ՝ միասին՝ ֆինանսավարկային կազմակերպություններ) հետ վարկային և/կամ Արցախի ներդրումային հիմնադրամի և/կամ Արցախի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամի (այսուհետ՝ երկուսը միասին՝ հիմնադրամներ), (ընդհանրական կիրառելիս՝ պարտատեր) հետ փոխառության պայմանագիր կնքած և ֆինանսավորված՝

ա. ֆիզիկական անձ (կամ նրա ամուսին), ով 2020 թվականի սեպտեմբերի 27-ի դրությամբ հաշվառված և փաստացի բնակվում էր կամ ում աշխատանքի վայրը գտնվում էր Արցախի Հանրապետությունում, բացառությամբ գորահավաքային գորակոչով չնեղկայացած Արցախի Հանրապետության պահեստագորային կամ նրա ամուսին կամ համատեղությամբ բնակվող ծնող կամ համատեղությամբ բնակվող զավակ,

բ. Արցախի Հանրապետության ռեզիդենտ իրավաբանական անձ (բացառությամբ ոչ առևտրային կազմակերպությունների), որի միակ մասնակիցը (բաժնետերը) կամ կանոնադրական կապիտալի ավելի քան գումարային 60 տոկոս մասնակցություն ունեցող մասնակիցները բավարարում են սույն ենթակետի «ա» պարբերությամբ սահմանված պահանջը.

2) **աջակցություն**՝ Արցախի Հանրապետության կողմից շահառուի փոխարեն նրա վարկային պարտավորությունների լրիվ կամ մասնակի կատարում և/կամ փոխհատուցում՝ միանվագ և/կամ տարաժամկետ և/կամ հիմնադրամների կողմից շահառուի պարտավորությունների ներում.

3) **լրացուցիչ աջակցություն**՝ շահառուների որոշ խմբերի վարկային պարտավորությունների կատարմանն ուղղված ֆինանսական աջակցություն, բացի ծրագրի 5-րդ, 11-րդ և 16-րդ կետերում նշված աջակցությունից.

4) **հիփոթեքային վարկ**՝ ֆինանսավարկային կազմակերպությունների և/կամ Արցախի ներդրումային հիմնադրամի կողմից Արցախի Հանրապետության տարածքում բնակարանի կամ բնակելի տան (այսուհետ՝ բնակտարածք) գնման կամ կառուցման և/կամ բնակտարածքի վերանորոգման նպատակով տրամադրված վարկ և/կամ փոխառություն և/կամ պարտավորության տարաժամկետ վճարման իրավունք.

5) **բիզնես վարկ**՝ ֆինանսավարկային կազմակերպությունների և/կամ հիմնադրամների կողմից Արցախի Հանրապետության տարածքում առևտրային կամ

գյուղատնտեսական գործունեության նպատակով տրամադրված վարկ և/կամ փոխառություն և/կամ լիզինգ և/կամ ֆակտորինգ.

**6) գյուղատնտեսական վարկ`** անհատ ձեռնարկատերերին և գյուղացիական տնտեսություն վարող ֆիզիկական անձանց Արցախի Հանրապետության տարածքում գյուղատնտեսական գործունեության նպատակով տրամադրված վարկ և/կամ փոխառություն և/կամ լիզինգ և/կամ ֆակտորինգ.

**7) սպառողական վարկ`** ֆինանսավարկային կազմակերպությունների կողմից բացառապես ֆիզիկական անձանց անձնական, ընտանեկան, տնային կամ այլ օգտագործման համար նախատեսված, ձեռնարկատիրական գործունեության հետ չկապված ապրանքներ (աշխատանքներ, ծառայություններ) պատվիրելու կամ ձեռք բերելու նպատակով տրամադրված վարկ (բացառությամբ շահառուի կամ նրա ամուսնու կամ համատեղությամբ բնակվող ծնողի կամ համատեղությամբ բնակվող զավակի դրամական միջոցների գրավադրմամբ վարկի), պարտավորության տարածամեկետ վճարման իրավունք և/կամ հիմնադրամների կողմից ֆիզիկական անձանց տրամադրված նպատակային փոխառություն.

**8) վարկային պարտավորություն`** 2020 թվականի սեպտեմբերի 27-ի դրությամբ, եթե սույն ծրագրով այլ ամսաթիվ նշված չէ, սույն կետի 4-րդ, 5-րդ, 6-րդ և 7-րդ ենթակետերում նշված վարկի (փոխառության), այդ թվում` 2020 թվականի սեպտեմբերի 27-ից հետո նշված վարկերի վերակառուցման կամ վերաֆինանսավորման (առանց տուժանքների) հետևանքով ձևավորված պարտավորության մայր գումարի, հաշվեգրված տոկոսագումարի և սպասարկման վճարի մնացորդ: Միննույն վարկի համար դրամական միջոցների և այլ գրավի առկայության դեպքում` ծրագրով սահմանված աջակցություն տրամադրելու համար, որպես վարկային պարտավորություն է դիտարկվում սույն ենթակետով նշված վարկային պարտավորության և գրավադրված դրամական միջոցների գումարի տարբերությունը.

**9) ժամանակացույց`** վարկային (փոխառության) պայմանագրով սահմանված վարկի (փոխառության), տոկոսագումարների և սպասարկման վճարի մարման ժամանակացույց.

**10) գույք`** անշարժ և շարժական գույք.

**11) ակտիվ`** հիմնական և շրջանառու միջոցներ.

**12) գյուղացիական տնտեսություն վարող ֆիզիկական անձ`** գյուղատնտեսության հետ անմիջականորեն կապված տնտեսական գործունեություն իրականացնող անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձ.

**13) պատերազմական գործողություններ`** 2020 թվականի սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի կողմից Արցախի Հանրապետության դեմ սանձազերծված պատերազմական գործողություններ:

3. Ծրագրի շահառուների խմբերն են.

1) պատերազմական գործողությունների ժամանակ Արցախի Հանրապետության պաշտպանության մարտական գործողություններին մասնակցելու կամ հակառակորդի հետ շփման գծում մարտական հերթապահություն կամ հատուկ առաջադրանք կատարելու ժամանակ կամ հակառակորդի նախահարձակ գործողության հետևանքով`

ա. զոհված, մահացած, 1-ին խմբի հաշմանդամություն ձեռք բերած, անհայտ բացակայող համարվող անձ կամ նրա ամուսին կամ համատեղությամբ բնակվող զավակ կամ համատեղությամբ բնակվող ծնող,

բ. 2-րդ խմբի հաշմանդամություն ձեռք բերած անձ կամ նրա ամուսին կամ համատեղությամբ բնակվող զավակ կամ համատեղությամբ բնակվող ծնող,

գ. 3-րդ խմբի հաշմանդամություն ձեռք բերած անձ կամ նրա ամուսին.

2) առնվազն մինչև 2020 թվականի նոյեմբերի 10-ը չգորացրված և մարտական գործողություններին մասնակցած Արցախի Հանրապետության պաշտպանության բանակի զինծառայող կամ պատերազմական գործողությունների ժամանակահատվածում զորահավաքային զինվորական ծառայության անցած անձ կամ Արցախի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության ծառայող կամ Արցախի Հանրապետության ոստիկանության ծառայող կամ Արցախի Հանրապետության արտակարգ իրավիճակների ծառայության ծառայող, ով ընդգրկված է սույն ենթակետում նշված մարմինների կողմից հիմնադրամներին տրամադրված ցուցակներում կամ նրա ամուսինն է.

3) պատերազմական գործողությունների հետևանքով Ադրբեջանի կողմից բռնազավթված համայնքներում հաշվառված (ամուսիններից առնվազն մեկը) և մինչև 2020 թվականի սեպտեմբերի 27-ը առնվազն վերջին 3 ամիսներին փաստացի բնակված ֆիզիկական անձ (կամ նրա ամուսին) կամ ում (ամուսիններից առնվազն մեկի) աշխատանքի վայրը գտնվում էր սույն ենթակետում նշված համայնքներում:

4) պատերազմական գործողությունների հետևանքով Ադրբեջանի կողմից բռնազավթված տարածքներում վարկերի հաշվին ձևավորված և/կամ ձևավորման փուլում գտնվող անշարժ գույքի սեփականատեր ֆիզիկական և իրավաբանական անձ:

5) Արցախի Հանրապետության ֆիզիկական և իրավաբանական անձ, որի ձևավորված և/կամ ձևավորման փուլում գտնվող գույքը կամ ակտիվը, անկախ գրավի առարկա լինելու հանգամանքից, հանդիսացել է (կհանդիսանար) վարկի մարման աղբյուր և մասամբ կամ ամբողջությամբ մնացել է Ադրբեջանի կողմից բռնազավթված տարածքներում կամ մասամբ կամ ամբողջությամբ ոչնչացվել է պատերազմական գործողությունների հետևանքով:

6) ծրագրի 2-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված պահանջներին համապատասխանող, սակայն սույն կետի 1-5-րդ ենթակետերում չընդգրկված ֆիզիկական կամ իրավաբանական անձ:

## **2. ԾՐԱԳՐԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ**

### **2.1 ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆԸ**

4. Շահառուն, բացառությամբ ծրագրի 3-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերությունում և 4-րդ ենթակետում նշված, ինչպես նաև ուսումնառության կամ բուժման նպատակով Արցախի Հանրապետության տարածքից դուրս գտնվող շահառուների, սույն ենթաբաժնով սահմանված աջակցությունից օգտվում է աջակցության ստացման ողջ ժամանակահատվածում Արցախի Հանրապետությունում փաստացի բնակվելու դեպքում:

5. 2020 թվականի սեպտեմբերի 27-ի դրությամբ հիփոթեքային վարկային պարտավորություններ ունեցող շահառուին տրվում է աջակցություն՝ 2020 թվականի սեպտեմբերի 27-ից մինչև 2023 թվականի հոկտեմբերի 1-ն ընկած ժամանակահատվածում շահառուի՝ ժամանակացույցով նախատեսված վճարումներին համապատասխան: Շահառուի հիփոթեքային վարկերի 2020 թվականի սեպտեմբերի 27-ի դրությամբ մայր գումարների մնացորդների հանրագումարը 30 000 000.0 ՀՀ դրամը գերազանցելու դեպքում՝ աջակցությունը տրվում է 30 000 000.0 ՀՀ դրամի հաշվարկով:

6. Ծրագրի 3-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերությունում նշված շահառուին, ինչպես նաև հիմնադրամներում հիփոթեքային փոխառության գծով պարտավորություն ունեցող ծրագրի 3-րդ կետի 4-րդ ենթակետում նշված շահառուին (տվյալ գույքի մասով) տրվում է աջակցություն՝ 2020 թվականի սեպտեմբերի 27-ի դրությամբ ձևավորված հիփոթեքային վարկի (փոխառության) պարտավորությունների ողջ գումարի չափով, առանց ծրագրի 5-րդ կետում նշված սահմանափակման կիրառման:

7. Ծրագրի 3-րդ կետի 1-ին ենթակետի «բ», «գ» պարբերություններում և 2-րդ ենթակետում նշված շահառուին տրվում է լրացուցիչ աջակցություն՝ ծրագրի 23-րդ, 24-րդ և 25-րդ կետերով սահմանված չափերով և կարգով: Նույն բնակտարածքի համար հիփոթեքային վարկային պարտավորություններ ունեցող սույն կետում նշված շահառուներին տրվում է միայն մեկ լրացուցիչ աջակցություն:

8. 2020 թվականի սեպտեմբերի 27-ից հետո հիփոթեքային վարկի (փոխառության) մայր գումարների, տոկոսագումարների և սպասարկման վճարների գծով փաստացի վճարված (մարված) գումարները, պարտատիրոջ կողմից տրամադրված տեղեկանքի հիման վրա վերադարձվում են շահառուին՝ նրա բանկային հաշվեհամարին փոխանցելու միջոցով: Ժամանակացույցով փաստացի վճարված գումարները վերադարձվում են մինչև 2021 թվականի սեպտեմբերի 1-ը, իսկ վաղաժամկետ կատարված վճարումները՝ ժամանակացույցին համապատասխան: Վերադարձվող գումարի նկատմամբ կիրառվում են ծրագրի 5-րդ և 6-րդ կետերով սահմանված պայմանները, ինչպես նաև հաշվանցվում է «Եկամտային հարկի» մասին օրենքի 9.1-ին հոդվածին համապատասխան՝ շահառուի կողմից վճարված եկամտային

հարկի գումարից նրա հիփոթեքային վարկի սպասարկման համար վճարված տոկոսագումարը:

9. Շահառուի կողմից, բացառությամբ ծրագրի 3-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերությունում նշված շահառուի, մինչև 2025 թվականի հոկտեմբերի 1-ը բնակտարածքը (նաև հիփոթեքով վերանորոգված) օտարելու դեպքում՝ ծրագրի շրջանակում ստացած աջակցության գումարը եռօրյա ժամկետում վերադարձվում է Արցախի Հանրապետության պետական բյուջե:

## **2.2 ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՄՊԱՌՈՂԱԿԱՆ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆԸ**

10. Սույն ենթաբաժնով սահմանված աջակցությունից օգտվում է այն շահառուն, ով առնվազն աջակցության ստացման ողջ ժամանակահատվածում փաստացի բնակվում է Արցախի Հանրապետությունում, բացառությամբ ծրագրի 3-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերությունում և 3-րդ ենթակետում նշված, ինչպես նաև ուսումնառության կամ բուժման նպատակով Արցախի Հանրապետության տարածքից դուրս գտնվող շահառուների:

11. 2020 թվականի սեպտեմբերի 27-ի դրությամբ սպառողական վարկային պարտավորություններ ունեցող շահառուին տրվում է աջակցություն՝ 2020 թվականի սեպտեմբերի 27-ից մինչև 2023 թվականի հոկտեմբերի 1-ն ընկած ժամանակահատվածում շահառուի՝ ժամանակացույցով նախատեսված վճարումներին համապատասխան: Շահառուի սպառողական վարկերի 2020 թվականի սեպտեմբերի 27-ի դրությամբ մայր գումարների մնացորդների հանրագումարը 3 000 000.0 ՀՀ դրամը գերազանցելու դեպքում՝ աջակցությունը տրվում է 3 000 000.0 ՀՀ դրամի հաշվարկով: Օվերդրաֆտի/վարկային գծի պարագայում, որպես պարտավորության մայր գումարի մեծություն ընդունվում է 2020 թվականի սեպտեմբերի 27-ից մինչև դեկտեմբերի 1-ն ընկած ժամանակահատվածում օվերդրաֆտի/վարկային գծի օգտագործված մասի առավելագույն չափը:

12. 2020 թվականի սեպտեմբերի 27-ի դրությամբ ձևավորված պարտավորությունների ողջ գումարի չափով, առանց ծրագրի 11-րդ կետում նշված սահմանափակման կիրառման տրվում է աջակցություն՝

1) ծրագրի 3-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերությունում նշված շահառուին.

2) ծրագրի 3-րդ կետի 3-րդ ենթակետում նշված շահառուին՝ հիմնադրամներում ունեցած պարտավորությունների մասով:

13. Ծրագրի 3-րդ կետի 1-ին ենթակետի «բ», «գ» պարբերություններում և 2-րդ ենթակետում նշված շահառուներին տրվում է լրացուցիչ աջակցություն՝ ծրագրի 23-րդ, 24-րդ և 25-րդ կետերով սահմանված չափերով և կարգով:

14. 2020 թվականի սեպտեմբերի 27-ից հետո վարկի (փոխառության) մայր գումարների, տոկոսագումարների և սպասարկման վճարների գծով փաստացի վճարված (մարված) գումարները, պարտատիրոջ կողմից տրամադրված տեղեկանքի հիման վրա վերադարձվում են շահառուին՝ վճարված գումարը նրա բանկային հաշվեհամարին փոխանցելու միջոցով: Ժամանակացույցով փաստացի վճարված գումարները վերադարձվում են մինչև 2021 թվականի սեպտեմբերի 1-ը, իսկ վաղաժամկետ կատարված վճարումները՝ ժամանակացույցին համապատասխան: Վերադարձվող գումարի նկատմամբ կիրառվում են ծրագրի 11-րդ և 12-րդ կետերով սահմանված պայմանները:

## **2.3 ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԲԻԶՆԵՍ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆԸ**

15. Սույն ենթաբաժնում սահմանված աջակցությունից օգտվում է այն շահառուն, որն աջակցության ժամանակահատվածում (բացառությամբ 2020 թվականի հոկտեմբեր և նոյեմբեր ամիսների) Արցախի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի տեղեկատվական բազայում առկա տեղեկատվության, իսկ ծրագրի 2-րդ կետի 12-րդ ենթակետով նշված անձի դեպքում՝ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից տրված տեղեկանքի համաձայն իրականացնում է տնտեսական գործունեություն, բացառությամբ ծրագրի 3-րդ կետի 3-

րդ, 4-րդ և 5-րդ ենթակետերում նշված, ինչպես նաև բուժման նպատակով Արցախի Հանրապետության տարածքից դուրս գտնվող շահառուների:

16. 2020 թվականի սեպտեմբերի 27-ի դրությամբ՝

1) բիզնես վարկային պարտավորություններ ունեցող շահառուին, բացառությամբ գրավատների, արտարժույթի առք ու վաճառքի և արտարժույթի դիլերային-բրոքերային առք ու վաճառքի, մետաղական օգտակար հանածոների արդյունահանման և (կամ) մետաղի խտանյութի արտադրության (վերամշակման), վառելիքաէներգետիկ հումքի արդյունահանման և (կամ) արտադրության (վերամշակման) գործունեություն իրականացնող անձանց, էլեկտրական էներգիայի արտադրության, էլեկտրական էներգիայի և բնական գազի հաղորդման, բաշխման և (կամ) մատակարարման և հեռահաղորդակցության (էլեկտրոնային հաղորդակցության) բնագավառում լիցենզավորված գործունեություն իրականացնող անձանց, ինչպես նաև սույն կետի 2-րդ ենթակետում նշված շահառուների, տրամադրվում է աջակցություն՝ ժամանակացույցով նախատեսված՝ 2020 թվականի սեպտեմբերի 27-ից մինչև 2021 թվականի ապրիլի 1-ը հաշվեգրված տոկոսագումարների չափով, բայց ոչ ավել, քան 15 000 000.0 ՀՀ դրամը:

2) գյուղատնտեսական վարկային պարտավորություններ ունեցող շահառուին տրվում է աջակցություն՝ 2020 թվականի սեպտեմբերի 27-ից մինչև 2023 թվականի հոկտեմբերի 1-ն ընկած ժամանակահատվածում շահառուի՝ ժամանակացույցով նախատեսված վճարումներին համապատասխան: Շահառուի գյուղատնտեսական վարկերի 2020 թվականի սեպտեմբերի 27-ի դրությամբ մայր գումարների մնացորդների հանրագումարը 3 000 000.0 ՀՀ դրամը գերազանցելու դեպքում՝ աջակցությունը տրվում է 3 000 000.0 ՀՀ դրամի հաշվարկով:

17. 2020 թվականի սեպտեմբերի 27-ի դրությամբ հիմնադրամներում մինչև 30 000 000.0 ՀՀ դրամ վարկային պարտավորություն ունեցող շահառուի դիմումի համաձայն՝ 2020 թվականի սեպտեմբերի 27-ից մինչև 2021 թվականի սեպտեմբերի 1-ը ժամանակահատվածի համար բիզնես վարկի ժամանակացույցով նախատեսված մայր գումարի մասով վճարումները կարող են բաշխվել վարկի մարման հետագա ժամկետի վրա կամ տեղափոխվել վարկի մարման վերջնաժամկետին հաջորդող ամիսներ: 2020 թվականի սեպտեմբերի 27-ից մինչև 2021 թվականի սեպտեմբերի 1-ը վարկի վերջնաժամկետը լրանալու դեպքում մայր գումարի մարումը կարող է հետաձգվել մինչև 2021 թվականի դեկտեմբերի 31-ը:

18. Ծրագրի 3-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերությունում նշված՝ անհատ ձեռնարկատեր և/կամ գյուղացիական տնտեսություն վարող շահառուին տրամադրվում է 2020 թվականի սեպտեմբերի 27-ի դրությամբ ձևավորված բիզնես վարկային պարտավորությունների, ոչ ավել, քան 30 000 000.0 ՀՀ դրամի չափով՝ միանվագ կամ ժամանակացույցով նախատեսված կարգով հատուցման աջակցություն:

19. Ծրագրի 3-րդ կետի 1-ին ենթակետի «բ», «գ» պարբերություններում և 2-րդ ենթակետում նշված՝ անհատ ձեռնարկատեր և/կամ գյուղացիական տնտեսություն վարող շահառուին տրվում է լրացուցիչ աջակցություն՝ ծրագրի 23-րդ, 24-րդ և 25-րդ կետերով սահմանված չափերով և կարգով:

20. Ծրագրի 3-րդ կետի 4-րդ ենթակետում նշված շահառուին տրամադրվում է աջակցություն՝ պատերազմական գործողությունների հետևանքով Ադրբեյջանի կողմից բռնազավթված տարածքներում գտնվող անշարժ գույքի հետ անմիջականորեն կապված՝ հիմնադրամներում ունեցած բիզնես վարկային պարտավորությունների կատարմանը՝ այդ պարտավորությունների չափով:

21. Ծրագրի 3-րդ կետի 5-րդ ենթակետում նշված շահառուին տրամադրվում է աջակցություն՝ ուղղված 2020 թվականի սեպտեմբերի 27-ի դրությամբ հիմնադրամներում ձևավորված բիզնես վարկային պարտավորությունների կատարմանը՝ արձանագրված կորստին համամասնական չափով, բայց ոչ ավել, քան կորստի չափը: Կորստի ու դրա չափի արձանագրումը կատարվում է հիմնադրամների ընթացակարգերով սահմանված կարգով:

22. Ժամանակացույցով 2020 թվականի սեպտեմբերի 27-ից հետո ծրագրի 16-րդ կետի 1-ին ենթակետում նշված շահառուի բիզնես վարկի տոկոսագումարների, ինչպես նաև ծրագրի 16-րդ կետի 2-րդ ենթակետում նշված շահառուի գյուղատնտեսական վարկի (փոխառության) մայր գումարների, տոկոսագումարների և սպասարկման վճարների գծով փաստացի վճարված (մարված) գումարները մինչև 2021 թվականի սեպտեմբերի 1-ը վերադարձվում են շահառուին: Ծրագրի 16-րդ կետի 2-րդ ենթակետում նշված շահառուի գյուղատնտեսական վարկի (փոխառության) մայր

գումարների, տոկոսագումարների և սպասարկման վճարների գծով վաղաժամկետ վճարված գումարները վերադարձվում են շահառուին ժամանակացույցին համապատասխան: Գումարի վերադարձն իրականացվում է պարտատիրոջ կողմից տրամադրված տեղեկանքի հիման վրա՝ վճարված գումարը շահառուի բանկային հաշվեհամարին փոխանցելու միջոցով: Վերադարձվող գումարի նկատմամբ կիրառվում են ծրագրի 16-րդ և 18-րդ կետերով սահմանված պայմանները:

**2.4 ԼՐԱՅՈՒՑԻՉ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ՝ ՈՒՂՂՎԱԾ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ՈՐՈՇ ԽՄԲԵՐԻ ՀԻՓՈԹԵՔՍՅՈՒՆ, ՄՊԱՌՈՂԱԿԱՆ ԵՎ ԲԻԶՆԵՍ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆԸ**

23. Ծրագրի 3-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերությունում նշված շահառուին կամ առաջնահերթության կարգով նրա ամուսնուն կամ համատեղությամբ բնակվող զավակին կամ համատեղությամբ բնակվող ծնողին՝ վարկային պարտավորություն ունենալու դեպքում, բացի ծրագրի 5-րդ, 11-րդ և 16-րդ կետերում նշված աջակցությունից, ընդհանուր տրվում է մինչև 7 000 000.0 ՀՀ դրամ լրացուցիչ աջակցություն:

24. Ծրագրի 3-րդ կետի 1-ին ենթակետի «գ» պարբերությունում նշված շահառուին կամ նրա ամուսնուն վարկային պարտավորություն ունենալու դեպքում, բացի ծրագրի 5-րդ, 11-րդ և 16-րդ կետերում նշված աջակցությունից, տրվում է մինչև 5 000 000.0 ՀՀ դրամ լրացուցիչ աջակցություն:

25. Ծրագրի 3-րդ կետի 2-րդ ենթակետում նշված շահառուին կամ նրա ամուսնուն, վարկային պարտավորություն ունենալու դեպքում, բացի ծրագրի 5-րդ, 11-րդ և 16-րդ կետերում նշված աջակցությունից, տրվում է մինչև 3 000 000.0 ՀՀ դրամ լրացուցիչ աջակցություն:

26. Ծրագրի 23-րդ, 24-րդ և 25-րդ կետերում նշված լրացուցիչ աջակցության գումարը առաջնահերթության կարգով ուղղվում է հիփոթեքային, գյուղատնտեսական, սպառողական և բիզնես (բացի գյուղատնտեսական) վարկերի մայր գումարների մարմանը՝ միանվագ կամ 2020 թվականի սեպտեմբերի 27-ից մինչև 2023 թվականի հոկտեմբերի 1-ը տարաժամկետ վճարմամբ:

**3. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

27. Ծրագրով սահմանված աջակցությունն իրականացվում է հիմնադրամների միջոցով:

28. Ծրագրի դրույթներին համապատասխան գործընթացները կարգավորող ընթացակարգերը և մեթոդական ցուցումները ընդունում են հիմնադրամները:

29. Ծրագրով սահմանված աջակցության իրագործման նպատակով հիմնադրամները ֆինանսավարկային կազմակերպությունների հետ կնքում են համագործակցության և սույն ծրագրից բխող այլ պայմանագրեր ու փաստաթղթեր, որոնց դրույթները չպետք է հակասեն սույն ծրագրով սահմանված պահանջներին:

30. Ծրագրով չնախատեսված և դրա դրույթներին չհակասող, սակայն շահառուի և պարտատիրոջ փոխհարաբերություններում առաջինի հնարավորությունները բարելավող պայմանները կարող են սահմանվել հիմնադրամների կողմից և ընդգրկվել ծրագրի 28-րդ և/կամ 29-րդ կետերում նշված փաստաթղթերում կամ դրանց լրացումներում ու փոփոխություններում:

31. Աջակցության գումարը չի կարող արգելադրվել (դրվել արգելանքի տակ), բռնագանձվել կամ հաշվանցվել շահառուի այլ պարտավորությունների (տուժանքների) դիմաց:

32. Շահառուների տվյալների միասնական շտեմարանը ստեղծվում է Արցախի ներդրումային հիմնադրամում:

33. Հիմնադրամներն աջակցում են շահառուներին՝ ծրագրով սահմանված պետական աջակցությունից օգտվելու նպատակով ներկայացվող փաստաթղթերի ստացման, ծագող իրավունքների ու պարտականությունների պարզաբանման և միջնորդություն իրականացնող այլ կազմակերպությունների հետ հարաբերությունների ընթացքում:

34. Շահառուի միևնույն վարկատեսակի գծով մեկից ավելի պարտատերերի մոտ վարկային պարտավորությունների մնացորդների առկայության և դրանց՝ ծրագրով սահմանված համապատասխան սահմանաչափը գերազանցելու դեպքում՝



1) աջակցությունն առաջնահերթության կարգով ուղղվում է ավելի կարճ մարման մնացորդային ժամկետ ունեցող վարկային պարտավորության կատարմանը, բացառությամբ սույն կետի 2-րդ ենթակետով սահմանված դեպքերի:

2) միաժամանակ հիմնադրամների և ֆինանսավարկային կազմակերպությունների հանդեպ պարտավորություն ունենալու դեպքում՝ աջակցությունն առաջնահերթության կարգով տրվում է հիմնադրամների հանդեպ պարտավորությունների կատարմանը:

35. Հիմնադրամների կողմից բռնագանձման արդյունքում հիմնադրամներին սեփականության իրավունքով փոխանցված կամ ֆինանսավարկային կազմակերպությունների կողմից բռնագանձված և հիմնադրամներին օտարված բնակելի տարածքն անհատույց օտարվում է բնակելի տարածքի նախկին սեփականատեր՝ ծրագրի 3-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերությունում նշված շահառուին կամ նրա օրինական ժառանգներին:

36. Հիմնադրամների կողմից բռնագանձման արդյունքում հիմնադրամներին սեփականության իրավունքով փոխանցված կամ ֆինանսավարկային կազմակերպությունների կողմից բռնագանձված և հիմնադրամներին օտարված բնակելի տարածքի նախկին սեփականատիրոջ և հիմնադրամների միջև կարող է կնքվել հիփոթեքային փոխառության պայմանագիր՝ ծրագրի 37-րդ կետով սահմանված պայմանի ապահովմամբ և շահառուին ծրագրով սահմանված աջակցություն ստանալու իրավունքի վերապահմամբ:

37. Ծրագրի 2-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված պայմաններին բավարարող անձի, ծրագրի 2-րդ կետի 4-րդ, 6-րդ և 7-րդ ենթակետերում նշված՝ 2020 թվականի սեպտեմբերի 27-ի դրությամբ ժամկետանց (առանց տուժանքների ներառման) վարկային պարտավորությունները պարտատերերի կողմից վարկի վերակառուցման կամ վերաֆինանսավորման հետևանքով կարող են վերաբաշխվել՝ տարեկան կտրվածքով նախատեսելով ոչ ավել, քան 1 800 000.0 ՀՀ դրամ մայր գումարի մարում:

38. Ծրագրի 8-րդ, 14-րդ և 22-րդ կետերով սահմանված՝ վերադարձման ենթակա գումարները ստանալու նպատակով շահառուն համապատասխան հիմնադրամ է դիմում 2021 թվականի մայիսի 1-ից մինչև հուլիսի 1-ն ընկած ժամանակահատվածում:

39. Շահառուի՝ ուսումնառության կամ բուժման նպատակով Արցախի Հանրապետության տարածքից դուրս գտնվելու փաստը հիմնավորվում է համապատասխան հաստատությունից հիմնադրամ ներկայացված տեղեկանքով:

40. Աջակցության տրամադրումը դադարեցվում է՝

1) շահառուի դիմումի համաձայն:

2) շահառուի (բացառությամբ ծրագրի 3-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերությունում և 3-րդ ենթակետում նշված շահառուների, ինչպես նաև ուսումնառության կամ բուժման նպատակով Արցախի Հանրապետությունից ժամանակավորապես դուրս բնակվողների) աջակցության ստացման ժամանակահատվածում Արցախի Հանրապետությունում փաստացի չբնակվելու, ինչպես նաև ծրագրի 15-րդ կետով սահմանված պայմանի խախտման դեպքերում՝ փաստն արձանագրելու ամսվա աջակցությունը տրամադրված լինելու դեպքում՝ դրան հաջորդող ամսվա 1-ից:

3) շահառուի կողմից ծրագրի 5-րդ և 11-րդ կետերով, ինչպես նաև 16-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված համապատասխան սահմանաչափը գերազանցող վարկային պարտավորությունների մասով ժամանակացույցին համապատասխան անընդմեջ երեք հերթական վճարում չկատարելու դեպքում: Շահառուի կողմից սույն ենթակետով սահմանված պարտավորության չկատարման մասին հիմնադրամներին պատշաճ ձևով տեղեկացնում են ֆինանսավարկային կազմակերպությունները:

41. Հիմնադրամները, ծրագրի 40-րդ կետով սահմանված հիմքերով աջակցությունը դադարեցնելու մասին որոշում ընդունելու դեպքում երկու աշխատանքային օրվա ընթացքում պատշաճ ձևով տեղեկացնում են շահառուին և ֆինանսավարկային կազմակերպությանը:

42. Աջակցության ստացման ժամանակահատվածում Արցախի Հանրապետությունում շահառուի չբնակվելու, ինչպես նաև շահառուի կողմից ծրագրի 15-րդ կամ 39-րդ կետերով սահմանված պայմանների խախտման փաստերն արձանագրվում են Արցախի Հանրապետության տեղական ինքնակառավարման մարմինների, ոստիկանության, պետական եկամուտների կոմիտեի կողմից հիմնադրամներին պարբերաբար, ինչպես նաև ըստ անհրաժեշտության, տրամադրվող

տեղեկությունների հիման վրա, ինչպես նաև հիմնադրամների վերահսկողական գործառույթների իրականացման արդյունքում:

43. Շահառուի կողմից ծրագրի 40-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերով սահմանված հիմքերի վերացման դեպքերում վերականգնվում է աջակցության տրամադրումը՝ տվյալ ամսվան հաջորդող ամսվա 1-ից:

44. Ծրագրի ֆինանսավորումն իրականացվում է Արցախի Հանրապետության պետական բյուջեի և օրենսդրությամբ չարգելված ֆինանսավորման այլ աղբյուրների հաշվին:

**ԱՐՑԱՄԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ  
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ**

**Ա. ԼԱԶԱՐՅԱՆ**

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

18 մարտի 2021թ.

N 229-Ն

ք. Ստեփանակերտ

ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՑԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ  
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հոդային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի հուլիսի 31-ի N 380 որոշմամբ հաստատված՝ Արցախի Հանրապետության Ասկերանի շրջանի Աստղաշենի գյուղական համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում, համաձայն հավելվածի, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող՝ գյուղատնտեսական նպատակային նշանակության 0,12 հեկտար վարելահողը փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության՝ բնակելի կառուցապատման հողերի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

19 մարտի 2021թ.

N 232-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՄԻ 26-Ի N 306-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2015 թվականի մայիսի 26-ի «Հիփոթեքային վարկի սպասարկման համար վճարված տոկոսների գումարների չափով վարձու աշխատողների և անհատ ձեռնարկատերերի կողմից վճարված եկամտային հարկի գումարների վերադարձման կարգը սահմանելու մասին» N 306-Ն որոշմամբ սահմանված կարգում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) կարգի 4-րդ կետում «եկամտային հարկի (եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովության վճարների)» բառերը փոխարինել «տվյալ եռամսյակի բոլոր ամիսների համար ներկայացված եկամտային հարկի ամսական ամփոփ հաշվարկով հայտարարագրված եկամտային հարկի» բառերով.

2) կարգի 9-րդ կետի 1-ին ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1) այն ներկայացնելու պահին հարկային գործակալն (հարկային գործակալ չունեցող վարձու աշխատողը) ամբողջությամբ չի մարել տվյալ եռամսյակի բոլոր ամիսների համար հարկային մարմին ներկայացված՝ եկամտային հարկի ամփոփ (պարզեցված) հաշվարկով հայտարարագրված հարկային պարտավորությունը կամ անհատ ձեռնարկատերն ամբողջությամբ չի մարել տվյալ հաշվետու տարվա համար հարկային մարմին ներկայացված՝ տարեկան եկամուտների մասին հաշվարկով հայտարարագրված հարկային պարտավորությունը.»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, և դրա գործողությունը տարածվում է 2021 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

22 մարտի 2021թ.

N 240-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 19-Ի N 385-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ  
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի հունիսի 19-ի «Պաշտոնային դրույքաչափերի հաշվարկման գործակիցները սահմանելու, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2007 թվականի դեկտեմբերի 25-ի N 709 և 2009 թվականի հունվարի 29-ի N 33-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 385-Ն որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները.

1) որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված N 1 հավելվածում «ԱՀ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ» բաժնից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր բաժին.

«

	ԱՀ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀՀ-ՈՒՄ ԱՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՊԵՐԱՏԻՎ ՇՏԱԲ	
12.1	Շտաբի պետ	9,60
12.2	Շտաբի պետի տեղակալ	6,80
12.3	Շտաբի պետի օգնական	2,50
12.4	Բաժնի պետ	4,70
12.5	Գլխավոր մասնագետ	3,88
12.6	Առաջատար մասնագետ	2,66
12.7	Առաջին կարգի մասնագետ	1,68

».

2) որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետով սահմանված N 2 հավելվածի. ա. 1-ին տողում «ծառայության» բառից հետո լրացնել «, ԱՀ Նախագահի աշխատակազմի ՀՀ-ում ԱՀ կառավարության օպերատիվ շտաբի» բառերը, բ. 4-րդ տողից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր տողեր.

«

4.1	ԱՀ Նախագահի աշխատակազմի ՀՀ-ում ԱՀ կառավարության օպերատիվ շտաբի տնտեսվար	2,00
4.2	ԱՀ Նախագահի աշխատակազմի ՀՀ-ում ԱՀ կառավարության օպերատիվ շտաբի պահակ	1,50
4.3	ԱՀ Նախագահի աշխատակազմի ՀՀ-ում ԱՀ կառավարության օպերատիվ շտաբի հավաքարար	1,50

»:

2. Մույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, իսկ դրա գործողությունը տարածվում է 2021 թվականի մարտի 19-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԵՎ  
ԳՑՈՒՂԱՏՆԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

**Հ Ր Ա Մ Ա Ն**

«22» մարտի 2021թ.

N 59

ք.Ստեփանակերտ

**«ԴԱԴԱՍՅԱՆ» ՍԱՀՄԱՆԱՓՈՎԿ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ  
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՏՐՎԱԾ ԼԻՑԵՆԶԻԱՆ ՈՒՅԸ ԿՈՐՑՐԱԾ  
ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» օրենքի 20-րդ, 22-րդ հոդվածներով, 37-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի և 7-րդ մասի դրույթներով, հիմք ընդունելով Արցախի Հանրապետության գյուղատնտեսության ոլորտի լիցենզավորման հանձնաժողովի 2021 թվականի մարտի 22-ի N 04 եզրակացությունն ու «ԴԱԴԱՍՅԱՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2021 թվականի մարտի 17-ին ներկայացրած դիմումը՝

**ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝**

1. Ուժը կորցրած ճանաչել 2007 թվականի մարտի 12-ին «ԴԱԴԱՍՅԱՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրված բույսերի պաշտպանության քիմիական և կենսաբանական միջոցների արտադրության և (կամ) վաճառքի N 000001 լիցենզիան (այսուհետ՝ լիցենզիա):

2. Արցախի Հանրապետության էկոնոմիկայի և գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի իրավաբանական բաժնին ապահովել՝

1) լիցենզիայի գործողության դադարեցման մասին տեղեկության գրանցումը համապատասխան գրանցամատյանում.

2) սույն հրամանի առաքումն Արցախի Հանրապետության արդարադատության նախարարություն՝ հրապարակման համար:

**Արմեն Թովմասյան**

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ  
ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ**

**2021 թվականի մարտի 18-ի**

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԱՌԸՆԹԵՐ ՀԱՐԿԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ  
ՀՈՒՆՎԱՐԻ 22-Ի N 3-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ  
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**N 45-Ն**

**ՀՐԱՄԱՆ**

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝

**Հ Ր Ա Մ Ա Ց ՈՒ Մ Ե Մ՝**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության պետի 2014 թվականի հունվարի 22-ի «Ռեզիդենտների շահութահարկի հաշվարկի ձևն ու լրացման կարգը սահմանելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության 2010 թվականի հունվարի 20-ի N 1/Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 3-Ն հրամանով սահմանված հավելվածի՝

1) ռեզիդենտների շահութահարկի հաշվարկի ձևում՝

ա. «20» թվերը փոխարինել «18» թվերով, բացառությամբ աղյուսակ 5-ի,

բ. աղյուսակ 2-ի վերնագրում «բացառությամբ՝ բանկերի» բառերը փոխարինել «բացառությամբ բանկերի, վարկային կազմակերպությունների, ապահովագրական ընկերությունների և արժեթղթերի շուկայի մասնագիտացված անձանց» բառերով,

գ. լրացնել հետևյալ բովանդակությամբ աղյուսակ 2.1.

**«Աղյուսակ 2.1**

**Շահութահարկ վճարողների կողմից հաշվետու տարվա ընթացքում անհուսալի ճանաչված դեբիտորական և կրեդիտորական պարտքերը**

N	Անհուսալի դեբիտորական պարտքի գումարը	Անհուսալի կրեդիտորական պարտքի գումարը	Դուրսգրված ամսաթիվը	Դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելու ամսաթիվը	Դեբիտորական կամ կրեդիտորական պարտք ունեցող վյուս անձի տվյալները		
					Կազմակերպության անվանումը կամ ֆիզիկական անձի անունը, ազգանունը	ՀՀԿՀ	Գտնվելու վայրը կամ բնակության վայրը
1	2	3	4	5	6	7	8
1							
2							
3							
...							
Ընդամենը			x	x	x	x	x

դ. աղյուսակ 3-ում լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.1-ին կետ.

« 2.1. արտադրական սարքավորումներ 

--	--	--	--	--	--	--	--

 »,

2) ռեզիդենտների շահութահարկի հաշվարկի լրացման կարգում՝

ա. 1-ին կետում «0112 տող՝ անհատույց ստացված ակտիվները (այս տողը լրացվում է միայն առևտրային կազմակերպությունների կողմից), ընդ որում՝ անհատույց ստացված դրամական միջոցների և չամորտիզացվող հիմնական միջոցների համար այս տողը լրացվում է դրանց ստացման հաշվետու տարում,» բառերը փոխարինել «0112 տող՝ անհատույց (այդ թվում՝ դատարանի որոշումների հիման վրա տիրագործի ճանաչված ակտիվի սեփականության իրավունքի ճանաչման դեպքերում) ստացված ակտիվները (այս տողը լրացվում է միայն առևտրային կազմակերպությունների կողմից), ընդ որում՝ անհատույց ստացված դրամական միջոցների համար այս տողը լրացվում է դրանց ստացման հաշվետու տարում, հողամասերի համար՝ տասը հաշվետու տարիների ընթացքում (ներառյալ դրանց ստացման հաշվետու տարին՝ յուրաքանչյուր հաշվետու տարում հավասարաչափ),» բառերով,

բ. «20» թվերը փոխարինել «18» թվերով,

գ. 11-րդ կետում «35-րդ և 38-րդ» բառերը փոխարինել «35-րդ, 35.1-ին, 38-րդ և 38.1-ին» բառերով,

դ. 15-րդ կետում «բացառությամբ բանկերի» բառերից հետո լրացնել «, վարկային կազմակերպությունների, ապահովագրական ընկերությունների և արժեթղթերի շուկայի մասնագիտացված անձանց» բառերը,

ե. լրացնել հետևյալ բովանդակությամբ 15.1-ին կետ.

«15.1. Առյուսակ 2.1-ում նշվում են ըստ Օրենքի 3-րդ և 18-րդ հոդվածների, 7-րդ հոդվածի 2-րդ մասի «ժե» և «ժգ» կետերի, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2003 թվականի հուլիսի 8-ի «Կազմակերպությունների (բացառությամբ բանկերի, վարկային կազմակերպությունների, ապահովագրական ընկերությունների և արժեթղթերի շուկայի մասնագիտացված անձանց) դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների պահուստի (պահուստաֆոնդի) ձևավորման դեբիտորական ու կրեդիտորական պարտքերի անհուսալի ճանաչման և դուրսգրման կարգը հաստատելու մասին» N 205 որոշման՝ շահութահարկի հաշվարկման առանձնահատկություններով պայմանավորված՝ կազմակերպությունների (բացառությամբ բանկերի, վարկային կազմակերպությունների, ապահովագրական ընկերությունների և արժեթղթերի շուկայի մասնագիտացված անձանց, ջրօգտագործող հարկ վճարողների, խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայություններ մատուցող հարկ վճարողների, էլեկտրական էներգիայի առուվաճառք իրականացնող՝ էլեկտրական էներգիա բաշխող լիցենզավորված հարկ վճարողների, բնական գազի առուվաճառք իրականացնող՝ բնական գազ բաշխող լիցենզավորված հարկ վճարողների, բնակչությանը ներտնային գազասպառման համակարգերի տեխնիկական սպասարկում իրականացնող հարկ վճարողների) կողմից հաշվետու տարվա ընթացքում անհուսալի ճանաչված դեբիտորական և կրեդիտորական պարտքերի գումարները: Մասնավորապես, Հաշվարկի առյուսակ 2.1-ի՝

1) 1-ին սյունակում լրացվում է հերթական համարը,

2) 2-րդ սյունակում լրացվում է հարկ վճարողի կողմից դուրս գրված անհուսալի դեբիտորական պարտքի գումարը, բացառությամբ յուրաքանչյուր դեբիտորի մասով 100 000 ՀՀ դրամը չգերազանցող պարտքի գումարի, իսկ «Ընդամենը» տողում՝ 2-րդ սյունակում լրացված թվերի հանրագումարը,

3) 3-րդ սյունակում լրացվում է հարկ վճարողի կողմից դուրս գրված անհուսալի կրեդիտորական պարտքի գումարը, իսկ «Ընդամենը» տողում՝ 3-րդ սյունակում լրացված թվերի հանրագումարը,



4) 4-րդ սյունակում լրացվում է հարկ վճարողի կողմից անհուսալի ճանաչված դեբիտորական կամ կրեդիտորական պարտքի դուրսգրման ամսաթիվը,

5) 5-րդ սյունակում լրացվում է հարկ վճարողի կողմից դեբիտորական պարտքի գումարը բռնագանձելու պահանջը բավարարելու կամ մերժելու վերաբերյալ դատական ակտի (վճռի, որոշման կամ կարգադրության, բացառությամբ դեբիտորական պարտքի գումարը ներելու կամ այն որևէ հիմքով չպահանջելու վերաբերյալ կայացված վճռի, որոշման կամ կարգադրության) օրինական ուժի մեջ մտնելու ամսաթիվը,

6) 6-րդ սյունակում լրացվում է դեբիտորական կամ կրեդիտորական պարտք ունեցող մյուս անձի անվանումը կամ ֆիզիկական անձի անունը, ազգանունը,

7) 7-րդ սյունակում լրացվում է դեբիտորական կամ կրեդիտորական պարտք ունեցող մյուս անձի ՀՎՀՀ-ն՝ առկայության դեպքում,

8) 8-րդ սյունակում լրացվում է դեբիտորական կամ կրեդիտորական պարտք ունեցող մյուս անձի գտնվելու վայրը կամ ֆիզիկական անձի դեպքում՝ բնակության վայրը:»:

**ԱՐՑԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ  
ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ**

**Դ. ՊՈՂՈՍՅԱՆ**

**2021 թվականի մարտի 18  
ք. Ստեփանակերտ**

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ  
ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

2021 թվականի մարտի 18-ի

ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ  
ԱՌԸՆԹԵՐ ՀԱՐԿԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ  
ՓԵՏՐՎԱՐԻ 17-Ի N 5-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

N 46-Ն

ՀՐԱՄԱՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝

Հ Ր Ա Մ Ա Ց ՈՒ Մ Ե Մ՝

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության պետի 2014 թվականի փետրվարի 17-ի «Վարձու աշխատողի և պայմանագրային եկամուտ ստացող ֆիզիկական անձի անհատական տվյալների գրանցման հայտի, եկամտային հարկի և սոցիալական վճարի, տարեկան եկամուտների մասին հաշվարկների, կազմակերպության կողմից որպես հարկային գործակալ եկամտային հարկի պահում (գանձում) և պետական բյուջե վճարում կատարելու պարտավորություն ստանձնելու մասին հայտարարության, կազմակերպության (անհատ ձեռնարկատիրոջ) կողմից ֆիզիկական անձանց հաշվարկված և վճարված եկամուտների, իրականացված նվազեցումների և պահված եկամտային հարկի գումարների, ինչպես նաև գործատուի (վարձու) աշխատողի համար կատարված սոցիալական վճարների մասին տեղեկանքի ու գրանցման հայտի և եկամտային հարկի անձնավորված հաշվարկի ընդունման մասին ստացականների ձևերը սահմանելու մասին» N 5-Ն հրամանում կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները.

1) հրամանով սահմանված N 2 հավելվածում 1-ին կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերություն և 1.1-ին կետ.

«Բացառապես գյուղատնտեսական արտադրանքի արտադրության ոլորտ :

1.1. «Բացառապես գյուղատնտեսական արտադրանքի արտադրության ոլորտ» վանդակում նշում կատարվում է, եթե հաշվետու ժամանակաշրջանում հարկ վճարողը գործունեություն է իրականացրել բացառապես գյուղատնտեսական արտադրանքի արտադրության ոլորտում:»,

2) հրամանով սահմանված NN 2 և 3 հավելվածների՝

ա. 2-րդ բաժնում «20» թվերը փոխարինել «15» թվերով.

բ. 2-րդ բաժնում «20» թվերը փոխարինել «14» թվերով.

գ. 2-րդ բաժնում «20» թվերը փոխարինել «13» թվերով.

3) հրամանով սահմանված N 4 հավելվածի 26-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«26. [4.4] տողում լրացվում է [4.3] տողում նշված եկամտից Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դրույքաչափով հաշվարկված եկամտային հարկի գումարը:»:

2. Սույն հրամանի 1-ին կետի 2-րդ ենթակետի «ա» պարբերությունը կիրառվում է 2021 թվականի հաշվետու ամիսների համար, «բ» պարբերությունը՝ 2022 թվականի հաշվետու ամիսների համար, «գ»

պարբերությունը՝ 2023 թվականի հաշվետու ամիսների և հետագա հաշվետու ամիսների համար:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ  
ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ**

**Դ. ՊՈՂՈՍՅԱՆ**

**2021 թվականի մարտի 18  
ք. Ստեփանակերտ**

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ  
ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ**

**2021 թվականի մարտի 18-ի**

**ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՋ ԿՈՂՄԻՑ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆԻՑ ՀՐԱԺԱՐՎԵԼՈՒ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**N 47-Ն**

**ՀՐԱՄԱՆ**

Հիմք ընդունելով «Եկամտային հարկի մասին» օրենքի 21.1-ին հոդվածի  
2-րդ մասը՝

**Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝**

1. Հաստատել անհատ ձեռնարկատիրոջ կողմից արտոնությունից  
հրաժարվելու վերաբերյալ հայտարարության ձևը՝ համաձայն հավելվածի:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ  
ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ**

**Դ. ՊՈՂՈՍՅԱՆ**

**2021 թվականի մարտի 18  
ք. Ստեփանակերտ**

**Ձև**

<b>ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՋ ԿՈՂՄԻՑ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՑ ՀՐԱԺԱՐՎԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ</b>	Փաստաթղթի հերթական համարը  (լրացվում է հարկային մարմնի կողմից)
1. Անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը	
2. Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	
3. Անհատ ձեռնարկատիրոջ բնակության վայրը	
4. Հայտարարության ներկայացման ամսաթիվը	

1) «Փաստաթղթի հերթական համարը» մասում լրացվում է հարկային մարմնում առկա՝ անհատ ձեռնարկատիրոջ անձնական գործում տվյալ փաստաթղթի հերթական համարը:

- 2) 1-ին կետում լրացվում է անհատ ձեռնարկատիրոջ անունը և ազգանունը:
- 3) 2-րդ կետում լրացվում է հարկ վճարողի հաշվառման համարը:
- 4) 3-րդ կետում լրացվում է անհատ ձեռնարկատիրոջ բնակության վայրի հասցեն:
- 5) 4-րդ կետում լրացվում է հայտարարության ներկայացման օրը, ամիսը, տարին:

5. Հայտնում եմ, որ \_\_\_\_\_ թվականի հաշվետու տարվա համար հրաժարվում եմ «Եկամտային հարկի մասին» օրենքի 21.1-ին հոդվածի 1-ին մասով նախատեսված արտոնությունից:

6) 5-րդ կետում լրացվում է այն հաշվետու տարին, որի համար անհատ ձեռնարկատիրոջ կողմից ներկայացվում է արտոնությունից հրաժարվելու վերաբերյալ հայտարարությունը:

6. Տեղյակ եմ, որ սույն հայտարարության ներկայացման դեպքում՝ հայտարարության 5-րդ կետում նշված արտոնությունից հրաժարվելու դեպքում՝

- 1) սույն հայտարարությունում նշված հաշվետու տարվա մասով դադարում է գործել արտոնությունը.
- 2) չօգտագործված արտոնությունը ենթակա չէ փոխանցման հաջորդ հաշվետու տարիներ՝ ապագա հարկային պարտավորությունների նվազեցման նպատակով.
- 3) հարկային արտոնությունից չօգտվելը չի ազատում հարկային հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի դրույթները խախտելու դեպքում օրենքով սահմանված պատասխանատվության միջոցների կիրառությունից:

**Անհատ ձեռնարկատիրոջ ստորագրությունը \_\_\_\_\_**

Հարկային մարմին առձեռն ներկայացնելու դեպքում հայտարարությունը լրացվում է երկու օրինակից:

Հարկային մարմնի կողմից գրանցվելուց հետո մեկ օրինակը հանձնվում է անհատ ձեռնարկատիրոջը:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ  
ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ**

**2021 թվականի մարտի 18-ի**

**ԵԿԱՍՏԱՅԻՆ ՀԱՐԿԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎՃԱՐԻ ԱՆՁՆԱՎՈՐՎԱԾ  
ՀԱՇՎԱՌՄԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԲԱԶՄԱՑՈՒՄ ԲԱՑՎԱԾ՝ ՖԻԶԻԿԱԿԱՆ  
ԱՆՁԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՀԱՇՎԻ ՔԱՂՎԱԾՔԸ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ  
ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ԿԱՄ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՏԵՍՔՈՎ ՏՎՅԱԼՆԵՐԻ  
ՍՈՒՔՅԵԿՏԻՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՄԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**N 48-Ն**

**ՀՐԱՄԱՆ**

Հիմք ընդունելով «Եկամտային հարկի և սոցիալական վճարի անձնավորված հաշվառման մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը՝

**Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝**

1. Սահմանել եկամտային հարկի և սոցիալական վճարի անձնավորված հաշվառման տեղեկատվական բազայում բացված՝ ֆիզիկական անձի անհատական հաշվի քաղվածքը դիմումի հիման վրա փաստաթղթային կամ էլեկտրոնային տեսքով տվյալների սուբյեկտին տրամադրելու կարգը՝ համաձայն հավելվածի:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ  
ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ**

**Դ. ՊՈՂՈՍՅԱՆ**

**2021 թվականի մարտի 18  
ք. Ստեփանակերտ**

**Կ Ա Ր Գ**

**ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎՃԱՐԻ ԱՆՁՆԱՎՈՐՎԱԾ ՀԱՇՎԱՌՄԱՆ  
ՏԵՂԵԿՍՏՎԱԿԱՆ ԲԱԶՄԱՅՈՒՄ ԲԱՑՎԱԾ՝ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՀԱՇՎԻ  
ՔԱՂՎԱԾՔԸ ԴԻՍՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ԿԱՄ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ  
ՏԵՍՔՈՎ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՍՈՒԲՅԵԿՏԻՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ**

1. Սույն կարգը սահմանում է «Եկամտային հարկի և սոցիալական վճարի անձնավորված հաշվառման մասին» օրենքով սահմանված՝ անձնավորված հաշվառման տեղեկատվական բազայում (այսուհետ՝ տեղեկատվական բազա) բացված՝ ֆիզիկական անձի անհատական հաշվի քաղվածքը (այսուհետ՝ քաղվածք) տվյալների սուբյեկտի դիմումի հիման վրա նրան տրամադրելու կարգը:

2. Սույն կարգում կիրառվող հասկացություններն ունեն «Եկամտային հարկի և սոցիալական վճարի անձնավորված հաշվառման մասին» օրենքով սահմանված իմաստը:

3. Քաղվածքը (սույն կարգի N 1 հավելվածով սահմանված ձևով) տրամադրվում է փաստաթղթային կամ էլեկտրոնային տեսքով:

4. Քաղվածքը փաստաթղթային տեսքով տվյալների սուբյեկտին տրամադրվում է պատվիրված նամակի միջոցով՝ փոստային առաքմամբ կամ հարկային մարմին այցելած տվյալների սուբյեկտին կամ այլ անձին՝ առձեռն տրամադրելու միջոցով:

5. Քաղվածքն էլեկտրոնային տեսքով տվյալների սուբյեկտին տրամադրվում է տվյալների սուբյեկտի նշած էլեկտրոնային փոստին ուղարկելու միջոցով:

6. Քաղվածքը ստանալու համար տվյալների սուբյեկտն անձամբ կամ այլ անձի միջոցով սույն կարգի N 2 հավելվածով սահմանված ձևով դիմում է ներկայացնում հարկային մարմին:

7. Դիմումում նշվում է՝

1) տվյալների սուբյեկտի անունը, ազգանունը, հայրանունը.

2) անձը հաստատող փաստաթղթի տեսակը, սերիան ու համարը, հանրային ծառայությունների համարանիշը կամ հանրային ծառայությունների համարանիշ չունենալու մասին տեղեկանքի համարը.

3) հաշվետու ժամանակահատվածի սկիզբը և ավարտը.

4) քաղվածքն էլեկտրոնային տեսքով ստանալու համար դիմելու դեպքում՝ նաև էլեկտրոնային փոստի հասցեն.

5) քաղվածքը թղթային տեսքով ստանալու համար դիմելու դեպքում՝ քաղվածքը ստանալու եղանակը (փոստային առաքման եղանակով կամ առձեռն).

6) քաղվածքը փաստաթղթային տեսքով ստանալու համար տվյալ օրացուցային տարվա ընթացքում մեկից ավելի անգամ դիմելու դեպքում (բացառությամբ՝ դիմումի վերադարձից հետո դիմելու) «Պետական տուրքի մասին» օրենքով սահմանված չափով պետական տուրքի վճարման անդորրագիրը.

7) ըստ անհրաժեշտության՝ տվյալների սուբյեկտի գրավոր համաձայնությունը քաղվածքն էլեկտրոնային տեսքով ստանալու համար այլ անձի միջոցով դիմելու կամ քաղվածքն այլ անձին առձեռն տրամադրելու միջոցով ստանալու վերաբերյալ, ինչպես նաև այլ անձի անունը, ազգանունը, հայրանունը, անձը հաստատող փաստաթղթի սերիան ու համարը:

8. Դիմումն անձամբ ստորագրում է տվյալների սուբյեկտը:

9. Դիմումին կից ներկայացվում են նաև՝

1) տվյալների սուբյեկտի անձը հաստատող փաստաթղթի պատճենը.

2) սույն կարգի 7-րդ կետի 7-րդ ենթակետում նշված դեպքում՝ այլ անձի անձը հաստատող փաստաթղթի պատճենը:

10. Քաղվածքը ստանալու դիմումն այլ անձի միջոցով ներկայացվելու դեպքում, եթե տվյալների սուբյեկտը որպես քաղվածքը ստանալու եղանակ նշում է փոստային առաքումը, տվյալների սուբյեկտի համաձայնությունը չի պահանջվում:

11. Քաղվածքը ստանալու դիմումը հաշվառվում է քաղվածքը ստանալու դիմումների հաշվառման էլեկտրոնային գրանցամատյանում:

12. Հարկային մարմինը՝

1) վերադարձնում է դիմումը.

2) տվյալների սուբյեկտին տեղեկացնում է քաղվածքը տրամադրելու անհնարինության մասին.

3) տվյալների սուբյեկտին տրամադրում է քաղվածքը:

13. Սույն կարգի 12-րդ կետով սահմանված՝ քաղվածքը տրամադրելու դիմումը տվյալների սուբյեկտին վերադարձվում կամ քաղվածքը տրամադրելու անհնարինության մասին պատասխանը տվյալների սուբյեկտին է տրամադրվում դիմումում նշված քաղվածքը ստանալու եղանակով՝ ոչ ուշ, քան երկու աշխատանքային օրվա ընթացքում:

14. Հարկային մարմինը վերադարձնում է դիմումը՝ գրավոր (սույն կարգի N 3 հավելվածով սահմանված ձևով) հայտնելով վերադարձման պատճառը, եթե դիմումը ներկայացվել է սույն կարգի խախտմամբ (դիմումը լրացված է թերի կամ դիմումին չեն կցվել անհրաժեշտ փաստաթղթերը):

15. Հարկային մարմինը տվյալների սուբյեկտին գրավոր (սույն կարգի N 4 հավելվածով սահմանված ձևով) տեղեկացնում է քաղվածքը տրամադրելու անհնարինության մասին, եթե տեղեկատվական բազայում տվյալների սուբյեկտի համար անհատական հաշիվ բացված չէ կամ անհատական հաշվում առկա տվյալների համաձայն՝ հաշվետու ժամանակահատվածում տվյալների սուբյեկտը եկամուտներ չի ստացել:

16. Հարկային մարմինը քաղվածքը տրամադրում է դիմումը ներկայացնելու (այդ թվում՝ վերադարձված դիմումի փոխարեն նոր դիմում ներկայացնելու) օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում:

17. Քաղվածքում ներառվում են՝

1) տվյալների սուբյեկտի անունը, ազգանունը, հանրային ծառայությունների համարանիշը կամ հանրային ծառայությունների համարանիշ չունենալու վերաբերյալ տեղեկանքի համարը, բնակության վայրը.

2) հաշվետու ժամանակահատվածը (վարձու աշխատողի կամ պայմանագրային եկամուտ ստացողի դեպքում՝ տարին և ամիսը (ամիսները), անհատ ձեռնարկատիրոջ և ինքնազբաղված անձի դեպքում՝ տարին).

3) հաշվետու ժամանակահատվածում տվյալների սուբյեկտի համար հաշվարկված աշխատավարձի (դրան հավասարեցված վճարումների) չափը, դրանցից հաշվարկված եկամտային հարկի և սոցիալական վճարի չափերը, սոցիալական վճարը սահմանված ժամկետում չվճարելու համար հաշվարկված և վճարված տույժերը, մասնակիցների ռեեստրը վարողին փոխանցված կուտակային հատկացումների չափը (այդ թվում՝ սոցիալական վճարներից կատարվող կուտակային հատկացումների չափը առանձնացված)՝ ըստ ամիսների և գործատուների.

4) հաշվետու ժամանակահատվածում տվյալների սուբյեկտին վճարված պայմանագրային եկամուտների չափը, դրանցից հաշվարկված եկամտային հարկի և սոցիալական վճարի չափերը, սոցիալական վճարը սահմանված ժամկետում չվճարելու համար հաշվարկված և վճարված տույժերը, մասնակիցների ռեեստրը վարողին փոխանցված կուտակային հատկացումների չափը (այդ թվում՝ սոցիալական վճարներից կատարվող կուտակային հատկացումների չափը՝ առանձնացված)՝ ըստ ամիսների և գործատուների.

5) աշխատավարձը (դրան հավասարեցված վճարումները) հաշվարկված կամ պայմանագրային եկամուտը վճարած գործատուի հարկ վճարողի հաշվառման համարը (այսուհետ՝ ՀՎՀՀ) և անվանումը (անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ անունը, ազգանունը).

6) վարձու աշխատողի դեպքում՝ աշխատավարձը (դրան հավասարեցված վճարումները) վճարող գործատուի հետ աշխատանքային հարաբերությունների մեջ մտնելու օրը, ամիսը, տարեթիվը, հաշվետու ժամանակահատվածում աշխատանքային հարաբերությունները դադարելու դեպքում՝ դադարելու օրը, ամիսը, տարեթիվը.

7) պայմանագրային եկամուտ ստացողի դեպքում՝ պայմանագրային եկամուտը վճարող գործատուի հետ պայմանագրային հարաբերությունների մեջ մտնելու օրը, ամիսը, տարեթիվը, հաշվետու ժամանակահատվածում պայմանագրային հարաբերությունները դադարելու դեպքում՝ դադարելու օրը, ամիսը, տարեթիվը.

8) անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ պետական հաշվառման օրը, ամիսը, տարեթիվը, հաշվետու ժամանակահատվածում պետական հաշվառումից հանվելու կամ գործունեությունը ժամանակավորապես դադարեցնելու դեպքում՝ նաև



հաշվառումից հանվելու կամ գործունեությունը ժամանակավորապես դադարեցնելու օրը, ամիսը, տարեթիվը.

9) հաշվետու ժամանակահատվածում ձեռնարկատիրական գործունեությունից ստացված՝ եկամտային հարկի հաշվարկման օբյեկտ համարվող եկամտի, վճարած եկամտային հարկի և սոցիալական վճարի չափերը, մասնակիցների ռեեստրը վարողին փոխանցված կուտակային հատկացումների չափը (այդ թվում՝ սոցիալական վճարներից կատարվող կուտակային հատկացումների չափը՝ առանձնացված).

10) հաշվետու ժամանակահատվածում տվյալների սուբյեկտին վճարված ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների չափերը.

11) հաշվետու ժամանակահատվածում որպես ինքնագրաված անձ ստացած՝ եկամտային հարկի հաշվարկման օբյեկտ համարվող եկամտի, վճարած եկամտային հարկի և սոցիալական վճարի չափերը, մասնակիցների ռեեստրը վարողին փոխանցված կուտակային հատկացումների չափը.

12) հաշվետու ժամանակահատվածում հաշվարկված և փոխանցված՝ սոցիալական վճարի ամսական առավելագույն չափը գերազանցող գումարները՝ ըստ ամիսների (առկայության դեպքում, այդ թվում՝ մասնակիցներին վերադարձված գումարները՝ առանձնացված).

13) հաշվետու ժամանակահատվածի վերջին ամսվա դրությամբ՝ տվյալների սուբյեկտի՝ հարկային և սոցիալական վճարի ժամկետանց պարտավորությունները և դրանց համար հաշվարկված տույժերը.

14) հաշվետու ժամանակահատվածում վճարված կամավոր կենսաթոշակային վճարի չափը.

15) հաշվետու ժամանակահատվածի վերջին ամսվա դրությամբ՝ վերադարձման ենթակա եկամտային հարկի գումարը (առկայության դեպքում):

**Ձև**

<b>ԱՆՀԱՏԱԿԱՆ ՀԱՇՎԻ ՔԱՂՎԱԾՔ ՏԻՋԻԿԱԿԱՆ ԱՆՁԻ</b>	<b>Փաստաթղթի մուտքագրման համար</b> <small>(լրացվում է հարկային մարմնի կողմից)</small>
1. Ֆիզիկական անձի անուն, ազգանուն	2. Հանրային ծառայությունների համարանիշ (ՀՕՀ) կամ ՀՕՀ չունենալու վերաբերյալ տեղեկանքի համար
3. Ֆիզիկական անձի բնակության վայր Հաշվետու ժամանակահատված	6. Քաղվածքը տրամադրող հարկային մարմինը
4. Սկիզբ	Չափի միավոր՝ ՀՀ դրամ
5. Ավարտ	
7. Քաղվածքը ձևավորելու օր	

**ԲԱԺԻՆ 1. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Եկամուտը հաշվարկված (վճարած) գործատու(ներ)		Աշխատանքային հարաբերություններ		Քաղաքացիաիրավական հարաբերություններ	
ՀՎՀՀ	Անվանում	Սկիզբ	Ավարտ	Սկիզբ	Ավարտ
<b>8</b>	<b>9</b>	<b>10</b>	<b>11</b>	<b>12</b>	<b>13</b>

**ԲԱԺԻՆ 2. ՎԱՐՁՈՒ ԱՇԽԱՏՈՂԻ (ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԵՎԱՍՈՒՑ ՍՏԱՑՈՂԻ) ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Հաշվետու տարի, ամիս	Գործատուի ՀՎՀՀ	Հաշվետու ժամանակաշրջանում ստացման ենթակա (ստացված) եկամտի գումար					Ժամանակավոր անաշխատունակության (մայրության) նպաստներ		Հաշվարկված				Վճարված		
		Աշխատավարձ և դրան հավասարեցված եկամուտներ	Քաղաքացիաիրավական պայմանագրով աշխատանքի վարձատրություն	Այլ հարկվող եկամուտ (բացի նպաստներից)	Հարկվող եկամտից նվազեցման ենթակա կամավոր կենսաթոշակային վճարի գումար	Վճարված	Հետ պահված	Եկամտային հարկ	Եկամտային հարկի տույժ <sup>1</sup>	Սոցիալական վճար	Սոցիալական վճարի տույժ	Հատկացում սոցիալական վճարից (ՀԿԴ փոխանցված)	Հատկացում սոցիալական վճարի տույժից (ՀԿԴ փոխանցված)	Պետական հատկացում բյուջեից (ՀԿԴ փոխանցված)	
14	15	16	17	18	19	20	21	22	23	24	25	26	27	28	

<sup>1</sup> 23-րդ սյունակում լրացվում է հարկային գործակալ չհանդիսացող գործատուի աշխատողների եկամտային հարկի տույժի գումարը:

**ԲԱԺԻՆ 3. ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՋ ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

ՀՎՀՀ	Հաշվառման ամսաթիվ	Գործունեությունը ժամանակավորապես դադարեցնելու ամսաթիվ	Գործունեությունը վերսկսելու ամսաթիվ	Գործունեության դադարեցման (հաշվառումից դուրս գալու) ամսաթիվ
29	30	31	32	33

**ԲԱԺԻՆ 4. ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Հաշվետու տարի	Հարկվող (ձեռնարկատիրական) եկամուտ	Վճարված կամավոր կենսաթոշակային վճարի գումար	Հաշվարկված		Վճարված			Նպաստներ	
			Եկամտային հարկ	Սոցիալական վճար	Եկամտային հարկ	Հատկացում սոցիալական վճարից (ՀԿԴ փոխանցված)	Պետական հատկացում բյուջեից (ՀԿԴ փոխանցված)	Վճարված	Հետ պահված
34	35	36	37	38	39	40	41	42	43

**ԲԱԺԻՆ 5. ԻՆՔՆԱԶԲԱՂՎԱԾՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐ ԵՎ ՀԱՇՎԵՏՈՒ ՏԱՐՎԱ ՎԵՐՋՈՒՄ ՀԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՅՈՒՐԴԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Հաշվետու տարի	Հարկվող եկամուտ	Վճարված կամավոր կենսաթոշակային վճարի գումար	Հաշվարկված		Վճարված		Եկամտային հարկի		Տուգանք
			Եկամտային հարկ	Սոցիալական վճար	Եկամտային հարկ	Հատկացում սոցիալական վճարից (ՀԿԴ փոխանցված)	Ապառք	Տույժ	
<b>44</b>	<b>45</b>	<b>46</b>	<b>47</b>	<b>48</b>	<b>49</b>	<b>50</b>	<b>51</b>	<b>52</b>	<b>53</b>

**ԲԱԺԻՆ 6. ՀԱՇՎԵՏՈՒ ՏԱՐՎԱ ՎԵՐՋՈՒՄ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՋ ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎՃԱՐԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՅՈՒՐԴԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Եկամտային հարկի		Տուգանք	Սոցիալական վճարի ապառք	Վերադարձման ենթակա եկամտային հարկի գումար
Ապառք	Տույժ			
<b>54</b>	<b>55</b>	<b>56</b>	<b>57</b>	<b>58</b>

**ԲԱԺԻՆ 7. ԱՌԱՎԵԼԱԳՈՒՑՆ ՉԱՓԻՑ ԱՎԵԼ ՓՈԽԱՆՑՎԱԾ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎՃԱՐԻ ՎԵՐԱԴԱՐՉՎՈՂ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Հաշվետու ժամանակահատված (տարի, ամիս)													Ընդամենը ամսական	Տարեկան վերադարձման ենթակա	Վերադարձված գումար	
Տարի	Սոցիալական վճարի վերադարձման ենթակա գումար ըստ ամիսների														Ընդամենը ամսական	Տարեկան
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII				
<b>59</b>	<b>60</b>	<b>61</b>	<b>62</b>	<b>63</b>	<b>64</b>	<b>65</b>	<b>66</b>	<b>67</b>	<b>68</b>	<b>69</b>	<b>70</b>	<b>71</b>	<b>72</b>	<b>73</b>	<b>74</b>	<b>75</b>

**76 Հարկային մարմնի պատասխանատու անձի (անձանց) ստորագրություն (ներ)**

Հավելված N 2  
Արցախի Հանրապետության պետական  
եկամուտների կոմիտեի նախագահի  
2021 թվականի մարտի 18-ի N 48-Ն  
հրամանով սահմանված կարգի

**Ձև**

<b>ԴԻՄՈՒՄ</b> <b>ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՀԱՇՎԻ</b> <b>ՔԱՂՎԱԾՔԸ ՍՏԱՆԱԼՈՒ</b>				Փաստաթղթի մուտքագրման համար  (ըսցվում է հարկային մարմնի կողմից)			
1. Ֆիզիկական անձի անուն, ազգանուն, հայրանուն							
2. Ֆիզիկական անձի բնակության վայր							
3. Քաղվածքը տրամադրող հարկային մարմնի ստորաբաժանում և բաժին							
Հաշվետու ժամանակահատվածի				6. Ներկայացման ամսաթիվ			
4. Սկիզբ	5. Ավարտ			_____ 20 թ.			
Անձը հաստատող փաստաթղթի		9. Հանրային ծառայությունների համարանիշ (ՀԾՀ) կամ ՀԾՀ չունենալու վերաբերյալ տեղեկանքի համար			Պետական տուրքի անդորրագրի		
7. Տեսակ	8. Սերիա և համար		10. Ամսաթիվ			11. Համար	
Ստացման եղանակ				15. Էլեկտրոնային փոստի հասցե		Քաղվածքը առաքել բնակության վայրի հասցեով	
12. Առձեռն	13. Փոստային առաքմամբ	14. Էլեկտրոնային փոստով		16. Այո		17. Ոչ	
Քաղվածքը առաքել հետևյալ հասցեով							
18. Շրջան	19. Համայնք	20. Բնակավայր	21. Փողոց	22. Շենք/տուն	23. Բնակարան	24. Փոստի կոդ	
25. Դիմումը ներկայացվում է այլ անձի միջոցով				26. Քաղվածքը տրամադրել այլ անձին			
Ֆիզիկական անձի (տվյալների սուբյեկտի) համաձայնությունն այլ անձի միջոցով դիմելու կամ այլ անձի միջոցով առձեռն ստանալու դեպքում՝ տվյալ անձի							
27. Անուն	28. Ազգանուն	29. Հայրանուն		Անձը հաստատող փաստաթղթի			
				30. Տեսակ	31. Սերիա և համար		
32. Ֆիզիկական անձի (տվյալների սուբյեկտի) ստորագրություն							

Հավելված N 3  
Արցախի Հանրապետության պետական  
եկամուտների կոմիտեի նախագահի  
2021 թվականի մարտի 18-ի N 48-Ն  
հրամանով սահմանված կարգի

**Ձև**

<b>ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՀԱՇՎԻ ՔԱՂՎԱԾՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԴԻՄՈՒՄԸ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ</b>	Փաստաթղթի էլքագրման համար _____																				
1. Ֆիզիկական անձի անուն, ազգանուն, հայրանուն	2. Ֆիզիկական անձի բնակության վայր																				
3. Անձը հաստատող փաստաթղթի տվյալներ	4. Հանրային ծառայությունների համարանիշ (ՀՕՀ) կամ ՀՕՀ չունենալու վերաբերյալ տեղեկանքի համար																				
	<table border="1" style="display: inline-table; border-collapse: collapse;"> <tr> <td style="width: 20px; height: 20px;"></td> <td style="width: 20px; height: 20px;"></td> <td style="width: 20px; height: 20px;"></td> <td style="width: 20px; height: 20px;"></td> <td style="width: 20px; height: 20px;"></td> <td style="width: 20px; height: 20px;"></td> <td style="width: 20px; height: 20px;"></td> <td style="width: 20px; height: 20px;"></td> <td style="width: 20px; height: 20px;"></td> <td style="width: 20px; height: 20px;"></td> <td style="width: 20px; height: 20px;"></td> <td style="width: 20px; height: 20px;"></td> <td style="width: 20px; height: 20px;"></td> <td style="width: 20px; height: 20px;"></td> <td style="width: 20px; height: 20px;"></td> <td style="width: 20px; height: 20px;"></td> <td style="width: 20px; height: 20px;"></td> <td style="width: 20px; height: 20px;"></td> <td style="width: 20px; height: 20px;"></td> <td style="width: 20px; height: 20px;"></td> </tr> </table>																				

Վերադարձման պատճառը (համապատասխան վանդակում կատարվում է նշում)՝

	Դիմումը լրացված է թերի
	Դիմումին չեն կցվել անհրաժեշտ փաստաթղթերը

Պաշտոնատար անձ \_\_\_\_\_

ստորագրությունը, անունը, ազգանունը

Կ.Տ.

\_\_\_\_\_ 20 \_\_\_\_ թ.

Հավելված N 4  
Արցախի Հանրապետության պետական  
եկամուտների կոմիտեի նախագահի  
2021 թվականի մարտի 18-ի N 48-Ն  
հրամանով սահմանված կարգի

**Ձև**

<b>ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՀԱՇՎԻ ՔԱՂՎԱԾՔԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԱՆՀԱՐԻՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ</b>	Փաստաթղթի էլքագրման համար _____										
1. Ֆիզիկական անձի անուն, ազգանուն, հայրանուն	2. Ֆիզիկական անձի բնակության վայր										
3. Անձը հաստատող փաստաթղթի տվյալներ	4. Հանրային ծառայությունների համարանիշ (ՀՕՀ) կամ ՀՕՀ չունենալու վերաբերյալ տեղեկանքի համար										
	<table border="1" style="display: inline-table; border-collapse: collapse;"> <tr> <td style="width: 20px; height: 20px;"></td> <td style="width: 20px; height: 20px;"></td> <td style="width: 20px; height: 20px;"></td> <td style="width: 20px; height: 20px;"></td> <td style="width: 20px; height: 20px;"></td> <td style="width: 20px; height: 20px;"></td> <td style="width: 20px; height: 20px;"></td> <td style="width: 20px; height: 20px;"></td> <td style="width: 20px; height: 20px;"></td> <td style="width: 20px; height: 20px;"></td> </tr> </table>										

Անհնարինության պատճառը (համապատասխան վանդակում կատարվում է նշում)՝

	Տեղեկատվական բազայում տվյալների սուբյեկտի համար անհատական հաշիվ բացված չէ
	Անհատական հաշվում առկա տվյալների համաձայն՝ հաշվետու ժամանակահատվածում տվյալների սուբյեկտը եկամուտներ չի ստացել

Պաշտոնատար անձ \_\_\_\_\_  
ստորագրությունը, անունը, ազգանունը

Կ.Տ.

\_\_\_\_\_ 20 \_\_\_\_ թ.

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ  
ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ**

**2021 թվականի մարտի 18-ի**

**ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԱՌԸՆԹԵՐ ՀԱՐԿԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ  
ՄԱՐՏԻ 05-Ի N 4-Ն ՀՐԱՄԱՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**N 49-Ն**

**ՀՐԱՄԱՆ**

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 41-րդ հոդվածը՝

**Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ`**

1. Ուժը կորցրած ճանաչել Լեոնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության պետի 2013 թվականի մարտի 05-ի «Ավտոմոբիլային ճանապարհների շինարարության, նորոգման և պահպանման համար կատարվող հատկացումների (մասհանումների) հաշվարկի ձևն ու լրացման կարգը սահմանելու և Լեոնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության 2007 թվականի հունվարի 25-ի թիվ 06/Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 4-Ն հրամանը:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ  
ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ**

**Դ. ՊՈՂՈՍՅԱՆ**

**2021 թվականի մարտի 18  
ք. Ստեփանակերտ**



**ԱՐՑԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ  
ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ**

**Հ Ր Ա Մ Ա Ն**

«11» մարտի 2021թ.

N 43

ք.Ստեփանակերտ

**ԱՐՑԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՄԱՐԴԱՏԱՐ-ՏԱՔՍԻ ԱՎՏՈՄՈԲԻԼՆԵՐՈՎ  
ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՆԵՐՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՈՒՂԵՎՈՐԱՓՈԽԱՐՈՒՄՆԵՐԻ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԵՎ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ  
ՆԵՐԴԻՐՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 9-րդ, 37-րդ, 40-րդ հոդվածների պահանջներով և հիմք ընդունելով Արցախի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության մարդատար-տաքսի ավտոմոբիլներով միջպետական և ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության լիցենզավորող հանձնաժողովի 2021 թվականի մարտի 11-ի N 371-ՏՆ եզրակացությունը՝

**Հ Ր Ա Մ Ա Ց ՈՒ Մ Ե Մ՝**

**1. Դադարեցնել՝**

1) **«Արտյոմ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության** Արցախի Հանրապետությունում մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության SON00115 լիցենզիայի և լիցենզիայի N00001, N00008 ներդիրների գործողությունները.

2) **անհատ ձեռնարկատեր Արարատ Ալեքսանդրի Ջամալյանի** Արցախի Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության SON00203 լիցենզիայի և լիցենզիայի N00001 ներդիրի գործողությունները.

3) **անհատ ձեռնարկատեր Խաչատուր Ապետնակի Պետրոսյանի** Արցախի Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության SON00533 լիցենզիայի և լիցենզիայի N00001 ներդիրի գործողությունները.

4) **ֆիզիկական անձ՝ Լևոն Լենբերտի Մարգարյանի** Արցախի Հանրապետությունում մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության SON00711 լիցենզիայի և լիցենզիայի N00001 ներդիրի գործողությունները:

2. Եռօրյա ժամկետում ապահովել սույն հրամանի առաքումը պաշտոնական տեղեկագիրը հրապարակող մարմնին:

**Հայկ Խանումյան**



Առաջին ատյանի դատարանի 2020 թվականի մայիսի 18-ի որոշմամբ գործը նշանակվել է դատական քննության:

Առաջին ատյանի դատարանի 2020 թվականի օգոստոսի 21-ի վճռով հայցը մերժվել է:

Նշված վճռի դեմ 2020 թվականի սեպտեմբերի 21-ին վերաքննիչ բողոք է բերել Հայցվորի ներկայացուցիչ Վ.Հայրապետյանը:

Քաղաքացիական գործը և վերաքննիչ բողոքը՝ կից փաստաթղթերով, Արցախի Հանրապետության վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) դատական կազմին են հանձնվել 2020 թվականի նոյեմբերի 30-ին:

Վերաքննիչ դատարանի 2020 թվականի դեկտեմբերի 02-ի որոշմամբ վերաքննիչ բողոքն ընդունվել է վարույթ և նշանակվել դատական քննության:

Վերաքննիչ դատարանի 2020 թվականի դեկտեմբերի 25-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը բավարարվել է. Առաջին ատյանի դատարանի 2020 թվականի օգոստոսի 21-ի վճիռը մասնակիորեն բեկանվել է և փոփոխվել. ներկայացված հայցը՝ բավարարվել:

Նշված որոշման դեմ Պատասխանողն ու իր ներկայացուցիչ Ռ.Ավանեսյանը 2021 թվականի հունվարի 25-ին՝ փոստային ծառայության միջոցով, ներկայացրել են վճռաբեկ բողոք՝ Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու և Առաջին ատյանի դատարանի 2020 թվականի օգոստոսի 21-ի վճռին օրինական ուժ տալու կամ՝ գործը նոր քննության ուղարկելու խնդրանքով:

Վճռաբեկ բողոքին կից բողոքաբերները ներկայացրել են նաև 20.000 (քսան հազար) ՀՀ դրամ պետական տուրք վճարելը և բողոքի պատճենները դատավարության մասնակիցներին ուղարկված լինելը հավաստող անդորրագրերը:

Գերագույն դատարանի 2021 թվականի փետրվարի 11-ի որոշմամբ վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ:

Վճռաբեկ բողոքին գրավոր պատասխան չի ներկայացվել:

## **2.Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Ըստ ներկայացված վճռաբեկ բողոքի՝ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտումներ: Մասնավորապես, Վերաքննիչ դատարանը խախտել է ԱՀ Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածների, ինչպես նաև ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 43-րդ, 44-րդ, 47-րդ, 49-րդ և 74-րդ հոդվածների պահանջները, սխալ է մեկնաբանել քաղաքաշինության բնագավառի մի շարք նորմատիվ ակտեր:

Նշված բողոքաբերները հիմնավորել են հետևյալ փաստարկներով.

Ըստ բողոքաբերների՝ 1961 թվականին Հայցվորի և Պատասխանողի հայրը՝ Ջալալ Ավետիսյանը, կառուցել է բնակելի տուն Մարտունի քաղաքի նախկին Միրզոյան 10 հասցեում: Բնակելի տունը կառուցված էր մեկ ընտանիքի համար և ուներ ընդհանուր ապակեպատ պատշգամբ:

Առաջին ատյանի դատարանի 17.07.2008թ. վճռով բնակելի տունը բաժանվել է Հայցվորի և Պատասխանողի միջև: Դրանից հետո կողմերը փայտյա տախտակներով առանձնացրել են նաև պատշգամբի իրենց բաժինները:

Պատասխանողը՝ իր բաժնեմասում առկա սենյակներից մեկի պայմանները բարելավելու նպատակով, 2018 թվականի հուլիսին, պատշգամբի իր հատվածը՝ առանց որևէ շինթույլտվության, դրսից և ներսից ամբողջությամբ փակել է գիպսակարտոն տեսակի թեթև կոնստրուկցիաներով, իսկ 2019 թվականի ամռանը՝ նախկինում եղած մոտ 2մ լայնությամբ 4 հատ

հնամաշ փայտե լուսամուտները փոխարինել է 90 սմ երկարությամբ և 1 մետր լայնությամբ փայլատ ապակիներով, մետաղապլաստե լուսամուտով:

Ըստ բողոքաբերների՝ Վերաքննիչ դատարանը հաստատված է համարել այնպիսի փաստ, ինչն իրականությանը չի համապատասխանում, քանի որ Պատասխանողն իրականացրել է վերակառուցման աշխատանքներ, այլ ոչ թե պատշգամբի փոխարեն կառուցել պատ, իսկ այնուհետև՝ տեղադրել լուսամուտ:

Դատաքննությամբ հաստատվել է նաև, որ ապակեպատ պատշգամբի փոխարեն պատ երբևիցե չի կառուցվել և պատուհան տեղադրվել:

Ըստ բողոքաբերների՝ նախկին բնակելի տան «շուշաբանդը» կիսելուց հետո, երկու հատվածների միջև տեղադրվել է փայտյա կոնստրուկցիաներով միջնապատ, ինչպես նաև «շուշաբանդի» հարևանությամբ գտնվող հատվածները փայտից էին պատրաստված, ուստի որևէ իմաստ չունի նշել, թե տեղադրված լուսամուտից մինչև Հայցվորին պատկանող ավտոտնակը 6 մետր հեռավորության պահպանված չլինելն օրենսդրության խախտում է. չէ որ այդ երկու բնակելի տները նախկինում հանդիսացել են մեկ միասնական բնակելի տուն: Ավելին, փորձագետի օգտագործած նորմատիվ ակտն ընդունվել է 2014 թվականին և նրա պահանջները վերաբերում են նոր կառուցվող շինություններին:

Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի հաստատած այն փաստին, թե Օգանյան 10 հասցեում գտնվող բնակելի տան թիվ 084070 առ 02.10.2008թ. սեփականության իրավունքի վկայականում նշված շենքի հատակագծում թիվ 4 մակերեսում պատկերված չէ փակ պատշգամբ կամ լուսամուտ, ապա, ըստ բողոքաբերների, դա ընդհանրապես կապ չունի օբյեկտիվ իրականության հետ, քանի որ թե՛ Հայցվորի, և թե՛ Պատասխանողի կադաստրային գործերում առկա ուրվագծերում՝ «շուշաբանդի» վերաբերյալ հատվածներում, հստակ նշված է՝ «պատշգամբ» բառը, որից պետք է եզրակացնել, որ այդ երկու հատվածները կազմում են մեկ ընդհանուր պատշգամբի մաս:

Ըստ բողոքաբերների՝ Վերաքննիչ դատարանը սխալ է թույլ տվել նաև մինչև իրավունքի խախտումը եղած դրությունը վերականգնելու մասին որոշում կայացնելով, քանի որ այդ դեպքում պետք է վերականգնվի Պատասխանողի բաժին «շուշաբանդը», այսինքն՝ պատշգամբը պատված ապակիներով:

Վերոգրյալի հիման վրա բողոքաբերները խնդրել են վճարել բողոքն ընդունել վարույթ, բեկանել Վերաքննիչ դատարանի ԸԲԴ/4260/02/19 քաղաքացիական գործով 2020 թվականի դեկտեմբերի 25-ի որոշումը և օրինական ուժ տալ Առաջին աստիճանի դատարանի 2020 թվականի օգոստոսի 21-ի վճռին կամ գործն ուղարկել Առաջին աստիճանի դատարան՝ նոր քննության:

### **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Մարտունի քաղաքի Օգանյան փողոցի թիվ 8 հասցեով բնակելի տան նկատմամբ 2007 թվականի դեկտեմբերի 12-ին գրանցվել է Հայցվորի սեփականության իրավունքը, ի հավաստումն որի տրամադրվել է թիվ 084549 անշարժ գույքի սեփականության իրավունքի վկայականը.

2) Մարտունի քաղաքի Օգանյան փողոցի թիվ 10 հասցեով բնակելի տան նկատմամբ 2008 թվականի հոկտեմբերի 02-ին գրանցվել է Պատասխանողի սեփականության իրավունքը, ի հավաստումն որի տրամադրվել է թիվ 084070 անշարժ գույքի սեփականության իրավունքի վկայականը.

3) Հայցվորը դիմելով Առաջին աստիճանի դատարան՝ խնդրել է Պատասխանողին պարտավորեցնել կանխել իրավունքը խախտող կամ դրա

խախտման համար վտանգ ստեղծող գործողությունը, այն է՝ փակել Մարտունի քաղաքի Օգանյան 10 հասցեով բնակելի տնից դեպի սեփականության իրավունքով իրեն պատկանող Մարտունի քաղաքի Օգանյան 8 հասցեով բնակելի տան տարածքի ուղղությամբ բացված պատուհանը, ինչով և կվերականգնվի մինչև իրավունքի խախտումը եղած դրությունը.

4) Համաձայն գործում առկա Մարտունու քաղաքապետի թիվ 08/360 առ 11-ը հոկտեմբերի 2019 թվականի գրության. «... տվյալ լուսամուտի տեղը նախկինում եղել է շուշաբանդ, որի շարունակությունը այժմ պահպանվում է հարևան բնակելի տան (Ա.Օգանյան փ. թ.8) ճակատային մասում»: (գ.թ.14).

5) Համաձայն գործում առկա շինարարատեխնիկական թիվ 03713/20 առ 13-ն ապրիլի 2020 թվականի փորձագետի եզրակացության «Հետևություններ» բաժնի՝ վիճելի պատուհանը տեղադրված է ննջասենյակի բնական լուսավորության և օդափոխության համար, սակայն նրա տեղակայման պայմանները չեն համապատասխանում ՀՀՇՆ 21-01-2014 «Շենքերի և շինությունների հրդեհային անվտանգություն» նորմատիվային փաստաթղթի 9-րդ՝ «Շենքերի և շինությունների միջև հակահրդեհային միջոտարածություններ» բաժնի 150-րդ կետի, ինչպես նաև 153-րդ կետի 6-րդ ենթակետի պահանջներին: Միաժամանակ, ըստ փորձագետի՝ Օգանյան թիվ 8 և թիվ 10 բնակելի տները նախկինում հանդիսանում էին մեկ ընդհանուր շինություն և տվյալ վիճելի հատվածում առկա էր փայտյա կոնստրուկցիաներով փակ պատշգամբ (շուշաբանդ), որը վերափոխվել է թեթև կոնստրուկցիաներով պատի՝ տեղադրելով նաև մետաղապլաստե պատուհան, իսկ վերը նշված նորմատիվատեխնիկական փաստաթղթերում ներկայացված պահանջները հիմնականում վերաբերում են նորակառույց շինություններին (գ.թ.62).

6) Ըստ Առաջին ատյանի դատարանի վճռի՝ Մարտունի քաղաքի Օգանյան փողոցի թիվ 10 բնակելի տան սեփականատիրոջ կողմից թեթև կոնստրուկցիաներով պատում մետաղապլաստե պատուհան տեղադրելը հանդիսանում է բարեկարգման աշխատանք, և դրանով չեն խախտվել գործող օրենսդրության պահանջներն ու Հայցվորի իրավունքները.

7) Որպես Հայցվորի իրավունքների խախտում Վերաքննիչ դատարանը դիտարկել է Պատասխանողի բնակելի տան պատուհանի և Հայցվորի ավտոտնակի միջև անհրաժեշտ 6 (վեց) մետր հեռավորության պահպանված չլինելը, ինչն իր հերթին խոչընդոտ է հանդիսանում Հայցվորի կողմից իր գույքն անվտանգ օգտագործելու հարցում.

8) Ըստ Վերաքննիչ դատարանի որոշման՝ Պատասխանողը չի պահպանել նաև շինարարության թույլտվություն պահանջող աշխատանքի իրականացման գործող կանոնակարգումների պահանջները, իսկ նրա կատարած աշխատանքները բարեկարգում համարվել չեն կարող:

#### **4. Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները**

Գերագույն դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված հիմքերի առկայությամբ, այն է՝ Գերագույն դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար և առերևույթ թույլ է տրվել դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա:

ԱՀ Սահմանադրության 10-րդ հոդվածի 1-ին մասը հռչակում է. Արցախի Հանրապետությունում ճանաչվում և հավասարապես պաշտպանվում են սեփականության բոլոր ձևերը:

ԱՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի օրինական հիմքով ձեռք բերած սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունք:

ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 14-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիական իրավունքների պաշտպանությունն իրականացվում է իրավունքը խախտող կամ դրա խախտման համար վտանգ ստեղծող գործողությունները կանխելով:

Նույն օրենսգրքի 164-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սեփականության իրավունքը սուբյեկտի՝ օրենքով և այլ իրավական ակտերով ճանաչված ու պահպանվող իրավունքն է՝ իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրեն պատկանող գույքը:

ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 278-րդ հոդվածի համաձայն՝ սեփականատերն իրավունք ունի պահանջել վերացնելու իր իրավունքների ամեն մի խախտում, թեկուզև այդ խախտումները գուցորդված չեն եղել տիրապետումից զրկելու հետ:

Վկայակոչված իրավանքների վերլուծությունից հետևում է, որ սեփականատերն օժտված լինելով սեփականատիրական լիազորություններով՝ իր հայեցողությամբ տիրապետելու, տնօրինելու, օգտագործելու իր սեփականությունը, իրավունք ունի պահանջել վերացնելու իր իրավունքի ամեն մի խախտում, որը կապված է այդ իրավունքների իրականացման հետ: Փաստորեն, ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 278-րդ հոդվածը սեփականատիրոջը պաշտպանություն է տրամադրում նաև տիրապետումից զրկվելու հետ չկապված գործողություններից: Նման հայցը կոչվում է նեգատոր և ուղղված է գույքի օգտագործման ու տիրապետման պաշտպանությանը:

Ինչ վերաբերում է այդ պաշտպանության իրականացման եղանակներին, ապա Գերագույն դատարանն արձանագրում է, որ ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 14-րդ հոդվածը դրանց թվին է դասում մինչև իրավունքի խախտումը եղած դրության վերականգնումն ու իրավունքը խախտող կամ դրա խախտման համար վտանգ ստեղծող գործողությունները կանխելը:

Գերագույն դատարանը՝ ԸԲԴ/1074/02/17 քաղաքացիական գործով 2018 թվականի հոկտեմբերի 23-ին կայացրած որոշմամբ, արդեն իսկ անդրադարձել է նեգատոր հայցի ինստիտուտին և փաստել հետևյալը.

«... նեգատոր հայցը նույնպես սեփականության իրավունքի պաշտպանության գույքային իրավական եղանակ է և ներկայացվում է այն դեպքում, երբ սեփականատերը և երրորդ անձը վեճի առարկա գույքի առնչությամբ միմյանց հետ չեն գտնվում պարտավորական կամ այլ հարաբերական իրավահարաբերություններում:

Նման հայց ներկայացնելու իրավունքն օրենսդիրը վերապահում է ինչպես գույքի սեփականատիրոջը, այնպես էլ՝ տիտղոսակիր տիրապետողին, որոնք տիրապետում են գույքը, սակայն զրկված են գույքից օգտվելու և այն տնօրինելու հնարավորություններից: Որպես պատասխանող հանդես է գալիս այն անձը, որն իր հակաօրինական վարքագծով ստեղծել է խոչընդոտներ, որոնք խանգարում են գույքի սեփականատիրոջը կամ օրինական տիրապետողին՝ բնականոն ձևով իրացնելու իրենց պատկանող իրավունքը:

Նշված մեկնաբանությունների ընդհանրացման արդյունքում Գերագույն դատարանը հանգում է այն եզրակացության, որ նեգատոր հայցի ներկայացման դեպքում միաժամանակ պետք է առկա լինեն հետևյալ երկու պայմանները.

1) հայցվորը հայցի հարուցման պահին պետք է լինի գույքի սեփականատեր կամ այլ օրինական տիրապետող,

2) հայցի հարուցման պահին պետք է առկա լինի երրորդ անձի կողմից թույլ տրված այնպիսի գործողություն կամ անգործություն, որը խոչընդոտի

գույքի սեփականատիրոջը կամ օրինական տիրապետողին օգտագործել և /կամ/ տնօրինել գույքը:

Վերոնշյալ պայմանները, որպես փաստ, ներառվում են նեգատոր հայցով հարուցված գործերի ապացուցման առարկայում: Այդուհանդերձ, դրանք ապացուցման առարկան կազմող միակ փաստերը չեն, ապացուցման է ենթակա նաև երրորդ փաստը, այն է՝ գույքի օգտագործմանը և /կամ/ տիրապետմանը խոչընդոտող գործողության կամ անգործության իրավական, օրինական լինելու փաստը: Հիմք ընդունելով վերոնշյալ վերլուծությունը՝ Գերագույն դատարանը գտնում է, որ նեգատոր հայցերի դեպքում դատավարական բեռը բաշխելիս հայցվորն է կրում գույքի սեփականատերը կամ օրինական տիրապետողը լինելու և այդ գույքի օգտագործմանը և /կամ/ տիրապետմանը խոչընդոտող գործողության կամ անգործության փաստերն ապացուցելու պարտականությունը: Ինչ վերաբերում է երրորդ փաստին՝ գործողությունների կամ անգործության հակաիրավական բնույթին, ապա հայց ներկայացնելու պահին վերջիններիս առնչությամբ գործում է հակաիրավական լինելու կանխավարկածը, քանի դեռ պատասխանողը չի ապացուցել հակառակը: Հետևաբար, նշված փաստի ապացուցման դատավարական բեռը կրում է պատասխանողը»:

Գերագույն դատարանն արձանագրում է, որ վերը նշված դիրքորոշումների կիրառման արդյունքում Վերաքննիչ դատարանը հիմնավորված եզրահանգում է արել սույն գործով ապացուցման առարկայի բաշխման մասին և ամրագրել, որ հայցի հարուցման պահին գույքի տիտղոսակիր լինելու և երրորդ անձի կողմից այդ գույքի տիտղոսակրին իր գույքն օգտագործելու և /կամ/ տիրապետելու խոչընդոտ հանդիսացող գործողություն կատարած կամ անգործություն թույլ տված լինելու փաստերը պետք է ապացուցի Հայցվորը, իսկ այդ գործողության կամ անգործության օրինականությունը՝ Պատասխանողը: Դրան հակառակ, Առաջին ատյանի դատարանն ապացուցման ամբողջ բեռը դրել է Հայցվորի վրա: Միննույն ժամանակ, գործում առկա նույն ապացույցների գնահատմամբ, Հայցվորի տիտղոսակիր լինելու փաստի արձանագրման հարցում որևէ տարակարծություն չունենալով հանդերձ, ստորադաս դատարանները տրամագծորեն հակադիր տեսակետներ են հայտնել Հայցվորի իրավունքների խախտման առկայության և Պատասխանողի կողմից իրականացված գործողության օրինականության վերաբերյալ: Այսպես՝ ըստ Առաջին ատյանի դատարանի՝ Մարտունի քաղաքի Օգանյան փողոցի թիվ 10 բնակելի տան սեփականատիրոջ կողմից թեթև կոնստրուկցիաներով պատում մետաղապլաստե պատուհան տեղադրելը հանդիսանում է բարեկարգման աշխատանք և դրանով չեն խախտվել գործող օրենսդրության պահանջներն ու Հայցվորի իրավունքները: Նշված եզրահանգումը Վերաքննիչ դատարանն անհիմն է համարել և գտել, որ Պատասխանողի բնակելի տան պատուհանի և Հայցվորի ավտոտնակի միջև անհրաժեշտ 6 (վեց) մետր հեռավորության պահպանված չլինելը խոչընդոտ է հանդիսանում Հայցվորի կողմից իր գույքն անվտանգ օտագործելու հարցում: Ըստ Վերաքննիչ դատարանի՝ Պատասխանողը չի պահպանել նաև շինարարության թույլտվություն պահանջող աշխատանքի իրականացման գործող կանոնակարգումների պահանջները, իսկ նրա կատարած աշխատանքները բարեկարգում համարվել չեն կարող:

Գերագույն դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի եզրահանգումները չեն բխում սույն գործով Առաջին ատյանի դատարանի հետազոտած ապացույցներից՝ հետևյալ պատճառաբանությամբ.

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 229-րդ հոդվածի համաձայն.

«1. Վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում:

2. Վերաքննիչ դատարանն իրավունք չունի նոր ապացույց ընդունելու և բողոքը քննելիս հիմնվում է միայն այն ապացույցների վրա, որոնք ներկայացվել են առաջին ատյանի դատարանին: Եթե առաջին ատյանի դատարանում գործի քննության ժամանակ ապացույցը չի ներկայացվել կողմերի կամքից անկախ հանգամանքներով, ապա վերաքննիչ դատարանը բեկանում է գործը և այն ուղարկում առաջին ատյանի դատարան՝ նոր քննության, եթե գտնում է, որ ապացույցն էական նշանակություն ունի գործի լուծման համար:

3. Վերաքննիչ դատարանում բողոքի քննության ժամանակ առաջին ատյանի դատարանում հաստատված փաստերն ընդունվում են որպես հիմք, բացառությամբ այն դեպքի, երբ բողոքում վիճարկվում է այդ փաստը, և վերաքննիչ դատարանը հանգում է այն եզրակացության, որ տվյալ փաստի վերաբերյալ եզրակացության հանգելիս առաջին ատյանի դատարանն ակնհայտ սխալ է թույլ տվել: Նման դեպքերում վերաքննիչ դատարանն իրավունք ունի հաստատված համարելու նոր փաստ կամ հաստատված չհամարելու առաջին ատյանի դատարանի հաստատած փաստը, եթե առաջին ատյանի դատարանի հետազոտած ապացույցների հիման վրա հնարավոր է հանգել նման եզրակացության:

4. Եթե առաջին ատյանի դատարանը հետազոտված ապացույցների հիման վրա դատական ակտում եզրակացության չի հանգել որևէ փաստի վերաբերյալ, ինչը պարտավոր էր անել, ապա վերաքննիչ դատարանն իրավունք ունի հաստատված համարելու նոր փաստ, եթե առաջին ատյանի դատարանի հետազոտած ապացույցների հիման վրա հնարավոր է հանգել նման եզրակացության»:

Նշվածից բխում է, որ Վերաքննիչ դատարանը, վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում ստուգելով Առաջին ատյանի դատարանի ակտի օրինականությունն ու հիմնավորվածությունը, միաժամանակ դատական վերահսկողություն է իրականացնում ստորադաս դատական ատյանի գործունեության նկատմամբ, որը ենթադրում է նաև դատական գործունեության ընթացքում բացահայտված սխալներին և խախտումներին արձագանքելու, դրանք վերացնելու համար անհրաժեշտ իրավական միջոցներ կիրառելու հնարավորությունը:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածը սահմանում է, որ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ, դատարանի համար որևէ ապացույց նախապես հաստատվածի ուժ չունի, բացառությամբ նույն օրենսգրքի 48-րդ հոդվածով նախատեսված դեպքերի:

Գերագույն դատարանն իր նախկինում կայացրած որոշումներում՝ ապացույցների պատշաճ գնահատման համատեքստում, տվել է օրինական, հիմնավորված և պատճառաբանված դատական ակտին առաջադրվող չափորոշիչները:

Այսպես՝ ԸԲԴ/0753/02/14 քաղաքացիական գործով Գերագույն դատարանը՝ 2015 թվականի հունիսի 23-ի որոշմամբ հայտնել է հետևյալ դիրքորոշումը. «... գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերի հաստատված լինելու հարցը դատարանը պարզում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ: Ընդ որում, գործին մասնակցող յուրաքանչյուր անձ իր կողմից նշված փաստերը հիմնավորելու համար պարտավոր է ներկայացնել այդ փաստերը հիմնավորող ապացույցներ: (...) Դատարանը Վճիռը հիմնավորում է միայն դատական նիստում հետազոտված



ապացույցներով: ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 230-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետի համաձայն՝ վերաքննիչ դատարանի որոշման մեջ պետք է նշվեն գործով պարզված և վերաքննիչ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, ինչպես նաև այն օրենքը, ԼՂՀ միջազգային պայմանագրերը և այլ իրավական ակտերը, որոնցով ղեկավարվել է վերաքննիչ դատարանը որոշում կայացնելիս: (...) յուրաքանչյուր դեպքում դատարանը պարտավոր է տալ որոշման թե՛ իրավական և թե՛ փաստական հիմնավորումը: (...) Որոշման իրավական հիմնավորումը կայանում է հաստատված փաստերի և իրավահարաբերությունների նկատմամբ իրավունքի համապատասխան նորմի կամ նորմերի ընտրության և կիրառության մեջ, այն նորմի, որի հիման վրա դատարանը եզրակացություն է անում վիճելի իրավահարաբերության առկայության կամ բացակայության մասին: Որոշման մեջ պետք է ցույց տալ նորմատիվ ակտի այս կամ այն հոդվածը, որում ամրագրված է կիրառման ենթակա նորմը, այն պետք է պատճառաբանվի, թե հատկապես ինչու պետք է կիրառվի հենց այդ նորմը: Որոշման իրավական հիմնավորումը բնութագրում է դատարանի իրավակիրառ գործառնությունը, ընդգծում դատական որոշման օրինականությունը: (...) դատարանը պետք է նշի ոչ միայն այն ապացույցները, որոնց վրա հիմնվել է վիճելի փաստերը հաստատելիս և արդյունքում որոշում կայացնելիս, այլև պետք է պատճառաբանի, թե ինչու է ներկայացված ապացույցը դրվում որոշման հիմքում, կամ՝ մերժվում: Միայն նման հիմնավորումը կարող է վկայել գործի բազմակողմանի հետազոտության մասին: Նշվածից հետևում է, որ Վերաքննիչ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզման հանգելու համար պարտավոր է յուրաքանչյուր ապացույց գնահատել գործում եղած բոլոր ապացույցների համակցությամբ, ինչի արդյունքում միայն հնարավոր կլինի արդյունավետ դատական քննության արդյունքում պարզել գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը»:

Գերագույն դատարանը հարկ է համարում ընդգծել, որ դատական ապացույցման նպատակը գործի իրական հանգամանքների, գործի լուծման համար էական նշանակություն ունեցող իրավաբանական փաստերի առկայության կամ բացակայության հաստատումն է: Ապացույցների հետազոտումը դատական ապացույցների անմիջական ընկալումն է, մեկ ապացույցը մյուս ապացույցների միջոցով ստուգելը, ներկայացված ապացույցների միջև եղած հակասությունները վեր հանելը և վերացնելը, որի արդյունքում դատարանը պետք է գնահատի յուրաքանչյուր ապացույցի վերաբերելիությունը և թույլատրելիությունը և գնահատի ապացույցները՝ արժանահավատության և բավարարության տեսակետից:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 43-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործով ապացույցներ են նույն օրենսգրքով նախատեսված կարգով ձեռք բերված տեղեկությունները, որոնց հիման վրա դատարանը պարզում է գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները հիմնավորող, ինչպես նաև վեճի լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը:

Այդ տեղեկությունները հաստատվում են՝

- 1) գրավոր և իրեղեն ապացույցներով.
- 2) փորձագետների եզրակացություններով.
- 3) վկաների ցուցմունքներով.
- 4) գործին մասնակցող անձանց ցուցմունքներով:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 57-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործի քննության ժամանակ ծագող հատուկ գիտելիքներ պահանջող հարցերի պարզաբանման նպատակով՝ դատարանը

կարող է կողմի (կողմերի) միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ փորձաքննություն նշանակել:

Նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ դատարանը նախազգուշացնում է փորձագետին՝ ակնհայտ կեղծ եզրակացություն տալու համար քրեական պատասխանատվության մասին: Դատարանը փորձագետից ստորագրություն է վերցնում նախազգուշացման մասին, որը կցվում է դատական նիստի արձանագրությանը:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փորձագետի եզրակացությունը կազմվում է գրավոր: Այն պետք է պարունակի՝

- 1) նշում՝ կիրառված մեթոդների մասին.
- 2) կատարված հետազոտությունների մանրամասն նկարագրությունը.
- 3) հետազոտությունների արդյունքում արված հետևությունները.
- 4) առաջադրված հարցերի հիմնավորված պատասխանները:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե փորձագետը փորձաքննություն կատարելիս պարզում է գործի համար նշանակություն ունեցող այնպիսի հանգամանքներ, որոնց կապակցությամբ նրան հարցեր չեն առաջադրվել, նա իրավունք ունի այդ հանգամանքների վերաբերյալ հետևություններն արտացոլել իր եզրակացությունում:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ փորձագետի եզրակացությունը հետազոտվում է դատական նիստում և գնահատվում մյուս ապացույցների հետ:

Գերագույն դատարանն արձանագրում է, որ փորձագիտական գործունեության նպատակը վարույթն իրականացնող մարմնին որոշակի փաստական տվյալներով ապահովելն է, որոնք որոշակի պահանջների բավարարման դեպքում ճանաչվում են որպես ապացույցներ և դրվում գործով կայացվող այս կամ այն որոշման հիմքում: Այս տեսանկյունից փորձագիտական գործունեությունը սերտորեն կապված է ապացուցման գործընթացի, այն է՝ գործի օրինական, հիմնավորված և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքներ բացահայտելու նպատակով ապացույցներ հավաքելու, ստուգելու և գնահատելու հետ, որն իրականացվում է հատուկ գիտելիքների կիրառմամբ՝ փորձագիտական եզրակացություն տալու միջոցով:

Գերագույն դատարանը, անդրադառնալով ապացույցների զանգվածում ներառված փորձագիտական եզրակացությունների գնահատման խնդրին, անհրաժեշտ է համարում նշել, որ որպես ապացույց վերաբերելի են կոնկրետ գործի լուծման համար նշանակություն ունեցող բացառապես փաստական տվյալները, իսկ եզրակացությունում ներառված իրավական կամ գնահատողական բնույթ ունեցող պնդումները որևէ կանխորոշիչ նշանակություն գործի համար չունեն:

Հետևաբար, սույն գործով դատարանների խնդիրն էր վեր հանել հատուկ մասնագիտական գիտելիքների կիրառմամբ ամրագրված այն փաստական տվյալները, որոնք էական նշանակություն ունեն վեճը լուծելու համար:

Գերագույն դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի դատարանի կողմից նշանակված շինարարատեխնիկական փորձաքննության արդյունքում ձեռք են բերվել հետևյալ փաստական տվյալները՝

ա) Օգանյան թիվ 8 և թիվ 10 բնակելի տները նախկինում հանդիսանում էին մեկ ընդհանուր շինություն,

բ) Օգանյան թիվ 10 բնակելի տան վիճելի հատվածում առկա էր փայտյա կոնստրուկցիաներով փակ պատշգամբ (շուշաբանդ), որի շարունակությունը պահպանված է նաև Օգանյան թիվ 8 հասցեում գտնվող բնակելի տան՝ վիճելի հատվածի շարունակությունը հանդիսացող մասում,

գ) Պատասխանողը «շուշաբանդ»-ը վերափոխել է թեթև կոնստրուկցիաներով պատի՝ տեղադրելով նաև մետաղապլաստե պատուհան: Նշվածները գնահատելով, Վերաքննիչ դատարանն եզրահանգել է, որ առկա է Հայցվորի իրավունքների խախտում, քանի որ Պատասխանողի բնակելի տան պատուհանի և Հայցվորի ավտոտնակի միջև անհրաժեշտ (ըստ Վերաքննիչ դատարանի՝ 6 (վեց) մետր) հեռավորությունը պահպանված չէ:

Վերաքննիչ դատարանը, վկայակոչելով «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ԼՂՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը (որի համաձայն՝ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում գրառված տեղեկությունները համարվում են ճիշտ և ունեն ապացուցողական ուժ այնքան ժամանակ, քանի դեռ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով դրանք չեն ճանաչվել ուժը կորցրած, անվավեր կամ առոչինչ) և արձանագրելով այն փաստը, որ Մարտունի քաղաքի Օզանյան 10 հասցեում գտնվող բնակելի տան թիվ 0840070 առ 02.10.2008թ. սեփականության իրավունքի վկայականում պատկերված շենքի հատակագծում թիվ 4 մակերեսում պատկերված չէ փակ պատշգամբ կամ լուսամուտ, եզրահանգել է, որ անկախ այն հանգամանքից, թե նախկինում Հայցվորին և Պատասխանողին սեփականության իրավունքով պատկանող բնակելի տները հանդիսանում էին մեկ անշարժ գույք և թիվ 084070 առ 02.10.2008թ. սեփականության իրավունքի վկայականում նշված թիվ 4 մակերեսի արտաքին պատի և լուսամուտի տեղը փակ պատշգամբ էր, միննույն է Պատասխանողի սեփականության իրավունքի գրանցման պահին այդ մակերեսում չի գրանցվել փակ պատշգամբ կամ լուսամուտ, ուստի Պատասխանողի կողմից նշված գույքը կարող էր օգտագործվել գրանցմանը համապատասխան:

Գերագույն դատարանն իրավաչափ համարելով Վերաքննիչ դատարանի հետևությունն իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում գրառված տեղեկությունների հավաստիության կանխավարկածի վերաբերյալ՝ իր անհամաձայնությունն է հայտնում սեփականության իրավունքի վկայականում պատկերված շենքի հատակագծում ներառված արտաքին պատի նկարագիրը ևս այդպիսի տեղեկությունների թվին դասելու առումով:

Այսպես, «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ԼՂՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

1. Գրանցման մատյանը թղթային և (կամ) էլեկտրոնային փաստաթուղթ է, որում պետական գրանցման իրականացման նպատակով գրառվում են անշարժ գույքի միավորի վերաբերյալ տեղեկությունների հետևյալ համախմբերը՝

1) անշարժ գույքի միավորը նույնականացնող տեղեկություններ, որոնք ընդգրկում են հողամասի, շինությունների կադաստրային ծածկագրերը, մակերեսները, հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը կամ հողատեսքը, շինությունների նպատակային նշանակությունը, անշարժ գույքի միավորի հասցեն (բացառությամբ գյուղատնտեսական նշանակության հողամասերի):

2) անշարժ գույքի միավորի կամ դրա որևէ մասի նկատմամբ իրավունքների գրանցման վերաբերյալ տեղեկություններ, որոնք ընդգրկում են գրանցվող իրավունքները, իրավատիրոջ անունը (անվանումը), իրավատիրոջ նույնականացման համար անհրաժեշտ այլ տվյալները, ինչպես նաև պետական գրանցման համար հիմք հանդիսացած փաստաթղթերի ցանկը:

3) սահմանափակումների և նախնական նշման վերաբերյալ տեղեկություններ, որոնք ընդգրկում են՝

ա. սահմանափակման դեպքում՝ գրանցվող սահմանափակման տեսակը և բնույթը, առկայության դեպքում՝ ժամկետը, կիրառողը, սահմանափակման

պետական գրանցման համար հիմք հանդիսացած փաստաթղթի անվանումը և այլ վավերապայմաններ,

բ. նախնական նշման դեպքում՝ անշարժ գույքի միավորի կամ դրա մասի վերաբերյալ իրավունքի տեսակի մասին տեղեկություններ, իրավատիրոջ տվյալները, որի օգտին կատարվում է իրավունքի վերաբերյալ նախնական նշումը:

Կառուցվող բազմաբնակարան կամ ստորաբաժանված շենքի դեպքում նախնական նշման օբյեկտ կարող է լինել շենքի ճարտարապետաշինարարական նախագծով նախատեսված առանձնացված միավորը (բնակարանը, ոչ բնակելի տարածքը):

4) լրացուցիչ տեղեկություններ, որոնք ընդգրկում են իրավունքի կամ սահմանափակման գրանցմանը վերաբերող այլ անհրաժեշտ տվյալներ:

Գերագույն դատարանը փաստում է, որ օրենսդիրը գրանցման մատյանում անշարժ գույքի միավորի նույնականացնող տեղեկությունների ցանկում անշարժ գույքի հատակագիծը չի նախատեսել: Հետևաբար, Պատասխանողի 084070 առ 02.10.2008թ. սեփականության իրավունքի վկայականում արտացոլված թիվ 4 մակերեսում պատշգամբի վերաբերյալ նշումի բացակայությունը որևէ կերպ չի կարող հիմք հանդիսանալ 2008 թվականի հոկտեմբերի 02-ի դրությամբ վեճի առարկա հանդիսացող լուսամուտը կրող շինության հատվածը որպես արտաքին՝ առանց լուսամուտների պատ հանդիսացած լինելու վերաբերյալ աներկբա եզրահանգում անելու համար:

Գերագույն դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանի վերը նշված եզրահանգումը ոչ թե բխում է փորձագետի եզրակացությամբ հաստատված փաստական տվյալներից, այլ իր հիմքում ունի եզրակացության «Հետևություններ» մասի հետևյալ ձևակերպումը. «... տվյալ պատուհանի տեղակայման պայմանները չեն համապատասխանում ՀՀՇՆ 21-01-2014 «Շենքերի և շինությունների միջև հակահրդեհային տարածություններ» բաժնի 150. Կետի, ինչպես նաև 152 կետի 6-րդ ի պահանջները...»:

Գերագույն դատարանն անհրաժեշտ է գտնում արձանագրել, որ փորձագետի կողմից վկայակոչված իրավական նորմերը զետեղված են ՀՀ քաղաքաշինության նախարարի 2014 թվականի մարտի 17-ի N 78-Ն՝ ՀՀ ՀՀՇՆ 21-01-2014 «Շենքերի և շինությունների հրդեհային անվտանգություն» շինարարական նորմերը հաստատելու և ՀՀ քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի N 82 հրամանում փոփոխություն կատարելու մասին, հրամանում:

Հրամանով հաստատված ՀՀՇՆ 21-01-2014 «Շենքերի և շինությունների հրդեհային անվտանգություն» շինարարական նորմերի (այսուհետ՝ Նորմեր) 150-րդ կետի համաձայն՝ բնակելի, հասարակական և արդյունաբերական կազմակերպությունների օժանդակ շենքերի միջև հակահրդեհային միջտարածություններն ընդունվում են ըստ նույն նորմերի 8-րդ աղյուսակի:

Վերջինս հակահրդեհային միջտարածությունները սահմանել է հիմք ընդունելով շենքերի հրակայունության աստիճանը՝ վեցից տասնհինգ մետրի միջակայքում:

Նորմերի 152-րդ կետի համաձայն՝ անհրաժեշտ է շենքերի միջև հակահրդեհային միջտարածություններ նախատեսել.

1) կախված շենքերի հրդեհային վտանգավորության աստիճանից և հրդեհապայթյունավտանգավորության կարգից,

2) շենքերի և շինությունների միջև հակահրդեհային միջտարածությունը պետք է ընդունել շենքերի և շինությունների արտաքին պատերի կամ այլ կոնստրուկցիաների միջև: Երբ շենքերի, շինությունների վրա առկա են այրվող նյութերից պատրաստված, մեկ մետրից ավելի դուրս ցցված

կոնստրուկցիաներ, ապա այդ միջտարածությունը պետք է ընդունել այդ կոնստրուկցիաների միջև:

Ինչպես հեշտությամբ կարելի է համոզվել նշված կարգավորումների բովանդակությունից, հակահրդեհային միջտարածությունները դիտարկվում են միայն շենքերի և շինությունների միջև:

Նշվածներից բխում է, որ փորձագետի կողմից արձանագրված չպահպանված հակահրդեհային միջտարածությունը կարող է վերաբերել Հայցվորին պատկանող ավտոտնակի և Պատասխանողին պատկանող բնակելի տան ամբողջ արտաքին պատի միջև ընդգրկված տարածությանը: Այսինքն, հակահրդեհային կանոնների խախտումով կատարված կառույց կարող է դիտարկվել ոչ թե պատուհանի տեղադրումն ինքնին, այլ՝ ամբողջ պատի վերակառուցումը: Նման պայմաններում, եթե նույնիսկ տեսականորեն ընդունենք, որ Պատասխանողը 2018 թվականին գոյություն ունեցող «պատ»-ի մեջ պատուհան է բացել, ապա Վերաքննիչ դատարանի եզրահանգումն այն մասին, թե անհրաժեշտ է վերականգնել նախկին դրությունն ու տվյալ պատը թողնել առանց լուսամուտ, որևէ կերպ չի վերացնում հենց նույն Վերաքննիչ դատարանի կողմից արձանագրված Հայցվորի՝ իր գույքն անվտանգ օգտագործելու իրավունքի խախտումը, քանի որ հակահրդեհային միջտարածության փորձագետի արձանագրած խախտումը կշարունակի առկա լինել: Ավելին, այդ «խախտումը» գոյություն ունեւ նաև նախկին «շուշաբանդ»-ի պայմաններում:

Գերագույն դատարանն անհրաժեշտ է գտնում արձանագրել, որ հակահրդեհային անվտանգության կանոնները որևէ կախման մեջ դրված չեն անշարժ գույքի տիտղոսից և, ըստ այդմ՝ սեփականության իրավունքի փոփոխության պարագայում նորից չեն ծագում: Հակառակ պարագայում գործ կունենանք իրավական անհեթեթության հետ, երբ, օրինակ՝ բնակելի տան ընդհանուր սեփականության իրավունքում իր բաժնի բնեղենով առանձնացում ստացած համասեփականատերն իրավունք կունենար նեգատոր հայց ներկայացնել ընդդեմ նույն բնակելի տան մյուս համասեփականատերերի՝ պահանջելով քանդել նրանց սենյակները, քանի որ դրանք կառուցված չեն իր սեփականությունը հանդիսացող սենյակից հակահրդեհային կանոններով նախատեսված հեռավորության վրա:

Հաշվի առնելով փորձագետի եզրակացությամբ հաստատված փաստական տվյալները, Գերագույն դատարանն արձանագրում է, որ նախկինում մեկ ընդհանուր շինություն հանդիսացած և 2007 թվականին դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով Հայցվորի և Պատասխանողի միջև բնեղենով առանձնացված բնակելի տներն ունեցել են մեկ ընդհանուր փակ ապակեպատ պատշգամբ՝ «շուշաբանդ»: Պատասխանողը հետագայում իր բաժնեմասում առկա «շուշաբանդ»-ի հատվածում իրականացրել է աշխատանքներ, որի արդյունքում, սակայն, տվյալ հատվածի և ներկայումս Հայցվորին պատկանող ավտոտնակի միջև առկա հեռավորությունը որևէ փոփոխության չի ենթարկվել: Հետևաբար, Նորմերով նախատեսված հակահրդեհային միջտարածության նվազագույն հեռավորության պահպանման կանոնները Պատասխանողի բնակելի տան և Հայցվորի ավտոտնակի միջև առկա փաստացի հեռավորության գնահատման հարցում կիրառելի չեն:

Հետևաբար, Առաջին ատյանի դատարանի պատճառաբանությունը՝ սույն քաղաքացիական գործով քննարկվող իրավահարաբերությունների նկատմամբ Նորմերը կիրառելի չլինելու վերաբերյալ, հիմնավորված են:

Գերագույն դատարանն իր անհամաձայնությունն է հայտնում նաև Պատասխանողի կողմից լուսամուտ տեղադրած լինելու գործողության օրինականության վերաբերյալ Վերաքննիչ դատարանի եզրահանգմանը: Այսպես, ըստ Վերաքննիչ դատարանի՝ Պատասխանողի կողմից արտաքին

պատի վրա լուսամուտի տեղադրումը չի կարող համարվել շինարարական թույլտվություն չպահանջող բարեկարգման աշխատանք: Նման եզրահանգման համար իրավական հենք է հանդիսացել ԼՂՀ կառավարության 2004 թվականի հոկտեմբերի 26-ի թիվ 370՝ որոշման հավելվածով սահմանված կարգի 4-րդ կետն ու ԼՂՀ քաղաքաշինության նախարարի 2005 թվականի ապրիլի 04-ի թիվ 27-Ա հրամանի հավելված 3-ը: Կիրառված նորմատիվ ենթաօրենսդրական ակտերի առումով որևէ առարկություն չունենալով հանդերձ, Գերագույն դատարանը գտնում է, որ դրանցով, ընդհակառակը, հիմնավորվում է, որ Պատասխանողի իրականացրած գործողությունը որևէ շինարարական թույլտվություն չի պահանջում:

ԼՂՀ կառավարության 2004 թվականի հոկտեմբերի 26-ի թիվ 370 Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում շինարարության թույլտվության և քանդման թույլտվության կարգը հաստատելու մասին որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի համաձայն՝ առանց շինարարության թույլտվության կարող են կատարվել միայն ընթացիկ նորոգման և ներքին հարդարման, ինչպես նաև բարեկարգման աշխատանքներ, եթե դրանք չեն խոչընդոտում անշարժ գույքի նպատակային օգտագործմանը և /կամ/ չեն հակասում սահմանված սերվիսուտներին:

Նույն կարգով ամրագրված ընթացիկ նորոգման և բարեկարգման աշխատանքների բնորոշումը, դասակարգումը և դրանց իրականացման ընթացակարգերը սահմանում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արտադրական ենթակառուցվածքների զարգացման և քաղաքաշինության նախարարությունը:

Ինչպես բխում է նշված կարգավորումից՝ առանց շինարարական թույլտվության կարելի է իրականացնել երեք խումբ՝ համապատասխան ենթաօրենսդրական ակտով նախատեսված աշխատանքներ: Այն է՝ ընթացիկ նորոգում, ներքին հարդարում և բարեկարգում: Վերջիններիս սպառիչ ցանկը տրված է ԼՂՀ քաղաքաշինության նախարարի 2005 թվականի ապրիլի 04-ի թիվ 27-Ա որոշմամբ հաստատված «Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում շենքերի և շինությունների ընթացիկ նորոգման, ներքին հարդարման և բարեկարգման աշխատանքների բնորոշման, դասակարգման և դրանց իրականացման» կարգի թվով 3 հավելվածներում:

Գերագույն դատարանն արձանագրում է, որ նշված կարգի թիվ 1 հավելվածով նախատեսված են «Շինարարության թույլտվություն չպահանջվող շենքերի և կառուցվածքների ընթացիկ նորոգման աշխատանքները», որոնց մեջ, Ա.«Շենքեր» մասի, VI «Լուսամուտներ, դռներ ու դարպասներ» կետի, 10-րդ ենթակետում ներառված է հետևյալը՝ «\*Արտաքին լուսամուտների և արտաքին դռների փոխում, փոխարինում»:

Նույն կարգի 9-րդ կետի համաձայն՝ շենքերի արտաքին տեսքը փոփոխող ընթացիկ նորոգման և ընդհանուր օգտագործման տարածքներում բարեկարգման՝ նույն կարգին կից հավելվածներում աստղանիշով նշված աշխատանքների համար կարող է կազմվել էսքիզային նախագիծ և համաձայնեցվել համայնքի ղեկավարի /Ստեփանակերտում՝ Ստեփանակերտի քաղաքապետի/ հետ:

Գերագույն դատարանն արձանագրում է, որ գործի նյութերից միանշանակ բխում է այն փաստը, որ Պատասխանողը՝ ի սկզբանե գոյություն ունեցող ապակեպատ պատշգամբի լուսամուտներով պատված հատվածը փոխարինել է մեկ լուսամուտով: Հետևաբար, նրա կողմից իրականացված աշխատանքը դասվում է շենքի արտաքին տեսքը փոփոխող ընթացիկ նորոգման աշխատանքների թվին, իսկ նշվածներից բխում է, որ այն համարվում է շինարարության թույլտվություն չպահանջող ընթացիկ նորոգման աշխատանք, որի համար սահմանված է էսքիզային նախագծի կազմման և համայնքի ղեկավարի հետ համաձայնեցման հայեցողական

պահանջ: Հետևաբար, Առաջին աստիճանի դատարանի եզրահանգումն այս մասով նույնպես իրավաչափ է:

Ամփոփելով, Գերագույն դատարանը գտնում է, որ գործում առկա ապացույցները լիովին բավարար են ներկայացված հայցը մերժելու վերաբերյալ եզրահանգում անելու համար, ուստի սույն գործի շրջանակներում Առաջին աստիճանի դատարանի դատական ակտը մասնակիորեն բեկանելով և փոփոխելով, Վերաքննիչ դատարանը թույլ է տվել դատավարական իրավունքի նորմի խախտում:

Մինևույն ժամանակ, Գերագույն դատարանն անհրաժեշտ է գտնում արձանագրել, որ Առաջին աստիճանի դատարանը, թեև նեգատոր հայցի քննության շրջանակներում սխալ է բաշխել ապացուցման բեռը՝ դրանով իսկ թույլ տալով դատավարական իրավունքի նորմի խախտում, այնուամենայնիվ, կայացրել է ճիշտ ելքով դատական ակտ:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 241-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատավարական իրավունքի նորմերի խախտումը կամ սխալ կիրառումը վճռի բեկանման հիմք է, եթե հանգեցրել է կամ կարող էր հանգեցնել գործի սխալ լուծման: Դատարանի՝ ըստ էության ճիշտ վճիռը չի կարող բեկանվել միայն ձևական նկատառումներով:

Գերագույն դատարանը գտնում է, որ սվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով սահմանված՝ առաջին աստիճանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու՝ Գերագույն դատարանի լիազորությունը:

Համաձայն ԱՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Գերագույն դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է նշված կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձույթները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Գերագույն դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

## **5. Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը դատական ծախսերի բաշխման վերաբերյալ**

Անդրադառնալով դատական ծախսերի հարցին՝ Գերագույն դատարանն արձանագրում է, որ ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 64-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և փորձագետին, վկային կանչելու, ապացույցները դրանց գտնվելու վայրում գննելու, փաստաբանի խելամիտ վարձատրության և գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի համաձայն՝ «1. Դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն: ... 3. Վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք բերելու հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են սույն հոդվածի կանոններին համապատասխան»:

Գերագույն դատարանը, նկատի ունենալով, որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, իսկ ներկայացված հայցը՝ մերժման, գտնում է, որ պետական տուրքից և փաստաբանի խելամիտ վարձատրության գումարներից բաղկացած դատական ծախսերը պետք է կրի Հայցվորը:

Հաշվի առնելով այն փաստը, որ Առաջին աստիճանի դատարանն արդեն իսկ լուծում է տվել իր իրավասությանը վերապահված դատական ծախսերի հարցին, իսկ դատական ակտը թողնվում է օրինական ուժի մեջ, Գերագույն դատարանը լուծում է տալիս միայն վճռաբեկ բողոք ներկայացնելու հետ կապված պետական տուրքի և փաստաբանի խելամիտ վարձատրության հարցին և գտնում, որ այն պետք է բռնագանձել հոգուտ Պատասխանողի: Ընդ որում, վճռաբեկ բողոք կազմելու և Գերագույն դատարանում Պատասխանողի շահերը ներկայացնելու համար փաստաբանին տրամադրված վարձատրությունը՝ 50.000 (հիսուն հազար) ՀՀ դրամի չափով, Գերագույն դատարանը դիտարկում է խելամտության սահմանների ներքո:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և 256-րդ հոդվածի 1-ին մասով, Գերագույն դատարանը

### **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել Արցախի Հանրապետության վերաքննիչ դատարանի 2020 թվականի դեկտեմբերի 25-ի որոշումը և օրինական ուժ տալ Արցախի Հանրապետության ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի 2020 թվականի օգոստոսի 21-ի վճռին:

2. Էդուարդ Զալալի Ավետիսյանից հոգուտ Վալերի Զալալի Ավետիսյանի բռնագանձել 20.000 (քսան հազար) ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար վճարված պետական տուրքի փոխհատուցման և 50.000 (հիսուն հազար) ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դաիլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ**

ստորագրություն  
ստորագրություն  
ստորագրություն  
ստորագրություն  
ստորագրություն

**Ն.ՆԱՐԻՄԱՆՅԱՆ  
Հ.ԱԲՐԱՀԱՄՅԱՆ  
Ա.ԱԲՐԱՀԱՄՅԱՆ  
Գ.ԳՐԻԳՈՐՅԱՆ  
Կ.ՂԱՐԱՅԱՆ**